Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. նոյեմբերի 29-ին և դեկտեմբերի 7-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական հանձնաժողովի միջև «ԵՄ-ն քաղաքացիների համար՝ Հայաստանում ժողովրդավարության ամրապնդում» (Հատուկ պայմաններ) ֆինանսավորման համաձայնագրի անգլերեն ստորագրված տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարություն

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Եվրոպական հանձնաժողովը, **այսուհետ՝ Հանձնաժողով**, ի դեմս Եվրոպական Միության, այսուհետ՝ **ԵՄ**,

մի կողմից, եւ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, **այսուհետ՝ Գործընկեր**, ի դեմս Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության,

մյուս կողմից,

համաձայնեցին հետեւյալի վերաբերյալ.

Հոդված 1. Գործողության բնույթը

1.1. ԵՄ-ն համաձայնում է ֆինանսավորել և Գործընկերը համաձայնում է ընդունել այդ ֆինանսավորումը՝ հետեւյալ գործողության մասով՝

«ԵՄ-ն քաղաքացիների համար»՝ «Հայաստանում ժողովրդավարության ամրապնդում»

CRIS համար՝ 2018/041-608

Սույն գործողությունը ֆինանսավորվում է ԵՄ բյուջեից՝ հիմնական ակտ հանդիսացող Եվրոպական հարեւանության գործիքի ներքո:

1.2. Սույն գործողության գնահատված ընդհանուր արժեքը կազմում է 8,04 մլն եվրո և սույն գործողության մասով ԵՄ օժանդակության առավելագույն գումարի չափը 7,5 մլն եվրո է:

1.3. Գործընկերը չի համաֆինանսավորում գործողությունը: Գործողության կամընտիր բաղադրիչը համաֆինանսավորվում է միաժամանակ Միացյալ Թագավորության, Գերմանիայի, Շվեդիայի: ԵՄ ֆինանսական օժանդակության բացվածքը ներկայացված է I Հավելվածում (Տեխնիկական եւ վարչական դրույթներ):

Հոդված 2. Կատարման ժամկետը

2.1. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի կատարման ժամկետը, ինչպես սահմանված է II Հավելվածի (Ընդհանուր պայմաններ) 15-րդ հոդվածով, սկսվում է սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից եւ ավարտվում այդ ամսաթվից 84 ամիս անց:

2.2. Գործառնական իրականացման ժամանակահատվածի տեւողությունը սահմանված է 60 ամիս:

2.3. Ավարտական ժամանակահատվածի տեւողությունը սահմանված է 24 ամիս:

Հոդված 3. Հասցեները

Ֆինանսավորման համաձայնագրի իրականացմանը վերաբերող բոլոր հաղորդակցությունները պետք է լինեն գրավոր, պարունակեն հստակ հղում սույն Հատուկ պայմանների 1.1 հոդվածով սահմանված այս գործողությանը եւ ուղարկվեն հետեւյալ հասցեներով՝

ա) **Հանձնաժողովի դեպքում՝**

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Ֆրիկի 21,

0002 ք. Երեւան,

Հայաստանի Հանրապետություն

Էլ. փոստ՝ Delegation-Armenia@eeas.europa.eu

բ) **Գործընկերոջ դեպքում՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար

Մ. Մկրտչյան 5

0010 ք. Երեւան, Հայաստան

Էլ. հասցե՝ secretariat@mineconomy.am Հեռ.՝ +374 11 59-71-10

Հոդված 4. ԽՊԵԳ-ի կոնտակտային մարմին

Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ) ընթացիկ գործունեությանն աջակցելու նպատակով ԽՊԵԳ-ի հետ անմիջականորեն համագործակցելու համար համապատասխան լիազորություններ ունեցող՝ Գործընկերոջ համակարգողն է՝

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Մարշալ Բաղրամյան 19,

0019 ք. Երեւան, Հայաստանի Հանրապետություն

Էլ. փոստ՝ intrel@armsai.am

Հոդված 5. Հավելվածները

5.1. Սույն Ֆինանսավորման համաձայնագիրը բաղկացած է՝

ա) սույն Հատուկ պայմաններից.

բ) I Հավելվածից՝ Տեխնիկական եւ վարչական դրույթներ, որոնցում մանրամասնորեն ներկայացված են սույն գործողության նպատակները, ակնկալվող արդյունքները, աշխատանքները, բյուջեի կատարման մասով առաջադրված խնդիրների նկարագրությունը եւ բյուջեն.

գ) II Հավելվածից՝ Ընդհանուր պայմաններ.

դ) III Հավելվածից՝ Հաշվետվության ձեւանմուշ, որը կիրառելի չէ սույն Ֆինանսավորման համաձայնագրի համար եւ չի ներառվում դրանում.

ե) IV Հավելվածից՝ Կառավարման հայտարարագրի ձեւանմուշ, որը կիրառելի չէ սույն Ֆինանսավորման համաձայնագրի համար եւ չի ներառվում դրանում:

5.2. Մի կողմից՝ Հավելվածների դրույթների, իսկ մյուս կողմից՝ սույն Հատուկ պայմանների դրույթների միջեւ հակասության դեպքում կիրառվում են սույն Հատուկ պայմանների դրույթները: Մի կողմից՝ I Հավելվածի (Տեխնիկական եւ վարչական դրույթներ) դրույթների եւ մյուս կողմից՝ II Հավելվածի (Ընդհանուր դրույթներ) դրույթների միջեւ հակասության դեպքում կիրառվում են II Հավելվածի դրույթները:

Հոդված 6. II Հավելվածից (Ընդհանուր պայմաններ) շեղվող կամ այն լրացնող դրույթները

Կիրառելի չէ:

Հոդված 7. Ուժի մեջ մտնելը

Սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսաթվից, երբ Հանձնաժողովը Գործընկերոջ կողմից ստանում է դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը Գործընկերոջ կողմից կատարելը հաստատելու մասին ծանուցում: Հանձնաժողովը Գործընկերոջը

հայտնում է այդ ծանուցումը ստանալու ամսաթիվը: Սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ չի մտնում, եթե մինչեւ 2019 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը նման ծանուցում չի ստանում:

Կատարված է երկու բնօրինակից. մեկ օրինակը հանձնվում է Հանձնաժողովին, մեկ օրինակը՝ Գործընկերոջը:

Գործընկերոջ կողմից՝	Հանձնաժողովի կողմից՝
Տիգրան Խաչատրյան	Լորենս Մերեդիթ
Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի պաշտոնակատար	Հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության արեւելյան հարեւանության հարցերով տնօրեն, «C» բաժին
Հայաստանի Հանրապետություն	Եվրոպական հանձնաժողով
Ստորագրություն _____	Ստորագրություն _____
վայրն ու ամսաթիվը՝ _____	վայրն ու ամսաթիվը՝_____

ԹԻՎ ԵՀԳ/2018/041-608 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ I ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ (ՏՎԴ-ՆԵՐ)

1. Անվանում/ հիմնական ակտ/ CRIS համար	**ԵՄ-ն քաղաքացիների համար՝ Հայաստանում ժողովրդավարության ամրապնդում** 2018/041-608, ֆինանսավորվում է Եվրոպական հարեւանության գործիքի շրջանակներում	
2. Գոտին, հօգուտ որի իրականացվում է Գործողությունը /վայրը	Արեւելյան հարեւանություն, Հայաստան Գործողությունը կատարվելու է հետեւյալ վայրում՝ Հայաստան	
3. Ծրագրային փաստաթուղթ	Հայաստանին տրամադրվող ԵՄ աջակցության 2017-2020 թթ. միասնական աջակցության շրջանակ	
4. Հիմնական բնագավառ/ թեմատիկ ոլորտ	Ընտրություններ Մարդու իրավունքներ Լրատվության միջոցների զարգացում Անցումային կառավարում եւ քաղաքացիների մասնակցություն Կայուն զարգացման նպատակներ	Զարգացման օգնություն՝ ԱՅՈ
5. Տրամադրվող գումարները	Ընդհանուր գնահատված արժեքը՝ **8 040 000 եվրո** ԵՄ բյուջետային օժանդակության ընդհանուր գումարը՝ **7 500 000 եվրո** Սույն գործողությունը կարող է համաֆինանսավորվել հնարավոր դրամաշնորհների շահառուների կողմից՝ 540 000 եվրո նախանշված գումարի չափով: Հայաստանի կառավարությունը չի համաֆինանսավորում ծրագիրը գույքային եւ ֆինանսական օժանդակության մասով:	
6. Օգնության մեթոդը (մեթոդները) եւ իրականացման մեթոդը (մեթոդները)	Ծրագրի մեթոդները Ուղղակի կառավարում - Դրամաշնորհներ՝ հայտերի ներկայացման հրավեր - Ծառայությունների ձեռքբերում Անուղղակի կառավարում - ՄԱԶԾ-ի հետ (Ընտրությունների համատեղ ֆինանսավորման ֆոնդ) - ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ (այդ թվում՝ ՄԱԶԾ-ի եւ ՄԱԿԲՀ-ի կողմից իրականացված գործողությունները)	

7ա) ԶԱԿ ծածկագրերը	**150՝ Կառավարությունը եւ քաղաքացիական հասարակությունը** 15150՝ Ժողովրդավարական մասնակցություն եւ քաղաքացիական հասարակություն. Ընտրություններ (15151), Մարդու իրավունքներ (15160) եւ Լրատվության միջոցներ եւ տեղեկությունների ազատ հոսք (15153) **160՝ Այլ սոցիալական ենթակառուցվածքներ եւ ծառայություններ** 16010՝ Սոցիալական/սոցիալական ապահովության ծառայություններ 16015՝ Սոցիալական ծառայություններ (այդ թվում՝ երիտասարդների, կանանց եւ երեխաների զարգացում)
բ) Մատուցման հիմնական ուղին	41000՝ Միավորված ազգերի կազմակերպության գործակալություն, հիմնադրամ կամ հանձնաժողով (ՄԱԿ) 21000՝ Միջազգային ՀԿ

8. Ցուցիչները (վերցված CRIS համակարգի ԶԱԿ ձեւից)

Ընդհանուր քաղաքականության նպատակը	**Ոչ թիրախային**	**Կարեւոր նպատակ**	**Հիմնական նպատակ**
Մասնակցության ակտիվացում/արդյունավետ կառավարում	☐	☐	x
Աջակցություն շրջակա միջավայրի պահպանմանը	x	☐	☐
Գենդերային հավասարություն (այդ թվում՝ զարգացման ծրագրերում կանանց ներգրավվածությունը)	☐	x	☐
Առեւտրի զարգացում	x	☐	☐
Վերարտադրողական, մոր, նորածնի եւ երեխայի առողջություն	x	☐	☐
Ռիոյի կոնվենցիայի ցուցիչները	**Ոչ թիրախային**	**Կարեւոր նպատակ**	**Հիմնական նպատակ**
Կենսաբազմազանություն	x	☐	☐
Պայքար անապատացման դեմ	x	☐	☐
Կլիմայական փոփոխությունների մեղմացում	x	☐	☐
Հարմարեցում կլիմայական փոփոխություններին	x	☐	☐

9. Գլոբալ հանրային բարիքներ եւ մարտահրավերներ (ԳՀԲՄ). թեմատիկ լավագույն նմուշները	Մարդկային զարգացում, իրավունքների վրա հիմնված մոտեցում, ներառյալ՝ արժանապատիվ աշխատանքը, զբաղվածության եւ կարողությունների զարգացման հնարավորություններ, սոցիալական արդարադատություն եւ մշակույթ, անհավասարության նվազեցում, ներառական կրթության խթանում, աջակցություն մարգինալացված եւ մեկուսացված խմբերի ու անհատների սոցիալական եւ տնտեսական ներառման հարցում: Կանանց իրավազորում, գենդերային հավասարություն եւ երեխաների իրավունքների պաշտպանություն:

10. Կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ-ներ)	**Հիմնական ԿԶՆ-ներ՝** - ԿԶՆ 5 «Հասնել գենդերային հավասարության եւ իրավազորել բոլոր կանանց եւ աղջիկներին» - ԿԶՆ 16 «Խթանել խաղաղ եւ ներառական հասարակության կայուն զարգացումը, բոլորի համար ապահովել արդարադատության մատչելիություն եւ բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու եւ ներառական հաստատություններ» **Երկրորդական ԿԶՆ-ներ՝** - ԿԶՆ 1 «Ամենուրեք վերացնել աղքատության բոլոր ձեւերը» - ԿԶՆ 4 «Ապահովել ներառական եւ հավասար որակյալ կրթություն, ինչպես նաեւ բոլորի համար ընդլայնել հարատեւ կրթության հնարավորությունները» - ԿԶՆ 10 «Կրճատել անհավասարությունը երկրների ներսում եւ դրանց միջեւ»

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

2018 թվականի ապրիլ եւ մայիս ամիսներին Հայաստանի՝ տարբեր տարիքի մեծ թվով քաղաքացիներ զանգվածային խաղաղ ցույցերի միջոցով պահանջում էին ժողովրդական կառավարման սկզբունքին ավելի մեծ նվիրվածություն, ինչն անսպասելիորեն հանգեցրեց իշխանափոխության: 2018 թվականի մայիսին նշանակված անցումային կառավարությունը հրապարակել է Կառավարման նոր ծրագիր, որի առաջնային նպատակն Ազգային ժողովի վաղ ընտրություններ կազմակերպելը եւ ժողովրդավարության, քաղաքացիների նկատմամբ թափանցիկության եւ հաշվետվողականության վրա հիմնված բարեփոխումների օրակարգի համար ուղի հարթելն է:

Ի պատասխան քաղաքական փոփոխություններին՝ Գործողության մեջ հատուկ ուշադրություն կդարձվի Հայաստանում ժողովրդավարության մակարդակի բարձրացմանը՝ քաղաքական կյանքում քաղաքացիների եւ քաղաքացիական հասարակության մասնակցության ամրապնդման, կառավարության հաշվետվողականության եւ թափանցիկության միջոցով: Գործողությունը բաղկացած է երկու բաղադրիչներից՝

«Կառավարության նկատմամբ վստահության բարձրացում» առաջին բաղադրիչը հիմնականում կաջակցի Ազգային ժողովի ընտրությունների վստահելիությունը եւ

թափանցիկությունն ապահովելու հարցում՝ մասնակցային կառավարման համար ավելի բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցով՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարզերին, ինչպես նաեւ ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար պատասխանատու անձանց վերապատրաստման եւ ընտրողների կենսաչափական տվյալների նույնականացման գործընթացն ընդլայնելու միջոցով: Բաց կառավարման նախաձեռնություններին աջակցելու միջոցով կբարելավվեն բաց կառավարումը եւ քաղաքացիական հասարակության ավելի լայն շրջանակի մասնակցությունը:

«Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավվածության մակարդակի բարձրացում» երկրորդ բաղադրիչը, որի հիմնական նպատակն է ընդլայնել մասնակցային ժողովրդավարության ընկալումը եւ որպես ակտիվ քաղաքացի ներգրավելու գործիքները, հնարավորություն կտա հայերին պահանջելու ավելի բաց գործելաոճ եւ հաշվետվողականություն ազգային եւ տեղական մակարդակներում, ինչպես նաեւ նրանց կաջակցի Հայաստանի ապագայի համար իրենց ձգտումների մասին բարձրաձայնելու հարցում: Երկրորդ բաղադրիչի շրջանակում իրականացվող գործողություններով կապահովվի, որ քաղաքականության մշակման եւ բարեփոխումների իրականացման գործընթացում քաղաքացիական հասարակության հատուկ գիտելիքները փոխանցվեն կառավարությանը:

Բացի այդ, այս բաղադրիչի շրջանակում լրատվական դաշտի նպատակն անկախ եւ մասնագիտական լրատվության միջոցների ամրապնդումն է: Բազմակողմ նախաձեռնություններն ուղղված են լրատվական ոլորտում կարգավորման շրջանակի բարելավումներին, լրագրության մեջ պրոֆեսիոնալիզմի ապահովմանը եւ էթիկայի կանոնների պահպանմանը, ինչպես նաեւ ավելի թիրախային լրագրողական հետազոտություն իրականացնելուն եւ լրատվության միջոցների բովանդակության բազմազանությանն ուղղված գործողություններին: Գենդերային հավասարության խթանմանը եւ կանանց քաղաքացիական մասնակցության ամրապնդմանն ուղղված գործողությունները նախատեսված են տեղական համայնքներում վաղ մանկական տարիքի կրթության եւ խնամքի մատչելիությունն ապահովելու միջոցով: Ծրագիրը հիմնված կլինի Հայաստանում ԺՄԻԵԳ-ի միջոցով ծրագրի իրականացման փորձի վրա, ինչպես նաեւ դրանով կստեղծվի «ԵՄ-ն երիտասարդության համար», Պետական կառավարման ոլորտի բարեփոխումների, Մարդու իրավունքների ոլորտի

բարեփոխումների եւ Արդարադատության ոլորտի բարեփոխումների ծրագրերի շուրջ փոխգործակցություն, այն հիմնված կլինի նախորդ ընտրական աջակցության վրա, ներկայիս եւ հետագա ԺՄԻԵԳ ֆինանսական աջակցության, ինչպես նաեւ «ԵՄ-ն Հայաստանի համար» ծրագրի վրա, որը նույնպես ընդգրկված է 2018 թվականի ՏԳԾ-ում:

Չնայած որոշ գործողություններ կիրականացվեն երկրի մասշտաբով, թիրախային գործողություններ եւ ներդրումներ կլինեն երեք փորձնական տարածաշրջաններում (Շիրակի, Լոռու եւ Տավուշի մարզերում)

1. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1. Նպատակները/արդյունքները եւ հնարավոր տարբերակները

Ընդհանուր նպատակն է Հայաստանում ամրապնդել ժողովրդավարությունը:

Ծրագրի հատուկ նպատակներն ու արդյունքները հետեւյալն են՝

Նպատակ 1. Բարձրացնել կառավարության նկատմամբ վստահությունը

Արդյունք 1.1. Թափանցիկ եւ վստահելի ընտրություններ

Արդյունք 1.2. Կառավարության բաց գործելաոճ եւ հաշվետվողականություն

Արդյունք 1.3. Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի բարձրացում

Արդյունք 1.4. Քաղաքացիական հասարակության հետ կառուցողական երկխոսության մեխանիզմ

Նպատակ 2. Բարձրացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավվածության մակարդակը

Արդյունք 2.1. Մասնակցային ժողովրդավարության զարգացում

Արդյունք 2.2. Հայաստանում ակտիվ լրատվական միջավայրի զարգացում

Արդյունք 2.3 Կանանց ներգրավվածության ամրապնդում

Այս ծրագիրը կարեւոր նշանակություն ունի 2030 թվականի օրակարգի համար: Այն նպաստում է հիմնականում հետեւյալ ԿԶՆ-ներին աստիճանաբար հասնելուն՝ i) ԿԶՆ 5 «Հասնել գենդերային հավասարության եւ իրավազորել բոլոր կանանց եւ աղջիկներին» եւ ԿԶՆ 16 «Խթանել խաղաղ եւ ներառական հասարակության կայուն զարգացումը, բոլորի համար ապահովել արդարադատության մատչելիություն եւ բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու եւ ներառական ինստիտուտներ»: Նախատեսված է նաեւ, որ ծրագիրը կնպաստի ԿԶՆ 1-ին՝ «Ամենուրեք վերացնել աղքատության բոլոր ձեւերը», ԿԶՆ 4-ին՝ «Ապահովել ներառական եւ հավասար որակյալ կրթություն, ինչպես նաեւ բոլորի համար ընդլայնել հարատեւ կրթության հնարավորությունները» եւ ԿԶՆ 10-ին՝ «Կրճատել անհավասարությունը երկրների ներսում եւ դրանց միջեւ»:

1.2. Հիմնական գործողությունները

Պլանավորվող գործողություններն ուղղված են ծրագրի հենասյուներին՝

i. Կառավարության նկատմամբ վստահության բարձրացում,

ii. Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավվածության մակարդակի բարձրացում

<u>Բաղադրիչ 1. Կառավարության նկատմամբ վստահության բարձրացում</u>

Քանի որ անցումային Կառավարության հիմնական նպատակը վաղ ընտրություններ կազմակերպելն է, ընտրությունների թափանցիկությունը եւ վստահելիությունը դառնում են կարեւոր նշանակություն ունեցող հարցեր՝ քաղաքացիական ալիքը պահպանելու եւ այն լեգիտիմ արդյունքների վերածելու

համար: Բաղադրիչն առաջարկում է բազմակողմ մոտեցում, որը միեւնույն ժամանակ ուղղված է ընտրությունների թափանցիկության եւ վստահելիության մակարդակի բարձրացմանը, մարդու իրավունքների համակարգի ամրապնդմանը եւ արդարադատության իրականացմանը, ինչպես նաեւ ընտրական փուլում ավելի բաց կառավարման համակարգերի խթանմանը:

Հավանական չէ, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կազմն էականորեն փոխվի, սակայն դեռ առկա է ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար պատասխանատու անձանց կարողությունների նպատակային զարգացման անհրաժեշտություն բոլոր մակարդակներում (կենտրոնական, տարածքային եւ տեղամասային): Հաշվի առնելով, որ ընտրական վարչարարությունը համալիր համակարգ է՝ առաջարկվող միջոցառումներով պահանջվում է ընտրական ցիկլի բոլոր փուլերում միաժամանակ անդրադառնալ ինչպես դրա առանձին խնդիրներին, այնպես էլ դրանց փոխկապակցվածությանը, օրինակ՝ ընթացակարգեր, սարքավորումներ, քաղաքացիներ եւ ընտրական հանձնաժողովներ: Համապետական մակարդակով պետք է անցկացվեն պատշաճ վերապատրաստումներ ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար պատասխանատու անձանց ընթացակարգային, իրավական եւ բարոյական պարտականությունների վերաբերյալ, որպեսզի նրանք իրենց աշխատանքը կատարեն առանց որեւէ կուսակցության կամ թեկնածուի աջակցելու՝ ընդգծելով քաղաքական որոշումներ կայացնելու հարցում կանանց մասնակցության մակարդակը բարձրացնելու կարեւորությունը: Ընտրողներին կաշառելու դեմ պայքարելու եւ քարոզարշավի ֆինանսական միջոցների թափանցիկությունն ընդհանուր առմամբ բարձրացնելու եւ դրանք վերահսկելու առումով կարեւոր է նաեւ ընդլայնել ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարողությունները:

Ընտրատեղամասում ընտրողների կենսաչափական տվյալների նույնականացման համընդհանուր եւ հուսալի համակարգի ներդրմամբ փաստացի

կբացառվի բազմակի քվեարկության հնարավորությունը, քանի որ համակարգն ավտոմատ կերպով հրաժարվում է նույնականացնել ընտրողին, եթե մատնահետքերը չեն համապատասխանում: Սա կպահանջի թարմացնել ընտրողների նույնականացման գործող ծրագրաշարը, հնարավոր է նույնիսկ սարքաշարը (երկուսն էլ ձեռք են բերվել «Աջակցություն Հայաստանում ընտրական գործընթացին» ՄԱԶԾ ծրագրի ընթացքում, որը մասամբ ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից), սակայն բոլոր ընտրողների կենսաչափական տվյալները հավաքելը շարունակում է լինել մարտահրավեր, ինչը եւ՛ ժամանակատար է, եւ՛ համարվում է լուրջ խնդիր:

Ընտրական վեճերի լուծման (ԸՎԾ) մեխանիզմները դիտորդական զեկույցների մեջ հետեւողականորեն սահմանվել են որպես ընտրական գործընթացում «թույլ կապեր», որտեղ բացակայում են թե՛ համաձայնեցված կիրառումը, թե՛ թափանցիկությունը: Այս խնդիրները կարգավորելու համար պետք է բարձրացվեն բոլոր շահագրգիռ կողմերի կարողությունները՝ սկսած դատավորներից, դատախազներից ու ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար պատասխանատու անձանցից: Բացի այդ, կարեւոր է, որ ԸՎԾ մեխանիզմներն ընտրողների եւ թեկնածուների համար լինեն հստակ, որպեսզի նրանք պաշտոնական բողոք ներկայացնելիս տեղյակ լինեն իրենց իրավունքներից եւ պարտականություններից: Կարողությունների զարգացումը ԸՎԾ մեխանիզմների ընդլայնումն է, որը կարող է տարածվել նաեւ դատավորների եւ դատախազների վրա:

Վերոնշյալ խնդիրները դեռ առկա են եւ՛ ազգային, եւ՛ տեղական ընտրություններում, հետեւաբար, առաջարկվող մեխանիզմները կիրառվում են թե՛ հանրային վստահությունը եւ թե՛ ընդհանուր առմամբ ընտրական գործընթացների վստահելիությունը բարձրացնելու համար: Բնականաբար, լավագույն հնարավոր արդյունքին կարելի է հասնել, եթե առաջարկվող միջոցները կիրառվեն ամբողջությամբ: Այնուամենայնիվ, կախված վաղ ընտրությունների ժամկետներից՝ դրանք կարող են կիրառվել ընտրողաբար՝

առաջնահերթությունը տալով այն մարտահրավերներին, որոնց ուղղությամբ պետք է քայլեր ձեռնարկվեն: Անհրաժեշտ երաշխիքներն ապահովելու համար կարող է դիտարկվել նաեւ անտեսանելի թանաք կիրառելու այլընտրանքային տարբերակը, մասնավորապես, այն դեպքում, երբ տեխնիկական լուծումների հետ կապված անհրաժեշտ թարմացումները հակասում են վաղ ընտրություններ անցկացնելու համար ցանկալի ժամկետին:

Մարդու իրավունքների վերաբերյալ հայեցակետը կներառի համապատասխան պետական գերատեսչություններին ուղղված խորհրդատվություն եւ նպատակային վերապատրաստումներ մարդու իրավունքների հետ կապված հիմնական թեմաների վերաբերյալ եւ պետական ծառայությունների ոլորտում, ինչպես նաեւ մարզերում իրավունքների վրա հիմնված մոտեցման հետ կապված հանձնառությունների ամրապնդումը եւ մասնավորապես գոյություն ունեցող գենդերային անհավասարությունը: ՀԿ-ները կանցնեն միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության վերաբերյալ վերապատրաստումներ՝ դատական քննություններն ուսումնասիրելու եւ դատական որոշումների մոնիթորինգ իրականացնելու համար:

«Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծն ընդունվելուց հետո կստեղծվի իրավահավասարության հարցերով մարմին, որի դեպքում կառաջանա այդ մարմնի լիազորությունների եւ միջազգային չափանիշների վերաբերյալ վերապատրաստման եւ ընկալման անհրաժեշտություն, ինչպես նաեւ, բացի իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծավալուն աշխատանքից, իր աշխատանքի մեթոդաբանության մշակման անհրաժեշտություն: Նմանապես, աշխատանքային տեսչության լիարժեք գործունեությունը Հայաստանում վերականգնելուն զուգահեռ կառաջանա կարողությունների զարգացման եւ վերապատրաստման անհրաժեշտություն: Առաջարկվում է իրավունքների վրա հիմնված մոտեցում ներդնելու եւ հարմարեցնելու հարցում աշխատանքներ կատարել պատասխանատու նախարարությունների եւ կառավարության աշխատակազմի շրջանում, այդ թվում՝

մայրաքաղաքից դուրս, որտեղ կառավարության աշխատակազմը նույնիսկ չունի մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական գիտելիքներ: Կխթանվի նաեւ մասնավոր հատվածում եւ աշխատավայրում մարդու իրավունքների կարեւորության, այդ թվում՝ աշխատանքային չափանիշների եւ իրավունքների վերաբերյալ իրազեկության ավելի բարձր մակարդակ: Հաշվետվողականության մակարդակի բարձրացման նպատակով ակնկալվում է, որ ավելի շատ աշխատանքներ կկատարվեն ոլորտային ծրագրերի ցուցիչների մշակման, ինչպես նաեւ մոնիթորինգի (այդ թվում՝ քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող) եւ հաշվետվությունների ներկայացման համակարգերում: Ի թիվս այլնի, այս բաղադրիչում կօգտագործվեն աշխարհի մյուս մասերից վերցված օրինակներ:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել **ընտանեկան եւ սեռական բռնության ենթարկված կին զոհերին**: Առկա մարտահրավերները հասկանալու նպատակով պետք է հավաքվեն ապացույցներ ՔՀԿ-ների կողմից դատաքննության ավելի լայնածավալ եւ հետեւողական մոնիթորինգ իրականացնելու միջոցով: Սա տեղեկություններ հավաքելու եւ բարեփոխումների ոլորտները որոշելու համար ընդունված մեթոդ է: Այդպիսի պարբերական դիտարկումների միջոցով, օրինակ, կարգավորվել են մի շարք խնդիրներ, ինչպես նաեւ հարեւան Վրաստանում դրանք նպաստել են արդարադատության ոլորտում բարեփոխումների իրականացմանը: Ակնկալվում է, որ հավաքված փորձով ու տեղեկություններով կբարձրացվի իրավապահ մարմիններում հետագա բարեփոխումներին ուղղված միջոցառումների, ինչպես նաեւ այս ոլորտում քաղաքացիական հասարակությանը տրամադրվող ԺՄԻԵԳ հետագա աջակցության մասին իրազեկվածության մակարդակը:

Բաց կառավարման նախաձեռնությունները կմեկնարկեն եւ կփորձարկվեն քաղաքացիների տարբեր խմբերի կողմից, եւ հաջողված նախաձեռնությունները կպատրաստվեն ավելի հետեւողականորեն իրականացվելու համար՝ քաղաքացիների նախընտրություններին եւ հաշվետվողականության

պահանջարկներին համապատասխան: Աշխատանքը հիմնված կլինի առկա ձեռքբերումների եւ Հայաստանում ԲԿԳ երեք գործողությունների ծրագրերի իրականացման արդյունքում քաղած դասերի վրա եւ կընդլայնի բաց կառավարման մանդատը ենթաազգային մակարդակով՝ ընդունելով **քաղաքային բաց կառավարման** եւ բարեվարքության վերաբերյալ հանձնառություններ եւ Հայաստանում ստեղծելով **տվյալների ազատ շարժի** հնարավորություն:

Մասնավորապես, ԲԿԳ գործընթացում գաղափարների մրցույթների միջոցով **ակտիվ քաղաքացիների եւ հանրային ոլորտի նորարարների ավելի ընդլայնված մասնակցության** ապահովումը՝ տվյալների գրանցման միջոցով աջակցելով համակարգման հիմնական մարմիններին, էապես կխթանի ԲԿԳ իրականացման հարցում առաջընթացը եւ կառավարությունում ազգային գերակայություն դառնալը՝ այդպիսով նպաստելով նաեւ Պետական կառավարման ոլորտում բարեփոխումների ավելի լայն նպատակներին հասնելուն: Կառավարության՝ քաղաքացիներին առնչվող թեմաների վերաբերյալ տարեկան համաժողովում հետագայում կընդգծվեն ամրապնդված եւ մասնակցային ժողովրդավարության ուղղությամբ հիմնական ձեռքբերումներն ու հաջողությունները:

Գործողությունը կաջակցի ինչպես ԲԿԳ հանձնառությունների իրականացման, այնպես էլ դրանց քաղաքացիական վերահսկողության հարցում: Բացի ազգային եւ ենթաազգային մակարդակում բաց կառավարման մոտեցումների համար տրամադրվող համակարգային աջակցությունից, գործողությամբ կնախատեսվեն նաեւ ՔՀԿ դրամաշնորհային սխեմաներ՝ ապահովելու, որ քաղաքացիական հասարակությունը կարողանա տրամադրել փորձառություն, իրականացնել կառավարման ոլորտում բարեփոխումների եւ ենթակառուցվածքային ծրագրերի մոնիթորինգ եւ վերահսկողություն: Ակնկալվում է, որ բոլոր մակարդակներում Կառավարությունը շատ ավելի լավ կընկալի քաղաքացիների նկատմամբ ավելի բաց եւ պատասխանատու լինելու մեխանիզմներ ընդունելու կարեւորությունը:

Երիտասարդների ներգրավմանն ուղղված ԲԿԳ աշխատանքի մեկնարկով կբարձրանան նրանց քաղաքացիական մասնակցության հմտությունները, եւ, ամենայն հավանականությամբ, կխթանվի նաեւ նոր եւ ավելի շատ երիտասարդների համար նախատեսված տեխնոլոգիաների ընդլայնված օգտագործումը՝ բաց գործելաոճ եւ հաշվետվողականություն ապահովելու համար: Գործողությունները հիմնված կլինեն այլ հարեւան երկրներում նույնանման միջամտությունների վրա եւ կհարմարեցվեն Հայաստանի համատեքստում հաստատված եւ փորձարկված՝ դեռահասների քաղաքացիական ներգրավման եւ 21-րդ դարի հմտությունները սովորելու մոդելներին՝ կենտրոնանալով հետեւյալի վրա՝

1) **կյանքի բոլոր ոլորտներում հմտությունների** խթանում՝ կարողությունների զարգացման եւ համայնքային ներգրավման միջոցով դեռահաս աղջիկներին եւ տղաներին ակտիվ քաղաքացիներ դառնալու հնարավորություն տալով՝ այդպիսով նպաստելով ավելի բարգավաճ համայնքներ ունենալուն (Upshift մոդել).

2) Դեռահասները կսովորեն **կիրառել քննադատական մտածողության հմտություններ**՝ մասնավորապես, տեղեկությունների մշակման եւ լրատվության միջոցների, ինչպես նաեւ սոցիալական հարցերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման համար լրատվության միջոցներն օգտագործելու առնչությամբ (Ponder):

3) Դեռահասներին ապահովել **համայնքային կարիքների գնահատումներ իրականացնելու, արշավները ղեկավարելու, որոշումների կայացման գործընթացում լոբբինգի եւ ազդեցություն ունենալու հետ կապված անհրաժեշտ հմտություններով** (Podium)

4) Ստեղծել քաղաքացիական հասարակության կողմից ձեւավորված տեսակետներն ուղղորդելու համար նախատեսված կառուցողական երկխոսության մեխանիզմներ:

Գործողությունները կիրականացվեն Հայաստանի մարզերում՝ ընդգրկելով համայնքները, դպրոցները, երիտասարդական ակումբները, զանգվածային լրատվության միջոցները եւ գործընկեր հաստատությունները: Երիտասարդների վրա կենտրոնացված գործողություններում կներգրավվեն 4 100 երիտասարդներ, որոնցից շուրջ 1 100-ը վերապատրաստումներից ուղղակիորեն օգտվող դեռահաս աղջիկներն եւ տղաներն են: Բացի այդ, ծրագրի նպատակն է առցանց եւ սոցիալական ցանցերով հաղորդակցությունների միջոցով ներգրավել 9 000 երիտասարդների:

Այս բաղադրիչի ընդհանուր արդյունքը մարդու իրավունքների բարելավված պաշտպանությունը եւ մարդու իրավունքների միջազգային չափանիշների մասին իրազեկվածության բարձրացումն է ինչպես իրական արդարադատություն իրականացնող պատասխանատու մարմինների կողմից, այնպես էլ ընդհանուր բնակչության շրջանում եւ Հայաստանի քաղաքացիների ավելի ընդլայնված մասնակցության միջոցով:

Բաղադրիչ 2. Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավվածության մակարդակի բարձրացում

Հայաստանում վերջին զարգացումները ցույց են տալիս **կանանց եւ տղամարդկանց՝ բացի ընտրական փուլից նաեւ քաղաքական երկխոսության եւ կառավարման գործընթացներում ներգրավված լինելու** աճող պահանջարկը: Մոտեցմամբ նախատեսվում են քաղաքացիների կողմից ուղղակի համագործակցություն, պետական ծառայությունների համատեղ ստեղծում եւ համատեղ իրականացում եւ, ընդհանուր առմամբ, հասարակական կյանք: Գործողությունը կօգնի Հայաստանի կառավարությանը ընդունել քաղաքականության իրականացման տարբեր մակարդակներում երիտասարդների համար նախատեսված ներգրավման մոտեցում՝ մարտահրավերների սահմանումից մինչեւ փաստացի իրականացում՝ ցուցաբերելով գենդերային մոտեցում: Խրախուսելով մասնակցային

ժողովրդավարությունը՝ գործողությամբ կընդգծվի նաեւ կայուն ժողովրդավարական հաստատությունների կարեւորությունը փորձնական ընտրությունների եւ երիտասարդական խորհրդարաններով կառավարման կամ եվրոակումբների եւ ԵՄ երիտասարդ դեսպանների ցանցի ներառման միջոցով: Գործողությամբ ավելի լավ հնարավորություններ կստեղծվեն մարզերում գտնվող երեխաների, երիտասարդների եւ կանանց համար, հատուկ կարիքներ ունեցող խմբերի, ինչպես օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, ծայրահեղ աղքատների, էթնիկ փոքրամասնությունների համար եւ այլն:

Գործողությունների նպատակն է **երիտասարդներին խրախուսել ակտիվորեն ներգրավվել համայնքային զարգացմանը**՝ ստեղծելով միկրոծրագրեր: Երիտասարդների կողմից նախաձեռնված ծրագրերը չեն փոխարինի, սակայն կլրացնեն տեղական մարմինների զարգացման ռազմավարությունը, այդ թվում՝ այնպիսի գործողությունները, ինչպիսիք են հանրային տարածքների վերակենդանացումը, վեբ/բջջային ծրագրերի ստեղծումը, երիտասարդների կողմից իրականացվող հետազոտությունը, այնպիսի խմբերի հատուկ մարտահրավերներին ծրագրի վրա հիմնված արձագանքը, ինչպիսիք են օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք, էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունները եւ այլն:

Օգտատերերի այս խմբերի ներգրավմանն ուղղված հատուկ գործողությունները կներառեն **Dream Labs**՝ քաղաքացիների կողմից ուղղորդվող դրական ապագայի հետ կապված սցենարների հավաքման կանխատեսման մոտեցումը: Հաղորդակցման անխափան գործընթացներ եւ հետադարձ կապի արդյունավետ հանգույցներ ապահովելու նպատակով Գործողության շրջանակում կձեւավորվեն նաեւ ռեցեպտիվ եւ կառավարությունում օգտատերերի համար առավել մատչելի մեխանիզմներ: Համագործակցության պայմանական հարացույցում, բնակչության եւ հանրային ծառայությունների վերջնական օգտատերերի միջեւ կապն ապահովելու համար Կառավարությունը հիմնվում է

լրատվության միջոցների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների վրա: Այնուամենայնիվ, ժողովրդավարական կառավարման ավելի նոր մոդելներում առավել շեշտադրվում են հաղորդակցման եւ համագործակցության, այդ թվում՝ բովանդակային մասնակցության ուղղակի ուղիները:

Ի վերջո, կոլեկտիվ կերպով տեղական եւ ազգային կառավարման մարմինների ծառայությունները մոնիթորինգի ենթարկելու եւ գնահատելու համար կօգտագործվեն երիտասարդների բարելավված կարողությունները՝ իրական ժամանակում **վեբ տեղեկատվական ցուցանակների** միջոցով, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կարող է զեկուցել եւ գնահատել Կառավարությանը՝ որպես իր ծառայություններից օգտվող: Տեղեկատվական ցուցանակը կամրապնդի **վեբ-ռեզիդենտ հանդիսացող երիտասարդների շրջանում աճող պահանջարկ-վարքագիծը** եւ կապահովի որոշումներ կայացնողների թափանցիկությունը եւ հաշվետվողականությունը: Նպատակային դրամաշնորհի բաղադրիչն ընդգրկվել է կանանց եւ այնպիսի թիրախային խմբերին խրախուսելու համար, ինչպիսիք են երիտասարդները, ուսանողները, փոքրամասնության խմբերը, կանայք եւ մեկուսացված խմբերի անդամները՝ քաղաքականության իրականացման մոնիթորինգն ավելի համակարգված իրականացնելու եւ երիտասարդների կողմից ուղղորդվող պետական գույքի նկատմամբ վերահսկողությունը եւ փաստահավաք նախաձեռնությունները խրախուսելու նպատակով:

Գործողությունը հիմնված կլինի ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախորդ ծրագրերի վրա եւ կհամակարգվի վերջերս Հայաստանում մեկնարկած «ԵՄ-ն երիտասարդության համար» ծրագրերի հետ եւ կփորձի բարձրացնել քաղաքացիների բավարարվածությունը եւ վստահությունը՝ էապես բարելավելով գործընթացներում ուղղակի մասնակցությունը հետեւյալ առանցքային ոլորտներում՝ i) քաղաքացի-կառավարություն հաղորդակցում. ii) ազգային եւ ենթաազգային ծառայությունների մատուցում:

Վաղ մանկական տարիքի եւ խնամքի ծառայությունների մատչելիությունը, որակը եւ հավասարությունը բարելավելու ուղղությամբ ներդրումների մակարդակի ավելացումը եւ ընտանիքների, ծնողների եւ, մասնավորապես, կանանց աջակցությունը հրատապ անհրաժեշտություն են Հայաստանի համար՝ գենդերային հավասարության մակարդակը բարձրացնելու, բնակչության ողջ կադրային ներուժի օգտագործման մակարդակը մեծացնելու եւ կանանց տնտեսական անկախությունը բարձրացնելու համար: Բաղադրիչը ենթադրում է վաղ մանկական տարիքի կրթության եւ խնամքի 40 հաստատությունների ստեղծում Հայաստանի գյուղական տարածքներում, որտեղ հնարավոր կլինի տեղավորել հաշմանդամություն ունեցող երեխաներին: Այս կենտրոնների հասանելիությունը թույլ կտա երիտասարդ մայրերին, ինչպես նաեւ կանանց ու տղամարդկանց օգտվել հզորացման նոր հնարավորություններից, իրականացնել համատեղ ծրագրեր, աշխատել եւ ներգրավվել եկամուտներ ստեղծող հնարավորություններում՝ հմտությունների խաչաձեւ համապատասխանեցման միջոցով: Առաջարկվող մոդելները նաեւ կօգտվեն պետական-մասնավոր հատված համագործակցության հնարավորությունից՝ նպաստելով համայնքի զարգացմանը, ընտանիքի ամրապնդմանը եւ սոցիալական միասնականությանը: Բացի այդ, երբ նախադպրոցական ծառայությունները կազմակերպվում են դպրոցի տարածքում եւ ունեն համայնքային ուղղվածություն, ակնկալվում է, որ դրանք եւս կբարձրացնեն համայնքի մոբիլիզացման մակարդակը եւ հեռավոր ու գյուղական համայնքների վերակենդանացումը:

Համայնքի ընտրված անդամները, ավելի հաճախ մայրերը/խնամակալներն անցել են փոքր երեխաների հետ աշխատելու վերապատրաստում, հետեւաբար վաղ մանկական ուսուցման եւ խնամքի ծառայությունների մատուցման գործընթացում համայնքին ներգրավելը կխթանի կանանց հզորացումը տարբեր ուղղություններով: Վաղ մանկական եւ խնամքի կենտրոնները կարող են նաեւ համախմբել մայրերին եւ հայրերին, տատիկներին եւ պապիկներին իրենց փոքր

երեխաների համար ավելի լավ ապագա ապահովելու ձգտումներում՝ իրականացնելով խորհրդատվական քննարկումներ երեխաների դաստիարակության, սննդի, առողջության եւ զարգացման հարցերով ծնողների հմտությունների վերաբերյալ: Բաղադրիչը բազմաոլորտային մոտեցմամբ կաջակցի նաեւ ներառական մանկապարտեզներին, ինչպես նաեւ դրանում ընդգրկված են պետական եւ հասարակական այնպիսի գործակալություններ, որոնք համայնքներին տրամադրում են սոցիալական աջակցություն: Վաղ մանկական տարիքի կրթության եւ խնամքի տրամադրման երկու տեսակներն ավանդական մոդելներից տարբերվում են ճկունությամբ, կարիքների վրա հիմնված ծրագրերի մշակման գործընթացում տեղական համայնքների եւ ծնողների մեծ ներգրավվածությամբ, համապատասխանում են համայնքում առկա իրավիճակին եւ հատուկ են տվյալ համայնքին:

Երկու կարեւոր գործողությունների միջոցով ԵՄ աջակցություն կտրամադրվի Հայաստանի քաղաքացիական հասարակությանը եւ լրատվական ոլորտին: Քաղաքացիական հասարակությանն ուղղված աջակցությամբ **կընդլայնվեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները՝ քաղաքականության մշակման եւ բարեփոխումների իրականացման վերաբերյալ կարեւոր գիտելիքները կառավարությանը փոխանցելու եւ քաղաքացիների ներգրավման հարթակները ներկայացնելու համար**: Հաշվի առնելով Կառավարության եւ քաղաքացիական հասարակության հետ քննարկումներն այն մասին, թե ինչպես ձեռնարկել ավելի կառուցողական քաղաքականության երկխոսություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնություններ իրականացնող եւ խնդիրները բարձրացնող այլ անձանց հետ՝ ԵՄ-ն կմեկնարկի հայտամրցույթ փորձնական նախաձեռնության համար, որով հարթակ կտրամադրվի քաղաքականության եւ բարեփոխումների առաջնահերթությունների, ինչպես նաեւ քաղաքացիների հետագա իրավազորման վերաբերյալ շարունակական երկխոսությունների, խորհրդակցությունների եւ քննարկումների համար: Որոշ մոդելներ արդեն ներկայացվել եւ փորձարկվել են Կառավարության կողմից, եւ

ակնկալվում է, որ Ընտրական օրենսգրքի եւ այլ առանցքային օրենքների նախագծերի ու քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի հետ կապված հանրային քննարկումների արդյունքում աշնան ամիսների ընթացքում կներկայացվեն ավելի շատ մոդելներ: Հայտամրցույթը բաց կլինի թե՛ եվրոպական, թե՛ հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, եւ ակնկալվում է ներառել քաղաքացիների եւ կառավարության ներգրավման ու համագործակցության նորարարական տարրեր:

Լրատվական ոլորտում բարեփոխումներին աջակցելու նպատակով կձեւավորվի ԵՄ լրատվական ծրագիր, եւ լրատվական ոլորտում համաշխարհային զարգացումները, ինչպես նաեւ Հայաստանի կանանց եւ տղամարդկանց կողմից լրատվական արտադրանքների պահանջարկներն արտացոլող գործունեության եւ ֆինանսական կայուն ռազմավարություններ մշակելու նպատակով լրատվամիջոցներին կտրամադրվի տեխնիկական եւ ֆինանսական աջակցություն՝ մասնավորապես Հայաստանի մարզերում: Վերջին տարիներին Հայաստանում չի իրականացվել լրատվության միջոցների կիրառման եւ նախասիրությունների վերաբերյալ լայնածավալ հետազոտություն, սակայն դա կարող էր օգնել լրատվության միջոցներին համապատասխանեցնել իրենց որոշումները լրատվական շուկայում առկա իրավիճակին: Նախատեսվում է երրորդ կողմերին տրամադրել եւ՛ հիմնական ֆինանսական աջակցություն, եւ՛ գործողություններին ուղղված ֆինանսական աջակցություն, եւ դա լրացնել փորձագիտական խորհրդատվությամբ եւ ուսուցմամբ: Նախատեսվում է նաեւ շարունակել խթանել քաղաքացիների կողմից ուղղորդվող լրագրությունը, հետաքննական լրագրությունը տեխնիկական ոլորտներում եւ երիտասարդների ու գենդերային խնդիրները հաշվի առնող լրագրությունը: Լրատվական ոլորտի վերջին գնահատման համաձայն՝ մեծ ծավալի տվյալների հավաքագրումը եւ կառավարումը, ինչպես նաեւ լրագրողներին տրամադրվող իրավական աջակցությունը կարծես թե այն բաց ոլորտներն են, որտեղ նույնպես առկա է աջակցության անհրաժեշտություն: Փոքր տեղական անկախ լրատվության

միջոցներին մասնագիտական գիտելիքների եւ սարքավորումների բացակայության խնդիրները հաղթահարելուն աջակցելու նպատակով կապահովվի արտադրության կենտրոնների ցանցի հասանելիությունը:

Որպես համալիր տարր, նախատեսվում է **մասնակցային մոնիթորինգի լայնածավալ նախաձեռնություն** հետեւյալ ոլորտներում ԵՄ փորձի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու նպատակով՝ i) հնարավորության ընձեռում Հայաստանի կանանց եւ տղամարդկանց՝ զարգացող ժողովրդավարությանը եւ իրենց երկրի զարգացման գործընթացում իրենց ներդրումն ունենալու համար. ii) ժողովրդավարական ինստիտուտների հանրային լեգիտիմության եւ կայունության ապահովում: Սրանով նաեւ կապահովվի ԵՄ լավ տեսանելի աջակցություն՝ մասնակցային ժողովրդավարությունը պահպանելու նպատակով նոր սերունդների համար բարենպաստ միջավայր ստեղծելու հարցում:

1.3. Միջամտության հիմնավորումը

ԵՄ-ն պարտավորվում է աջակցել Հայաստանին այն ժամանակահատվածում, երբ երկիրն անցնում է ժողովրդավարության ամրապնդման եւ ձեւավորում է իր ժողովրդավարական ապագան: Առաջարկվող գործողությունը հիմնված կլինի նախկինում տրամադրված լայնածավալ աջակցության եւ քաղած դասերի վրա, ինչպես նաեւ դրանում հատուկ ուշադրություն կդարձվի ժողովրդավարացման, կառավարման, գենդերային հավասարության եւ մարդու իրավունքների ոլորտներում հայտնաբերված բացերին՝ նպատակ ունենալով անցումային ժամանակաշրջանում ամրապնդել ժողովրդավարությունը եւ մասնակցությունը, բարելավել մարդու իրավունքների պաշտպանությունն ու հարգանքը՝ միեւնույն ժամանակ նաեւ նյութական ծառայություններ մատուցելով Հայաստանի մարգինալացված տարածքներում գտնվող կանանց եւ տղամարդկանց, ինչպես նաեւ երեխաների համար: Առաջարկվող գործողությունը կաջակցի նաեւ գործընկերների կարողությունների զարգացման եւ փորձի փոխանակման հարցում: Ազգային եւ տեղական

մակարդակներում քաղաքացիների մոնիթորինգի ընդլայնված համակարգեր, ինչպես նաեւ ձեռք բերված արդյունքների վերաբերյալ հանրային իրազեկման գործիք ստեղծելու նպատակով առաջարկվող գործողությունը կաջակցի նորարարական մասնակցության գործիքներ նախագծելու եւ մշակելու հարցում:

Սույն գործողության տեսանելիությունը հիմնականում հիմնված կլինի նաեւ երեխաների եւ երիտասարդների խմբերի, սովորական քաղաքացիների՝ կանայք-տղամարդիկ, եւ հատկապես հեռավոր շրջանների բնակիչների խոսքի վրա՝ ծրագրի մասին պատմելու, տեսողական պատկերը ներկայացնելու հարցում իրենց աջակցությունը տրամադրելու եւ իրենց նեգրավվածության ու փորձի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Այսպիսով, ավանդական լրատվության միջոցները կվերապատրաստվեն Հայաստանի մարզերից լրատվական տարբեր հոսքեր ապահովելու համար իրադարձությունների կարճ լուսաբանումներ եւ պատմություններ օգտագործելու հարցում: Բացի այս, հաղորդակցման այլընտրանքային միջոցները, ինչպես օրինակ՝ սոցիալական արվեստը եւ (կամ) հեռուստահաղորդումները, նույնպես կօգտագործվեն գենդերային կարծրատիպերից զերծ պրոակտիվ եւ պատասխանատու քաղաքացու կերպար ստեղծելու համար: Արդյունքում, որպես տեսանելիության ռազմավարության մաս, հաղորդակցման այլընտրանքային միջոցների հետ մեկտեղ կօգտագործվի ավանդական եւ նոր լրատվության միջոցների ֆինանսավորումը՝ ուղիղ ժողովրդավարության հնարավորությունների վերաբերյալ քաղաքացիներին կրթելու համար:

Նախատեսվում է նաեւ մասնակցության վերաբերյալ հետադարձ կապի եւ մոնիթորինգի մոդել, որը, ի թիվս այլ միջոցների, կներառի տարեկան երկու համաժողով, որոնց ընթացքում կքննարկվեն Հայաստանում ժողովրդավարական կառավարման եւ քաղաքացիների ներգրավման հետ կապված հարցեր:

2. ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1. Իրականացման մեթոդը

Հանձնաժողովը կապահովի, որ պահպանվեն ԵՄ-ի՝ երրորդ կողմերին ֆինանսավորման տրամադրման կանոնները եւ ընթացակարգերը, ներառյալ՝ վերանայման ընթացակարգերը, անհրաժեշտության դեպքում, եւ գործողության համապատասխանությունը ԵՄ սահմանափակող միջոցներին[1]:

2.1.1.1. Դրամաշնորհներ. հայտերի ներկայացման սահմանափակ հրավեր՝ Հայաստանում ԵՄ լրատվամիջոցների համար

ա) Դրամաշնորհների նպատակները, միջամտության ոլորտները, տարվա առաջնահերթությունները եւ ակնկալվող արդյունքները

Հայտերի ներկայացման սույն հրավերի նպատակն է աջակցել 2.2 արդյունքին՝ Հայաստանում ակտիվ լրատվական միջավայր ստեղծելու մասով: Հիմնական խնդիրն է շարունակել զարգացնել Հայաստանի լրատվական ոլորտը եւ աջակցել լրատվական նոր եւ ավելի տարաբնույթ արտադրանքի ստեղծմանը, ինչպես նաեւ աջակցել լրատվամիջոցների կայուն արդիականացմանը: Նախագիծը կներառի երրորդ կողմերին ֆինանսական աջակցության տարբեր ծրագրեր:

բ) Համապատասխանելիության պայմանները

Դրամաշնորհ ստանալու իրավունք ունենալու համար հայտատուն պետք է՝

[1] www.sanctionsmap.eu Խնդրում ենք նկատի ունենալ, որ պատժամիջոցների քարտեզը ՏՏ գործիք է պատժամիջոցների ռեժիմը որոշելու համար: Պատժամիջոցների աղբյուրը բխում է Պաշտոնական տեղեկագրում (այսուհետ՝ ՊՏ) հրապարակված իրավական ակտերից: Հրապարակված իրավական ակտերի եւ կայքում տեղադրված թարմացումների միջեւ անհամապատասխանության դեպքում գերակայում է ՊՏ-ի տարբերակը:

Անմիջական պատասխանատվություն կրի գործողության նախապատրաստման եւ կառավարման համար համահայտատուի (համահայտատուների) եւ փոխկապակցված անձի (անձանց) հետ միասին՝ առանց հանդես գալու որպես միջնորդ:

Հաշվի առնելով հայտերի ներկայացման հրավերում հրապարակման ենթակա տեղեկատվությունը՝ ԵՄ օժանդակության նախանշված գումարը կազմում է 2 000 000 եվրո, եւ դրամաշնորհը կարող է տրամադրվել մեկ շահառուի կամ շահառուների կոնսորցիումին (համակարգող եւ համաշահառուներ): Դրամաշնորհի (դրա իրականացման ժամանակահատվածի) նախանշված տեւողությունն է առավելագույնը 48 ամիս:

գ) Ընտրման եւ տրամադրման կարեւորագույն չափորոշիչները

Ընտրման կարեւորագույն չափորոշիչներն են հայտատուի ֆինանսական եւ գործառնական կարողությունները:

Տրամադրման կարեւորագույն չափորոշիչներն են առաջարկվող գործողության համապատասխանությունը հայտամրցույթի նպատակներին՝ փորձառությունը, գործողության կառուցվածքը, արդյունավետությունը, իրագործելիությունը, կայունությունը եւ ծախսարդյունավետությունը:

դ) Համաֆինանսավորման առավելագույն չափը

Այս հայտամրցույթի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների համար համաֆինանսավորման հնարավոր առավելագույն չափը կազմում է 80 %:

Եթե գործողությունն իրականացնելու համար ամբողջական ֆինանսավորումն էական է, ապա համաֆինանսավորման հնարավոր առավելագույն չափը կարող է բարձրացվել մինչեւ 100%: Ամբողջական ֆինանսավորման անհրաժեշտությունը հիմնավորվում է դրամաշնորհ տրամադրելու մասին որոշում կայացնելու համար պատասխանատու՝

Հանձնաժողովի լիազոր պաշտոնյայի կողմից՝ հավասար վերաբերմունքի եւ սահուն ֆինանսական կառավարման սկզբունքներին համապատասխան:

ե) Հայտամրցույթի մեկնարկի նախանշված ժամկետները

Ե4 2018 թվական — Ե1 2019 թվական

2.1.1.2. Դրամաշնորհներ. հայտերի ներկայացման սահմանափակ հրավեր՝ քաղաքացիների ներգրավվածությունը խթանելու գործողության համար

ա) Դրամաշնորհների նպատակները, միջամտության ոլորտները, տարվա առաջնահերթությունները եւ ակնկալվող արդյունքները

Հայտերի ներկայացման սույն հրավերի նպատակն է աջակցել 2.1 եւ 1.4 արդյունքներին՝ Հայաստանում մասնակցային ժողովրդավարությունը զարգացնելու մասով, համապատասխանաբար հաստատելով կառուցողական երկխոսություն կառավարության հետ: Հիմնական նպատակն է ստեղծել մեծ շահագրգռվածություն 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին խաղաղ ցույցերի ընթացքում հազարավոր հայերի կողմից ցուցաբերված՝ քաղաքացիական հասարակության ներգրավվածության մասով, շարունակել ապահովել քաղաքականության վերաբերյալ քննարկումներին եւ բարեփոխումների նախաձեռնություններին հետեւելու հարթակներ սովորական քաղաքացիների համար, ինչպես նաեւ ամրապնդել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ կառավարությանը քաղաքականության մշակման եւ բարեփոխումների իրականացման մասով խորհրդատվություն տրամադրելու կարողությունները: Ֆինանսական աջակցությունը երրորդ կողմերին կարող է լինել գործողության հիմնական նպատակը:

բ) Համապատասխանելիության պայմանները

Դրամաշնորհ ստանալու իրավունք ունենալու համար հայտատուն պետք է՝

Լինի ժողովրդավարական կառավարման եւ քաղաքացիների ներգրավման մասով մասնագիտացված հասարակական կազմակերպություն:

Անմիջական պատասխանատվություն կրի գործողության նախապատրաստման եւ կառավարման համար համահայտատուի (համահայտատուների) եւ փոխկապակցված անձի (անձանց) հետ միասին՝ առանց հանդես գալու որպես միջնորդ:

Հաշվի առնելով հայտերի ներկայացման հրավերում հրապարակման ենթակա տեղեկատվությունը՝ ԵՄ օժանդակության նախանշված գումարը կազմում է 400 000 եվրո, եւ դրամաշնորհը կարող է տրամադրվել մեկ շահառուի կամ շահառուների կոնսորցիումին (համակարգող եւ համաշահառուներ): Դրամաշնորհի (դրա իրականացման ժամանակահատվածի) նախանշված տեւողությունն է առնվազն 30 ամիս:

գ) Ընտրման եւ տրամադրման կարեւորագույն չափորոշիչները

Ընտրման կարեւորագույն չափորոշիչներն են հայտատուի ֆինանսական եւ գործառնական կարողությունները:

Տրամադրման կարեւորագույն չափորոշիչներն են առաջարկվող գործողության համապատասխանությունը հայտամրցույթի նպատակներին՝ փորձառությունը, գործողության կառուցվածքը, արդյունավետությունը, իրագործելիությունը, կայունությունը եւ ծախսարդյունավետությունը:

դ) Համաֆինանսավորման առավելագույն չափը

Այս հայտամրցույթի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների համար համաֆինանսավորման հնարավոր առավելագույն չափը կազմում է 80 %:

Եթե գործողությունն իրականացնելու համար ամբողջական ֆինանսավորումն էական է, ապա համաֆինանսավորման հնարավոր առավելագույն չափը կարող է բարձրացվել մինչեւ 100%: Ամբողջական ֆինանսավորման անհրաժեշտությունը հիմնավորվում է դրամաշնորհ

տրամադրելու մասին որոշում կայացնելու համար պատասխանատու՝ Հանձնաժողովի լիազոր պաշտոնյայի կողմից՝ հավասար վերաբերմունքի եւ սահուն ֆինանսական կառավարման սկզբունքներին համապատասխան:

ե) Հայտամրցույթի մեկնարկի նախանշված ժամկետները

Ե4 2018 թվական — Ե1 2019 թվական

2.1.1.3. Գնումներ (ուղղակի կառավարում)

Առարկան	Տեսակը	Պայմանագրերի նախանշված թիվը	Ընթացակարգի մեկնարկի նախանշված եռամսյակը
Դիտանցում, վերանայում եւ գնահատում	Ծառայության նկարագրությունը	2	2019 թվական Ե1

2.1.1.4. Անուղղակի կառավարումը Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՄԱԶԾ) հետ

Սույն ծրագրի 1.1 եւ 1.2 արդյունքները կարող են իրականացվել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (ՄԱԶԾ) հետ անուղղակի կառավարմամբ, որը գնահատված հենասյուն է: Այսպիսի իրականացումը հիմնավորված է, քանի որ ԵՄ-ՄԱԶԾ համատեղ աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՀԱԽ) միջեւ հաստատված է ամուր գործընկերություն ընտրությունների հետ կապված աջակցության մասով, եւ ԵՄ-ն օգտագործում է այս գործընկերությունը՝ ընտրությունների հետ կապված իր աջակցության մեծ մասը, եթե ոչ ամբողջ աջակցությունը, իրականացնելու համար: ՄԱԶԾ-ն ունի հաստատված փորձ եւ տեխնիկական կարողություններ բաց կառավարությունը խթանելու ոլորտներում (արդյունք 1.2) եւ արժեքավոր մեծ փորձ այլ երկրներից, որը կարող է կիրառվել Հայաստանում:

Լիազորված մարմինը կատարում է բյուջեի կատարմանն առնչվող հետեւյալ առաջադրանքները. տենդերներին մասնակցության հրավերների եւ հայտերի

ներկայացման հրավերների ներկայացում. համապատասխանելիության, ընտրության եւ տրամադրման չափորոշիչների որոշում, տենդերների եւ հայտերի գնահատում, դրամաշնորհների, պայմանագրերի եւ ֆինանսական գործիքների տրամադրում, որպես պայմանագրեր կնքող եւ դրանց իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնող, վճարումներ կատարող՝ պետական պատվիրատու հանդես գալ: Կքննարկվի այն հարցը, թե արդյոք ՄԱԶԾ-ի հետ կկնքվի մեկ պայմանագիր, որը կներառի նաեւ 5.3.1.4 եւ 5.3.1.5 կետերում նշված պայմանագրերը. սակայն, քանի որ ընտրությունների հետ կապված աջակցության իրականացումն ավելի հրատապ է, հնարավոր է, որ անհրաժեշտ լինի առանձին պայմանագիր: Թափանցիկություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ «Նախանշված բյուջե» անվանմամբ 5.5 բաժնում ներառված է նախանշված բաշխում՝ ըստ կազմակերպության/աշխատանքի ոլորտների:

Հանձնաժողովն ընդունում է, որ լիազորված մարմնի կողմից կրած ծախսերը կարող են ճանաչվել որպես համապատասխանող՝ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, բացառիկ եւ պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում, ԵՄ պատվիրակության նախնական համաձայնությամբ, քանի որ անհրաժեշտ կլինի նախատեսել ընտրությունների համատեղ ֆինանսավորման ֆոնդ՝ Ընտրական օրենսգրքի ընդունումից անմիջապես հետո ընտրություններին նախապատրաստվելու մասով աջակցելու համար: 2018 թվականի սեպտեմբերի կեսի դրությամբ անձնակազմի առկայությունն ապահովելու համար ԵՄ-ն արդեն պատրաստվում է սկսել աշխատանքի ընդունում:

2.1.1.5. Անուղղակի կառավարումը Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (այսուհետ՝ ՅՈՒՆԻՍԵՖ) հետ

Սույն գործողության 1.2, 1.3 եւ 2.1 արդյունքները կարող են իրականացվել Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (այսուհետ՝ ՅՈՒՆԻՍԵՖ) հետ անուղղակի կառավարմամբ, որը գնահատված հենասյուն է:

ՅՈՒՆԻՍԵՖ-ն ունի գործունեություն ծավալելու մեծ փորձ Հայաստանում՝ սերտորեն աշխատելով կառավարության եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: ՅՈՒՆԻՍԵՖ-ն առկա է այլ երկրներում եւ կառավարում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ ՄԱԿ-ի համատեղ ծրագրեր, եւ քանի որ նախադպրոցական կրթությունը եւ աշխատանքը դեռահասների հետ լինելու են սույն ծրագրի կարեւոր բաղադրիչ (1.4 միլիոն եվրո), նախատեսվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ կնքել մեկ պատվիրակման համաձայնագիր՝ ընդգրկելու համար բոլոր միջոցառումները, որոնք չեն ներառում ընտրությունները՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿԲՀ-ի եւ ՄԱԶԾ-ի հետ ձեռք բերված համաձայնության համաձայն: ՅՈՒՆԻՍԵՖ-ը կհամակարգի ԵՄ համաձայնագիրը եւ կնքի համաձայնագրեր ՄԱԿ-ի մյուս գործակալությունների հետ՝ սույն գործողությանը համապատասխան նրանց համաձայնեցված գործողությունների համաձայն:

Հարկավոր է հաշվի առնել այն փաստը, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ը համայնքային մակարդակով սոցիալական ծառայությունների մատուցման մոդելի առաջատար համաշխարհային ներկայացուցիչ է եւ միեւնույն ժամանակ ունի լավ հնարավորություններ սույն գործողության իրականացման մեջ ներգրավված պետական մարմինների հետ սույն գործողությունը համակարգելու համար: ՅՈՒՆԻՍԵՖ-ը նաեւ սկսել է իրականացնել կայուն նախադպրոցական կրթության եւ խնամքի մոդել Հայաստանի գյուղական շրջաններում, ինչպես նաեւ ներառական նախադպրոցական կրթության մոդել, եւ վերը նշվածը հավանաբար կարտացոլվի նոր կառավարության՝ կրթության ոլորտի ռազմավարության մեջ: Ուստի ժամանակն է կատարել ներդրում այս մոդելն ընդլայնելու մեջ: Հաշվի առնելով Հայաստանում ապաինստիտուցիոնալացման հետ կապված բարեփոխումների դանդաղ առաջընթացը, համայնքային մակարդակով ծառայությունների հետագա ընդլայնումը, ներառյալ՝ աղքատ ընտանիքներին կամ հաշմանդամություն ունեցող երեխաներ կամ մեծահասակներ ներառող

ընտանիքներին օգնության տրամադրումը, հավանաբար կստեղծվի լրացուցիչ բարենպաստ միջավայր[2]:

Որպես գենդերային հարցերով թեմատիկ խմբի համանախագահ (գենդերային համակարգման մեխանիզմ), ՅՈՒՆԻՍԵՖ-ն ունի նաեւ լավ հնարավորություններ ապահովելու համար, որ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունները եւ կանանց իրավունքների պաշտպանները քաջատեղյակ լինեն գործողության մասին, եւ որ կանանց կարողությունների հզորացումը սերտորեն փոխկապակցված լինի ազգային գենդերային քաղաքականության շրջանակներում սահմանված առաջնահերթությունների հետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխայի իրավունքներին եւ ծնողների (խնամակալների) եւ ուսուցիչների ուղղորդմանը: Սա կապահովի նաեւ, որ համընկնում չլինի այլ նախաձեռնությունների հետ, եւ որ համաձայնեցվեն ծառայությունների այն մոդելները, որոնք ապահովում են աշխատող մայրերի եւ հայրերի համար ամբողջ օրով մատչելի, որակյալ նախադպրոցական կրթության եւ խնամքի ծառայությունների բարձր մատչելիություն: Բացի այդ, հատուկ ուշադրություն կդարձվի տղամարդկանց կողմից խնամատարությանն առավել ներգրավվելը խրախուսելու վրա՝ Մենինգեյջի եւ Պրոմունդոյի լավագույն փորձին համապատասխան: ՅՈՒՆԻՍԵՖ-ն այս աշխատանքի մեծ մասն իրականացրել է քաղաքապետարանների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ եւ ներգրավել է համայնքներում երիտասարդ ու տարեց կանանց եւ տղամարդկանց՝ գենդերային կարողությունների հզորացման հարցում: ՅՈՒՆԻՍԵՖ-ը կաշխատի նաեւ 18 տարին չլրացած դեռահասների եւ երիտասարդների հետ՝ Հայաստանում 21-րդ դարի հմտությունների մոդելն ընդլայնելու համար, քանի որ այն նաեւ առաջատար գործակալություն է տվյալ թիրախային խմբի հետ աշխատանքի մասով:

---

[2] ԵՄ քաղաքականությանը համապատասխան՝ սույն գործողության մեջ շեշտը դրվում է համայնքային մակարդակով ծառայությունների վրա, եւ երեխաների կամ մեծահասակների ինստիտուցիոնալ խնամքի մասով աջակցություն սույն գործողությամբ չի տրամադրվելու:

Տվյալ պայմանագրի շրջանակներում ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող գործունեությունը հիմնականում կենտրոնացված կլինի բաց կառավարման այն նախաձեռնությունների վրա, որոնք ուղղված են կառավարության քաղաքականությունների եւ ծրագրերի պլանավորմանը, նախագծմանը, իրականացմանը եւ մոնիթորինգին ավելի մեծ թվով քաղաքացիներ ներգրավելուն ու քաղաքացիների, համայնքի եւ կառավարության հարցերին լուծումներ գտնելու նորարարական մոդելների միջոցով երիտասարդների եւ կանանց կարողությունների հզորացմանը: Հայաստանում ԵՄ-ի պատվիրակությունն ունեցել է ՄԱԶԾ-ի կողմից «Կանայք տեղական ժողովրդավարությունում» (ԿՏԺ) նախագծի իրականացման շատ հաջող փորձ, որն ավարտվել է 2015 թվականի վերջին: Ծրագրի 2.1 արդյունքի համաձայն աշխատանքը թույլ կտա ՄԱԶԾ-ին շարունակել եւ ընդլայնել այս աշխատանքի որոշ մասը եւ նպաստել էթնիկական եւ կրոնական փոքրամասնությունների խմբերից կանանց եւ տղամարդկանց, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց ավելի ակտիվ ներգրավմանը տեղական ժողովրդավարությանն ու ազգային քաղաքականությանը եւ կառավարմանն առնչվող հարցերում՝ գենդերային տեսանկյունից ելնելով: 2.1 բաղադրիչում ներառված գործողությունների շրջանակներում կտրամադրվեն նաեւ փորձագիտական գիտելիքներ եւ աշխատանքի մեթոդներ «ԵՄ4Իննո» ծրագրի շրջանակներում՝ հաշվետվողականության նոր միջոցների եւ կառավարություն-քաղաքացիներ հարաբերությունների խթանման համար, ներառական քաղաքականության մշակման, հուսալիության եւ կառավարության արձագանքման միջոցով բոլոր հայ կանանց եւ տղամարդկանց շրջանում վստահությունն ամրապնդելու նպատակով:

2.1 բաղադրիչում ներառված աշխատանքը կլրացվի նաեւ Հայաստանի շրջաններում Վիննետ ռեսուրսային կենտրոնների եւ պատասխանատուների շվեդական մոդելի ընդլայնման հետ կապված հետագա աշխատանքով (ՄԱԿԲՀ-ի գլխավորությամբ), որը նախկինում աջակցություն էր ստանում ԵԱՀԿ-ից, եւ որին Շվեդիան մտադիր էր աջակցություն տրամադրել տարածաշրջանային նախագծի

միջոցով: Շվեդիայի եւ ԵՄ-ի համաժամանակյա ֆինանսավորման դեպքում հնարավոր կլինի խուսափել համընկնումներից, եւ, հաշվի առնելով գենդերային անհավասարությունը Հայաստանում, սա կարող է նպաստել աշխատանքի ընդլայնմանը դեպի չներառված շրջաններ եւ քաղաքներ: ՄԱԿԲՀ-ի ներգրավվածությունը նաեւ կներառի համագործակցություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ՝ կանանց կարողությունների հզորացմանը եւ կանանց մասնակցության համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծմանը տղամարդկանց ներգրավելու հետ կապված գործողությունների մասով:

Հանձնաժողովն ընդունում է, որ լիազորված մարմնի կողմից կրած ծախսերը կարող են ճանաչվել որպես համապատասխանող՝ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, բացառիկ եւ պատշաճ կերպով հիմնավորված դեպքերում, ԵՄ պատվիրակության նախնական համաձայնությամբ, ՄԱԿ-ի այն գործակալություններին դիմելուց խուսափելու համար, որոնք անհավասար կերպով օգուտ են ստանում տվյալ պայմանագրից:

2.2. Գնումների եւ դրամաշնորհների՝ աշխարհագրական առումով համապատասխանելիության շրջանակը

Աշխարհագրական համապատասխանելիությունը հիմնադրման վայրի առումով գնման եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգերին մասնակցելու համար ու հիմնական ակտով սահմանված եւ համապատասխան պայմանագրային փաստաթղթերում նշված կարգով մատակարարվող ապրանքների ծագման առումով կիրառելի է հետեւյալ դրույթների դեպքում:

Հանձնաժողովի լիազոր պատասխանատու պաշտոնյան կարող է ընդլայնել աշխարհագրական առումով համապատասխանելիության շրջանակը՝ թիվ 236/2014 (ԵՄ) կանոնակարգի 9(2)(բ) հոդվածին համապատասխան:

2.3. Նախանշված բյուջեն

	ԵՄ-ի օժանդակությունը (եվրո)	Երրորդ կողմի նախանշված օժանդակությունը, եվրոյով
Բարեհաջող անցումային գործընթացի կառավարում եւ ժողովրդավարության ամրապնդում	**7 500 000**	
Կառավարության նկատմամբ վստահության բարձրացում *1.1, 1.2 եւ 1.3 արդյունքները*	**1 700 000**	
5.3.1.4 Պայմանագրի ուղղակի կնքում ՄԱԶԾ-ի հետ. Անցկացվել են թափանցիկ եւ վստահելի ընտրություններ	1 500 000	
5.5.1.5 Պայմանագրի ուղղակի կնքում ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ. Բարելավվել են Կառավարության բաց գործելաոճը եւ հաշվետվողականությունը (ՄԱԶԾ-ի գլխավորությամբ)	200 000	Առկա չէ
Հայաստանի քաղաքացիների ներգրավվածության մակարդակի բարձրացում *Արդյունք 2.1, 2.2, 2.3 եւ 2.4*	**5 300 000**	
5.5.1.5 Պայմանագրի ուղղակի կնքում ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ. Զարգացել է մասնակցային ժողովրդավարությունը, եւ ամրապնդվել է կանանց ներգրավվածությունը (ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԶԾ-ի եւ ՄԱԿԲՀ-ի գլխավորությամբ իրականացված գործունեություն)	2 900 000	Առկա չէ
5.3.1.1 Հայտերի ներկայացման սահմանափակ հրավեր միջազգային կազմակերպությունների/ՔՀԿ-ի համար. Հայաստանում ԵՄ լրատվամիջոցներ	2 000 000	500 000
5.3.1.2 Հայտերի ներկայացման սահմանափակ հրավեր քաղաքացիների ներգրավվածության նախաձեռնությունների համար	400 000	40 000
5.3.1.3 Գնումներ (ուղղակի կառավարում)	**200 000**	
5.6, 5.7 Մոնիթորինգ, միջանկյալ վերանայում եւ գնահատում[3]	200 000	Առկա չէ
Չնախատեսված	300 000	
Ընդամենը	**7 500 000**	**540 000**

[3] Սույն գործողության աուդիտը կֆինանսավորվի բյուջեի մեկ այլ տողով:

2.4. Կազմակերպական կառուցվածքը եւ պարտավորությունները

Բոլոր բաղադրիչների մասով, Հայաստանի կառավարությունը եւ համապատասխան պետական գործակալություններն ամբողջությամբ ներգրավված կլինեն բոլոր նախագծերի մշակման, իրականացման եւ համակարգման մեջ եւ համաձայնության կգան դրանց բովանդակության շուրջ: Կստեղծվի ընդհանուր Ղեկավար կոմիտե, որը կներառի ԵՄ պատվիրակությունը, կառավարությունը, ԵՄ անդամ պետությունները, բոլոր իրականացնող գործընկերներին եւ քաղաքացիական հասարակության առանցքային մյուս շահագրգիռ կողմերին՝ ապահովելու համար նախագծի պլանավորման եւ իրականացման համակարգված եւ թափանցիկ գործընթաց՝ ծրագրի նպատակներին համապատասխան:

Սա կլրացվի նախագծի իրականացման ամբողջ ընթացքում երկու անգամ կազմակերպվող մասնակցային մոնիթորինգի համաժողովով (նախնական՝ 2019 թվականի հունիս-սեպտեմբեր եւ 2020 թվականի երկրորդ կես): Այս միջոցառումները պլանավորվելու եւ մշակվելու են կառավարության եւ շահագրգիռ այլ կողմերի, այդ թվում՝ կին եւ երիտասարդ շահառուների հետ, կազմակերպվելու են ՄԱԿ-ի կողմից եւ ֆինանսավորվելու մոնիթորինգի եւ գնահատման պայմանագրի միջոցով: Այս ամբողջը համակարգվելու է ԵՄ պատվիրակության կողմից:

Հավանական է, որ ՄԱԶԾ-ն կստեղծի ընտրությունների համատեղ ֆինանսավորման ֆոնդ, որը կունենա իր սեփական կառավարման կառուցվածքը՝ ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի պարբերական հանդիպումների կազմակերպմամբ: Հավանական է, որ Ղեկավար կոմիտեի անդամների թվին պատկանեն միջազգային դիվանագիտական առանցքային առաքելություններ եւ դոնորներ, կառավարության ներկայացուցիչներ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ ԿԸՀ) եւ այլն: Ղեկավար կոմիտեն համաձայնության կգա ընտրությունների նախապատրաստման համար աշխատանքային պլանի շուրջ եւ կտրամադրի մեկնաբանություններ տեխնիկական եւ ֆինանսական

թարմացումների վերաբերյալ: Ղեկավար կոմիտեն կարող է լրացուցիչ եւ (կամ) հատուկ միջոցներ ձեռնարկել ապահովելու համար, որ ընտրական գործընթացը նախապատրաստվի եւ անցկացվի թափանցիկ եւ վստահելի ձեւով:

Ծրագիրը կդիմի մյուս համապատասխան քաղաքացիական հասարակության հարթակներին եւ լրատվամիջոցներին՝ ապահովելու համար միջոցառումների թափանցիկությունը՝ զուգահեռ մյուս գործընթացների հետ համաձայնեցմանը նպաստելու համար:

2.5. Կատարողականի մոնիթորինգը եւ հաշվետվությունը

Սույն գործողության ամենօրյա տեխնիկական եւ ֆինանսական մոնիթորինգը շարունակական գործընթաց կլինի եւ կկազմի իրականացնող գործընկերոջ պարտավորությունների մի մասը: Այս նպատակով իրականացնող գործընկերը գործողության համար սահմանում է ներքին, տեխնիկական եւ ֆինանսական մշտական մոնիթորինգի համակարգ եւ կազմում առաջընթացի վերաբերյալ պարբերական (յուրաքանչյուր վեց ամիսը մեկ) եւ վերջնական հաշվետվություններ: Յուրաքանչյուր հաշվետվություն տրամադրում է ճշգրիտ նկարագրություն՝ գործողության իրականացման, ի հայտ եկած դժվարությունների, կատարված փոփոխությունների, ինչպես նաեւ գործողության՝ գրանցված արդյունքների (արդյունքների եւ ուղղակի արդյունքների)՝ համապատասխան ցուցանիշներով չափված աստիճանի վերաբերյալ՝ որպես հղում օգտագործելով տրամաբանական կառուցվածքի մատրիցան (որպես ծրագրի միջոց) եւ ստացողների եւ մասնակիցների կարծիքը՝ ազդեցությունն օպտիմալացնելու համար: Հաշվետվությունները կազմվում են այնպես, որ հնարավոր լինի իրականացնել գործողության համար նախատեսված եւ կիրառված միջոցների ու բյուջետային տվյալների մոնիթորինգ: Նկարագրական եւ ֆինանսական վերջնական հաշվետվությունները կընդգրկեն ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման ամբողջ ժամանակահատվածը:

Հանձնաժողովը կարող է իրականացնել ծրագրի մոնիթորինգի լրացուցիչ այցեր եւ՛ իր սեփական անձնակազմի, եւ՛ մոնիթորինգի անկախ վերանայումների համար անմիջականորեն Հանձնաժողովի կողմից աշխատանքի ընդունված (կամ այդպիսի վերանայումներ իրականացնելու համար Հանձնաժողովի կողմից վարձված պատասխանատու գործակալի կողմից աշխատանքի ընդունված) անկախ խորհրդատուների միջոցով:

2.6. Գնահատումը

Հաշվի առնելով գործողության կարեւորությունը՝ այս ծրագրի կամ դրա բաղադրիչների համար կիրականացվի միջանկյալ վերանայում կամ վերջնական գնահատում այն անկախ խորհրդատուների կամ համատեղ առաքելության կողմից, որոնց հետ Հանձնաժողովը պայմանագիր է կնքել: Առանձին բաղադրիչները կարող են ներառել վերջնական գնահատում:

Եթե նախատեսվի միջանկյալ գնահատում, ապա այն կիրականացվի խնդիրների լուծման, ուսուցման նպատակներով, մասնավորապես, ապահովելու համար, որ ծրագրում անդրադարձ կատարվի քաղաքացիների կողմից ներկայացված կարիքներին եւ ժողովրդավարության ամրապնդման նպատակին: Սա կարող է նաեւ նպաստել կառավարման հետագա միջոցառումների եւ սույն գործողության հնարավոր երկրորդ փուլի կամ այլ բաղադրիչների մշակմանը:

Վերջնական գնահատումը կիրականացվի տարբեր մակարդակներում հաշվետվողականության եւ ուսուցման նպատակներով (ներառյալ՝ քաղաքականության վերանայման համար)՝ հաշվի առնելով, մասնավորապես, ապագա ընտրությունների համար նախապատրաստական աշխատանքները, աջակցման միջոցառումների հետագա իրականացումը՝ գյուղական տարածքներում կանանց կարողությունների հզորացման եւ կառավարություն-քաղաքացիներ երկխոսության բարելավման համար:

Հանձնաժողովն առնվազն 3 ամիս առաջ իրականացնող գործընկերոջը տեղեկացնում է գնահատման առաքելությունների համար նախատեսված ամսաթվերի մասին: Իրականացնող գործընկերը խելամիտ եւ արդյունավետ կերպով համագործակցում է գնահատման հարցերով փորձագետների հետ եւ, ի թիվս այլնի, նրանց տրամադրում բոլոր անհրաժեշտ տեղեկությունները եւ փաստաթղթերը, ինչպես նաեւ ապահովում է նախագծի սենքերի եւ աշխատանքների հասանելիությունը:

Գնահատման վերաբերյալ հաշվետվությունները տրամադրվում են գործընկեր երկրին եւ մյուս հիմնական շահագրգիռ կողմերին: Իրականացնող գործընկերը եւ Հանձնաժողովը վերլուծում են գնահատման եզրակացություններն ու առաջարկությունները եւ, անհրաժեշտության դեպքում, գործընկեր երկրի հետ համաձայնությամբ, համատեղ որոշում են կայացնում հետագա գործողությունների եւ ցանկացած անհրաժեշտ փոփոխության, այդ թվում՝ ծրագրի ուղղվածության վերափոխման վերաբերյալ, եթե այդ մասին նշվում է:

Ենթադրաբար, շրջանակային պայմանագրերին համապատասխան կնքվելու է մոնիթորինգի եւ միջանկյալ վերանայման ծառայությունների եւ արտաքին գնահատման ծառայությունների երկու պայմանագիր: Մոնիթորինգի պայմանագիրը կսկսվի իրականացվել 2018 թվականի վերջին, իսկ գնահատման պայմանագիրը՝ 2020 թվականի վերջին:

2.7. Աուդիտը

Հանձնաժողովը, չխախտելով սույն գործողության իրականացման նպատակով կնքված պայմանագրերով կիրառելի պարտավորությունները, ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա կարող է, մեկ կամ մի քանի պայմանագրերի կամ համաձայնագրերի մասով, պայմանագիր կնքել անկախ աուդիտներ կամ ծախսերի ստուգումների հանձնարարություններ իրականացնելու նպատակով: Սույն գործողության աուդիտները պետք է ավարտվեն այլ որոշման համաձայն:

2.8. Հաղորդակցումը եւ տեսանելիությունը

ԵՄ-ի հետ հաղորդակցումն ու տեսանելիությունն իրավական պարտավորություն է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր արտաքին գործողությունների դեպքում:

«ԵՄ-ն քաղաքացիների համար. ժողովրդավարության ամրապնդում» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող գործողությունները պետք է պարունակեն հաղորդակցման եւ տեսանելիության միջոցառումներ, որոնք պետք է հիմնված լինեն գործողության հաղորդակցման եւ տեսանելիության հատուկ պլանի վրա, որը պետք է մշակվի պայմանագրի յուրաքանչյուր կողմի կողմից իրականացման սկզբում՝ Հայաստանի համար ընդհանուր տեսանելիության գործողության միջոցով՝ լրացուցիչ աջակցությամբ:

Հաղորդակցման եւ տեսանելիության իրավական պարտավորությունների առումով միջոցառումներն իրականացվում են Հանձնաժողովի, գործընկեր երկրի, կատարողների, դրամաշնորհի շահառուների եւ (կամ) այլ լիազորված անձանց կողմից: Համապատասխան պայմանագրային պարտավորությունները պետք է ներառված լինեն, համապատասխանաբար, ֆինանսավորման համաձայնագրում, գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերում, ինչպես նաեւ լիազորությունների պատվիրակման մասին համաձայնագրերում:

Եվրոպական Միության արտաքին գործողությունների համար նախատեսված «Հաղորդակցում եւ տեսանելիություն» ձեռնարկն օգտագործվում է գործողության՝ Հաղորդակցման եւ տեսանելիության ծրագիրն ու համապատասխան պայմանագրային պարտավորությունները սահմանելու համար:

ԱՌԴԻՐ. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՏՐԻՑԱ (ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑ)[4]

Տրամաբանական կառուցվածքի մատրիցայում ներառված գործողությունները, ակնկալվող արդյունքներն ու բոլոր ցուցանիշները, թիրախներն ու ելակետային ցուցանիշները կողմնորոշիչ են եւ կարող են թարմացվել գործողության իրականացման ընթացքում՝ առանց ֆինանսավորման որոշման մեջ փոփոխություն կատարելու: Տրամաբանական կառուցվածքի մատրիցան կենթարկվի փոփոխությունների գործողության իրականացման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում. կավելացվեն նոր տողեր գործողությունները թվարկելու համար, ինչպես նաեւ նոր սյուներ՝ միջանկյալ թիրախների (ուղենիշների) համար՝ անհրաժեշտության դեպքում, եւ ցուցանիշների հիման վրա արդյունքներին հասնելու մասին հաշվետվության նպատակով:

	Միջամտության տրամաբանությունը	Ցուցանիշներ	Ելակետային ցուցանիշներ (այդ թվում՝ բազային տարին)	Թիրախներ (այդ թվում՝ բազային տարին)	Ստուգման աղբյուրներ եւ միջոցներ	Ենթադրություններ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ						
Ընդհանուր նպատակ/Ազդեցություն	Հայաստանում ժողովրդավարության ամրապնդում	1) Համաշխարհային բանկի արդյունավետ կառավարման ցուցանիշները՝ ա) Ձայնի իրավունք եւ հաշվետվողականություն (կանանց եւ տղամարդկանց	1) Համաշխարհային բանկի արդյունավետ կառավարման հիմնական ցուցանիշներ 2016 եւ 2017 թվականների համար (2017 թվականի տվյալները դեռ	1) 30% աճ (2021 թվականին)[5]. x (2018-2022 թվականներ) 2) Քաղաքացիների 25 տոկոսը (Ի/Ա) զգում են, որ մասնակցել են	(ՀԸԳՀ իրականացման զեկույցներ. 1) Համաշխարհային բանկի արդյունավետ կառավարման	Քաղաքական անցումները շարունակում են մնալ խաղաղ եւ ընդունված ԼՂ հակամարտության էական սրացում չի գրանցվել

[4] Համապատասխան ծրագրային փաստաթղթի նշանի հետ համապատասխանեցված ցուցանիշները նշել '*' նշանով, իսկ ԵՄ արդյունքների շրջանակի հետ համապատասխանեցված ցուցանիշները՝ '**' նշանով:

[5] Հայաստանի զարգացման ռազմավարություն, 2012-2025 թվականներ

		մասով). բ) Կառավարության արդյունավետություն (կանանց եւ տղամարդկանց մասով). 2) Ուսումնասիրություններում արտահայտված՝ ազգային եւ տեղական մակարդակներով Հայաստանի կառավարման համակարգին վերաբերող հաստատում (ցուցանիշներ) (25 տարեկանը չլրացած եւ 25 տարեկանից բարձր կանանց եւ տղամարդկանց մասով) 3) Հանրային վստահությունը 2018/2019 թվականների ընտրական գործընթացում բարեխղճության նկատմամբ (կանանց եւ տղամարդկանց մասով). 4) Կանանց ներկայացվածությունն Ազգային ժողովում, Կառավարությունում (նախարարի մակարդակ) եւ տեղական ինքնակառավարման մարմիններում (մարզպետ, մարզպետի տեղակալներ, քաղաքապետներ եւ քաղաքապետի տեղակալներ).	հրապարակված չեն). ա) 30.54 բ) 49.52 2) Կովկասի ինստիտուտի ուսումնասիրության եւ համանման այլ ուսումնասիրությունների՝ 2017/2018 թվականների տվյալներ. «Ֆրիդոմ Հաուս»-ի զեկույց (2017/2018 թվականներ). 3) 2017 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2017 թվականի Ազգային ժողովի ընտրությունների դիտորդական վերջնական զեկույց (վստահության ցածր մակարդակ, ընտրողների ահաբեկման բարձր մակարդակ եւ ձայների գնում որոշ քաղաքական կուսակցությունների կողմից) 4) Պետք է թարմացվեն/ավելացվեն տվյալներ 2018 թվականի օգոստոսի համար. Առկա չէ X իգական սեռի	կարեւոր քաղաքական իրադարձություններին կամ գործընթացներին եւ որոշված եւ գնահատված 5 քաղաքական բարեփոխումներին. 3) Զգալի բարելավումներ. 4) Կանանց ներկայացվածությունը հասցնել առնվազն 25 տոկոսի.	ցուցանիշները 2017/2018 թվականների համար. 2) Կովկասի ինստիտուտի ուսումնասիրության 2017/2018 թվականների տվյալներ. «Ֆրիդոմ Հաուս»-ի զեկույցներ. 3) Ներքին ընտրությունների դիտորդական միջազգային (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ եւ այլն) զեկույցներ. 4) Հայաստանի ազգային վիճակագրություններ եւ այլ աղբյուրներ	

			քաղաքապետներ Համայնքների 502 ղեկավարներից 8-ը կանայք են (2016/2017 թվականների ընտրությունների արդյունքներ) Համայնքային խորհրդի բոլոր անդամների 10 տոկոսը կանայք են (3849-ից 389-ը)			
Կոնկրետ նպատակը (նպատակները). Արդյունքը (արդյունքները)	1) Կառավարության նկատմամբ վստահության բարձրացում	1) Կառավարության՝ սահուն քաղաքականություն մշակելու եւ իրականացնելու կարողությունը. 2) Անցկացվել են թափանցիկ եւ վստահելի ընտրություններ. 3) Բարելավվել են Կառավարության բաց գործելաոճը եւ հաշվետվողականությունը. 4) Ռազմավարական քաղաքականության գործընթացներին մասնակցող կանանց եւ տղամարդկանց թիվը. 5) Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը նախագծի շահառուների շրջանում	1) ՍԻԳՄԱ-ի ելակետային ցուցանիշներ. 2) Ծրագրի եւ նախագծի ելակետային ցուցանիշներ	Բարելավումներ (Կառավարության հետ համաձայնեցման ենթակա հատուկ թիրախներ)	Համաշխարհային բանկի արդյունավետ կառավարման զեկույցներ. ՀԸԳՀ զեկույցներ ՀՊԴ ՏՀՀԿ/ՍԻԳՄԱ զեկույցներ ԵԽ զեկույցներ Ոչ առեւտրային իրավունքի միջազգային կենտրոն «Ֆրիդոմ Հաուս»-ի զեկույցներ	ԼՂ հակամարտության էական սրացում չի գրանցվել Հասարակության շրջանում ներքին պառակտումների կամ բռնության սրացում չի գրանցվել

Կոնկրետ նպատակը (նպատակները). Արդյունքը (արդյունքները)	2) Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավվածության բարձր մակարդակ	1) Քաղաքական/ ընթացիկ իրադարձությունների հետ կապված հարցերով հետաքրքրվածությունը քաղաքացիների եւ ՔՀԿ-ների շրջանում, ներառյալ՝ պատանի աղջիկները եւ տղաները, երիտասարդ կանայք եւ տղամարդիկ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք. 2) Քաղաքացիների եւ ՔՀԿ-ների մասնակցությունը տեղական եւ ազգային քաղաքականության գործընթացներին, ներառյալ՝ պատանի աղջիկները եւ տղաները, հաշմանդամություն ունեցող անձինք ու երիտասարդ կանայք եւ տղամարդիկ. 3) Քաղաքացիների եւ ՔՀԿ-ների տեսանկյունների արտացոլումը ռազմավարությունների, քաղաքականությունների եւ իրականացման մեջ տեղական եւ ազգային մակարդակով, ներառյալ՝ պատանի աղջիկների եւ տղաների, երիտասարդ կանանց եւ տղամարդկանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց	Նախագծի եւ ծրագրի ելակետային տվյալներ Այլ համապատասխան հաշվետվություններ Մանկապարտեզների թիվը Այն բանի գնահատում, թե ինչով են զբաղված ծնողները, մինչ նախադպրոցական տարիքի երեխաները գտնվում են խնամքի կամ կրթական հաստատություններում	Էական բարելավումներ (Պետք է քննարկվի նախագիծն իրականացնող գործընկերների եւ Կառավարության հետ)	Նախագծի եւ ծրագրի ելակետային տվյալներ Այլ համապատասխան աղբյուրներ	Հայ կանայք եւ տղամարդիկ, ինչպես նաեւ պատանիները հետաքրքրված են քաղաքացիական նախաձեռնությունների եւ քաղաքականության մեջ ներգրավվմամբ

		տեսանկյունները. 4) ՁԼՄ-ներում արտահայտված տարբեր կարծիքներ, ներառյալ՝ պատանիների (աղջիկների եւ տղաների), կանանց եւ տղամարդկանց ձայները, մարզերում եւ մայրաքաղաքում բնակվող անձանց ձայները ՁԼՄ-ների պրոդուկտներում. 5) Բարենպաստ միջավայր կանանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց՝ գյուղական տարածքներում հանրային կյանքին մասնակցության համար, եւ պատանիների (Ի/Ա), տղամարդկանց եւ կանանց կողմից այս մասին արտահայտած տեսանկյունները.				
Վերջնարդյունքները	1.1. Անցկացվել են թափանցիկ եւ վստահելի ընտրություններ	1) Պահպանել կամ բարձրացնել թափանցիկությունը՝ 2017 թվականի ընտրությունների համեմատ (ԸԳՍ-ներ եւ այլն). 2) Բարեփոխված Ընտրական օրենսգիրք, որում արտացոլվել են Վենետիկի հանձնաժողովի եւ ԵԱՀԿ-ի/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները. 3) Ընտրական օրենսգրքի բարելավված կիրարկում	Վենետիկի հանձնաժողովի եւ ԵԱՀԿ-ի/ԺՀՄԻԳ-ի 2016/2017 թվականների զեկույցներ Ներքին դիտորդական զեկույցներ Միջազգային այլ փորձագետների՝ ընտրությունների վերաբերյալ զեկույցներ/ կարծիքներ	Էական բարելավումներ	Նոր ընտրական շրջանակի գնահատումներ եւ ԵԱՀԿ-ի/ԺՀՄԻԳ-ի՝ ընտրությունների անցկացման վերաբերյալ գնահատում ՀԸԳՀ իրականացման զեկույցներ	Ընտրությունների անցկացման ժամկետները համաձայնեցվել եւ իրականացվել են առանց էական խախտումների կամ բռնության.

		(վարչական ռեսուրսների չարաշահումը, ընտրողների ահաբեկման մակարդակը եւ կուսակցության կողմից ձայների գնումը, դիտորդների եւ լրատվամիջոցների մուտքը ընտրատեղամասեր). 4) Ընտրողները/ քաղաքացիները՝ բաժանված ըստ կանանց եւ տղամարդկանց, տեսանկյուններ Ընտրական օրենսգրքի եւ ընդհանուր ընտրական գործընթացի վերաբերյալ.	Ներքին դիտորդների զեկույցներ Լրատվամիջոցների՝ մոնիթորինգի արդյունքների մասին զեկույցներ		Ներքին դիտորդների զեկույցներ Լրատվամիջոցների՝ մոնիթորինգի արդյունքների մասին զեկույցներ	
	1.2. Բարելավվել են Կառավարության բաց գործելաոճը եւ հաշվետվողականությունը	1) Քաղաքացիական հասարակության համար լիազորված միջնորդի առկայություն տարբեր համապատասխան նախարարությունների եւ պետական հաստատությունների մակարդակով, այդ թվում՝ տարածաշրջանային եւ տեղական մակարդակով. 2) Պլանների, ծրագրային ռազմավարության քննարկումների/օրենքների եւ ենթաօրենսդրական ակտերի, բյուջեների տեղական/ազգային եւ ոլորտային մակարդակով	ՍԻԳՄԱ-ի 2018 թվականի գնահատում Ծրագրի եւ նախագծի ելակետային տվյալներ Բաց կառավարման նախաձեռնության զեկույցներ Ծրագրի եւ նախագծի ելակետային ցուցանիշներ	20% աճ Որակական բարելավումներ (Պետք է մանրամասն քննարկվի եւ համաձայնեցվի Կառավարության հետ)	Կանանց եւ տղամարդկանց կարծիքը (25 տարեկանը չլրացած եւ 25 տարեկանից բարձր) Հաշմանդամություն ունեցող անձանց նախաձեռնությունների/ ներկայացուցիչների կարծիքը Ծրագրի շահառուների կարծիքներ (Ի/Ա) ՍԻԳՄԱ-ի 2018	Կառավարության աշխատակազմը հասկանում է բաց կառավարման եւ հաշվետվողականության կարեւորությունը

		մշակման եւ արձագանքման համար բավարար ժամանակ տրամադրելու մասով երկխոսության եւ խորհրդատվությունների առաջարկված մեխանիզմների առկայությունը եւ որակը. 3) Քաղաքացիական հասարակության/քաղաքացիների՝ պետական գնումների նկատմամբ վերահսկողությունը տեղական մակարդակով. 4) Գենդերային հավասարության մեխանիզմները եւ գենդերային հարցերին վերաբերող հանրային քննարկումները եւ երկխոսությունը, մասնավորապես, տեղական մակարդակով բարելավելու համար կարողություններն ամրապնդելու՝ Կառավարության նախաձեռնությունների առկայությունը եւ որակը. 5) Կանանց, երիտասարդների եւ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների եւ, ընդհանուր առմամբ, կանանց, երիտասարդների եւ			թվականի գնահատում Ծրագրի եւ նախագծի ելակետային տվյալներ Բաց կառավարման նախաձեռնության զեկույցներ Ծրագրի եւ նախագծի ելակետային ցուցանիշներ	

		հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքականության գործընթացներին մասնակցությունը եւ նրանց տեսանկյունների արտացոլումը.				
	1.3 Ավելացել է Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը	1) Մարդու իրավունքների ոլորտում գործողությունների ազգային ծրագրի իրականացում՝ ներառյալ ֆինանսավորման ծավալները եւ արդյունավետ մոնիթորինգը եւ հաշվետվությունների ներկայացումը. 2) Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ վերապատրաստումներ եւ Հավասարության մասին օրենքի կիրառման մասին իրազեկվածության բարձրացում հատուկ համապատասխան նախարարությունների համար, որոնք անցկացվել են առնվազն 8 համապատասխան նախարարություններում, եւ իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքների արտացոլում նոր քաղաքականության մեջ. 3) Արդարադատության մատչելիության եւ դատարանի որոշումների իրականացման	Ընդունված կամ վերանայված ՄԻՊԾ-ի առաջնահերթությունները. 2018 թվական. 0 Պաշտոնական զեկույցներից 2016/2017 թվականների ելակետային տվյալներ	Նոր ՄԻՊԾ-ի բարելավված իրականացում՝ 2017-2019 թվականների ՄԻՊԾ-ի համեմատ 2021 թվական. Վերապատրաստում է անցել առնվազն 8 համապատասխան նախարարություն, եւ 16 նոր քաղաքականությունների մեջ արտացոլված են իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքներ. Ներպետական դատարանների կողմից գործերի մասով որոշումների ավելի արագ կայացում. Հայաստանի դեմ ՄԻԵԴ-ի դատավճիռների բարելավված իրականացում գործերի 20% նվազում.	ՄԻՊԾ-ի վերանայման վերաբերյալ զեկույցներ Կառավարության եւ ՔՀԿ-ի կողմից. ՀԸԳՀ-ի զեկույցներ. Քաղաքականության բովանդակության եւ իրականացման փոփոխություն. Մասնակցություն վերապատրաստումներին եւ շահագրգռվածություն հետագա հսկողության մասով Պաշտոնական զեկույցներ եւ տվյալներ, զեկույցներ եւ տվյալներ՝ հավաքված ՔՀԿ-ների, օրինակ՝ կանանց իրավունքների եւ իրավունքների	Կառավարությունը շարունակում է նպաստել մարդու իրավունքների խթանմանը եւ իրականացմանը, ինչպես նաեւ իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքներն արտացոլող քաղաքականության մշակմանը

		ոլորտում բարելավումներ 4) Մարդու իրավունքների խախտումների, մասնավորապես, ատելության հողի վրա հանցագործությունների եւ ԳՀԲ դեպքերի թվի նվազում, հիմնարար իրավունքների, այդ թվում՝ արտահայտվելու, հավաքներ անցկացնելու եւ միավորումներ կազմելու ազատության նկատմամբ հարգանք.		ոստիկանության կողմից ավելի արագ արձագանքում.	հավասարության հարցերով զբաղվող կազմակերպությունների կողմից Ծրագրի եւ նախագծի մոնիթորինգի եւ միջանկյալ վերանայման զեկույցներ	
Վերջնարդյունքները	2.1 Զարգացվել է մասնակցային ժողովրդավարությունը	1) Որոշվել, մշակվել եւ ստուգվել են քաղաքացիների (Ի/Ա)՝ տեղական եւ ազգային մակարդակով մասնակցային կառավարման բարելավման վերաբերյալ «ներքեւից վերեւ» սկզբունքով առաջարկները. 2) Գնահատվել եւ մշակվել են տեղական եւ ազգային մակարդակով քաղաքացիների/ քաղաքացիական հասարակության եւ Կառավարության միջեւ կառուցողական երկխոսությունը դյուրացնելու մեխանիզմները. 3) Ազգային ժողովի (2019 թվականի ընտրություններից հետո) համագործակցությունը	2018/2019 թվականներ. Նախագծի ելակետային ցուցանիշ. 2018/2019 թվականներ. Նախագծի ելակետային ցուցանիշ 2018/2019 թվականներ. Նախագծի ելակետային ցուցանիշ	1) x ազգային մակարդակով առաջարկներ, x տարածաշրջանային մակարդակով եւ x տեղական մակարդակով առաջարկներ 2) ազգային մակարդակով ներդրված կամ բարելավված՝ x կառուցողական (օրինակ՝ ոլորտային) երկխոսության մեխանիզմներ եւ տեղական մակարդակով ներդրված կամ բարելավված՝ x կառուցողական (օրինակ՝ ոլորտային)	Ծրագրի եւ նախագծի մոնիթորինգի եւ միջանկյալ վերանայման զեկույցներ	Քաղաքական գործիչները եւ կառավարությունը շարունակելու են նպաստել քաղաքացիների ներգրավմանը եւ կառուցողական երկխոսությանը

		քաղաքացիների հետ ընդլայնվել է.		երկխոսության մեխանիզմներ 3) Քննարկման ենթակա ձեւաչափ եւ մեխանիզմներ		
	2.2 Ակտիվ լրատվական միջավայրը զարգացել է	1) Հայաստանում լրատվամիջոցների ազատությունը եւ բազմակարծությունն ամրագրվել են օրենսդրության մեջ. 2) Լրատվամիջոցների բարելավված պրոֆեսիոնալիզմ, ներառյալ՝ լուսաբանման բարելավված որակը. 3) Ատելության քարոզչության եւ գենդերային կարծրատիպերի կրճատում ավանդական լրատվության միջոցներում եւ սոցիալական ցանցերում. 4) Անկախ եւ, մասնավորապես, տեղական լրատվամիջոցների ֆինանսական կայունության ամրապնդում. 5) լրագրական հետաքննությունների թիվը եւ որակը տարեկան կտրվածքով.	«Ֆրիդոմ Հաուս»-ի 2017/2018 թվականների զեկույցներ Նոր օրենսդրության փորձագիտական վերանայումներ. ՀՊԴ-ի 2015 թվականի զեկույց եւ միջանկյալ վերանայում Լրատվամիջոցների կողմից այլ գնահատումներ. Ծրագրի եւ նախագծի ելակետային գնահատման տվյալներ		«Ֆրիդոմ Հաուս»-ի 2020, 2021, 2022 թվականների զեկույցներ. ՀՊԴ-ի 2020 թվականի զեկույց Հայաստանի վերաբերյալ Լրատվամիջոցների կողմից այլ գնահատումներ. Ծրագրի եւ նախագծի վերաբերյալ զեկույցներ եւ վերջնական գնահատում	Կառավարությունը շարունակում է նպաստել լրատվամիջոցների ազատությունը եւ բազմակարծությունը խթանելուն
	2.3 Ամրապնդվել է կանանց ներգրավվածությունը	1) Գյուղական շրջանների՝ նախադպրոցական կրթության եւ խնամքի	Ծրագրի եւ նախագծի ելակետային ցուցանիշներ Համապատասխան	Ստեղծված 40 հաստատություններ, որոնք ներառում են, կամ	Ծրագրի եւ նախագծի վերաբերյալ	Գենդերային հավասարության ընդունում եւ կանանց

		հաստատությունների թիվը (ներառյալ՝ ներառական մոդելների վերաբերյալ տվյալները). 2) Գյուղական շրջանների՝ նախադպրոցական կրթության եւ խնամքի հաստատություններում աշխատող կանանց եւ տղամարդկանց եկամտի (փաստացի եւ տոկոսներով) եւ թվի բարձրացում 3) Գյուղերում եւ քաղաքներում բնակվող կանանց կողմից բացահայտված խոչընդոտների եւ իրականացված համապատասխան բարենպաստ նախաձեռնությունների թիվը. 4) Գյուղերում եւ քաղաքներում բնակվող պատանի (18 տարեկանից ցածր) աղջիկների կողմից բացահայտված հիմնական խոչընդոտները եւ իրականացված եւ կրկնված համապատասխան բարենպաստ նախաձեռնությունները. 5) Երիտասարդ կանանց եւ տղամարդկանց (ըստ սեռերի) կողմից առաջարկված եւ	ուսումնասիրություններ	որտեղ հնարավոր է տեղավորել հաշմանդամություն ունեցող երեխաներին Աշխատող կանանց եւ տղամարդկանց եկամտի առնվազն 50% աճ Առնվազն 40 նախաձեռնություններ (3-ական յուրաքանչյուր մարզի համար եւ 10-ը՝ լրացուցիչ (ազգային/տեղական)) Առնվազն 25 նախաձեռնություններ (2-ական յուրաքանչյուր մարզի համար եւ 5-ը՝ լրացուցիչ (ազգային/տեղական)) Առնվազն 20%-ն աղջիկների կամ կանանց կողմից առաջարկված կամ օգտագործված: Առնվազն 20% աճ՝ ելակետային ցուցանիշի համեմատ, եւ տղամարդկանց կողմից ստանձնած խնդիրների ավելի լավ պատկերացում	զեկույցներ եւ վերջնական գնահատում	նկատմամբ սաստիկ բռնությունից կամ ահաբեկումից խուսափում:

		օգտագործված՝ քաղաքացիների ներգրավման նորարարական նախաձեռնությունների թիվը եւ տոկոսը. 6) 18 տարեկանից բարձր այն պատանի տղաների եւ տղամարդկանց թիվը եւ տոկոսը, որոնք ավելի շատ են զբաղվում երեխայի խնամքով եւ տնային այլ գործերով իրենց կանանց, քույրերին եւ մայրերին՝ իրենց տնտեսական, քաղաքացիական կամ քաղաքական ներգրավվածության բարձրացման հարցում աջակցելու համար				

ՀԱՎԵԼՎԱԾ II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բովանդակություն

ՀԱՎԵԼՎԱԾ II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....1

Բովանդակություն.....1

Մաս 1. Դրույթներ, որոնք կիրառելի են այն գործողությունների նկատմամբ, որոնց դեպքում Գործընկերը պատվիրատուն է..... 4

Հոդված 1. Ընդհանուր սկզբունքները..... 4

Հոդված 2. Գործընկերոջ կողմից պայմանագրերը եւ համաձայնագրերը ստորագրելու վերջնաժամկետը 12

Հոդված 3. Բացառումը եւ վարչական պատասխանատվության միջոցները.....14

Հոդված 4. Մասնակի պատվիրակումը.....17

Հոդված 5. Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչը.....23

Հոդված 6. Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախումբը..... 28

Հոդված 7. Գործընկերոջ կողմից գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը..... 29

Հոդված 8. Ֆինանսական միջոցների գանձումը.....31

Հոդված 9. Գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի համաձայն ներկայացվող ֆինանսական պահանջները 32

Հոդված 10. Գերածախսերը եւ դրանց ֆինանսավորման եղանակները . 33

Մաս 2. Բյուջետային աջակցության նկատմամբ կիրառվող դրույթներ 34

Հոդված 11. Քաղաքականության մշակման հարցերով երկխոսությունը. 34

Հոդված 12. Պայմանների համապատասխանության ստուգումը եւ հատկացումները..... 34

Հոդված 13. Բյուջետային աջակցության թափանցիկությունը 35

Հոդված 14. Բյուջետային աջակցության գանձումը..... 35

Մաս 3. Սույն գործողության նկատմամբ ամբողջությամբ՝ կառավարման ձեւից անկախ կիրառելի դրույթներ 36

Հոդված 15. Կատարման ժամկետը եւ պայմանագիր կնքելու վերջնաժամկետը 36

Հոդված 17. Գործընկերոջ խնդիրները՝ օրինախախտումների, խարդախության եւ կոռուպցիայի դեմ պայքարում 39

Հոդված 18. Վճարումների կասեցումը..... 41

Հոդված 19. Հանձնաժողովի կողմից գանձված ֆինանսական միջոցների հատկացումը գործողությանը.....42

Հոդված 20. Հիմնադրման եւ բնակության իրավունքը..... 43

Հոդված 21. Հարկային եւ մաքսային դրույթներն ու արտարժույթի փոխանակման կարգավորումը..... 43

Հոդված 22. Գաղտնիությունը.....44

Հոդված 23. Ուսումնասիրությունների օգտագործումը 45

Հոդված 24. Գործընկերոջ եւ Հանձնաժողովի միջեւ խորհրդակցությունը45

Հոդված 25. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի փոփոխումը 46

Հոդված 26. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցումը 47

Հոդված 27. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության դադարեցումը 49

Հոդված 28. Վեճերի կարգավորումը 50

Մաս 1. Դրույթներ, որոնք կիրառելի են այն գործողությունների նկատմամբ, որոնց դեպքում Գործընկերը պատվիրատուն է

Հոդված 1. Ընդհանուր սկզբունքները

1.1. 1-ին մասի նպատակն է սահմանել Գործընկերոջն առաջադրված խնդիրները՝ անուղղակի կառավարման մասով, ինչպես նկարագրված է I հավելվածում (Տեխնիկական եւ վարչական դրույթներ), եւ սահմանել Գործընկերոջ եւ Հանձնաժողովի իրավունքներն ու պարտավորություններն այդ խնդիրները կատարելիս:

1-ին մասը վերաբերում է այն խնդիրներին, որոնք առնչվում են ԵՄ օժանդակությանը՝ առանձին կամ Գործընկերոջ կամ երրորդ կողմի ֆինանսական միջոցների հետ զուգակցված, եթե այդպիսի միջոցները ներդրվում են համաֆինանսավորման շրջանակներում, այն է՝ համախմբվում են:

Այդ խնդիրները ներառում են գնումների, դրամաշնորհների պայմանագրերի եւ օժանդակության համաձայնագրերի շնորհման ընթացակարգերի իրականացումը որպես պատվիրատու հանդես եկող Գործընկերոջ կողմից, ինչպես նաեւ դրա արդյունքում գնումների, դրամաշնորհների տրամադրման պայմանագրերի եւ օժանդակության համաձայնագրերի շնորհումը, ստորագրումը եւ կատարումը: Սույն Ֆինանսավորման համաձայնագրի առաջին մասի նպատակներից ելնելով՝ դրամաշնորհների տրամադրման պայմանագրերին արված ցանկացած հղում վերաբերում է նաեւ օժանդակության համաձայնագրին, եւ դրամաշնորհի շահառուներին արված ցանկացած հղում վերաբերում է նաեւ այն կազմակերպություններին, որոնք ստորագրել են օժանդակության համաձայնագրերը:

Որոշակի խնդիրների կատարման համար Գործընկերոջ կառավարությանը կամ վարչական կառուցվածքին առնչվող եւ I հավելվածում (Տեխնիկական եւ վարչական դրույթներ) նշված մարմինների նշանակումը չի որակվում որպես

ենթապատվիրակում: Նման մարմինները պետք է հարգեն որպես պատվիրատու հանդես եկող Գործընկերոջ համար 1-ին մասում սահմանված իրավունքներն ու պարտավորությունները, մինչդեռ միաժամանակ Գործընկերն ամբողջությամբ պատասխանատու է սույն Ֆինանսավորման համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարման համար: Ֆինանսավորման համաձայնագրում Գործընկերոջը կատարված հղումները նաեւ վերաբերում են այդ մարմիններին:

Գործընկերը որպես պատվիրատու գործում է մասնակի պատվիրակման շրջանակներում՝ բացառությամբ այն դեպքի, երբ այն գործում է Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի կամ Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբի շրջանակներում:

- Մասնակի պատվիրակման դեպքում Գործընկերը հանդես է գալիս որպես պատվիրատու՝ գնումների պայմանագրերի ու դրամաշնորհի պայմանագրերի համար, մինչդեռ Հանձնաժողովը նախապես վերահսկում է պայմանագրերի շնորհման բոլոր ընթացակարգերը եւ կատարում է բոլոր հարակից վճարումները կատարողներին եւ դրամաշնորհի շահառուներին:

- Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի շրջանակներում Գործընկերը հանդես է գալիս որպես պատվիրատու՝ գնումների ու դրամաշնորհի պայմանագրերի համար, մինչդեռ այն որոշված սահմաններում կարող է իրականացնել գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգեր՝ Հանձնաժողովի սահմանափակ նախնական հսկողությամբ կամ առանց դրա, եւ կատարել վճարումներ կատարողներին եւ դրամաշնորհի շահառուներին, ինչպես նաեւ վճարումներ՝ անմիջական աշխատանքի համատեքստում:

- Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբի շրջանակներում Գործընկերը հանդես է գալիս որպես պատվիրատու՝ գնումների ու դրամաշնորհի պայմանագրերի համար, մինչդեռ Հանձնաժողովը չի իրականացնում պայմանագրերի շնորհման որեւէ ընթացակարգի նախնական

հսկողություն, իսկ Գործընկերը կատարում է բոլոր հարակից վճարումները կատարողներին եւ դրամաշնորհի շահառուներին:

Եթե Գործընկերն ԱԿԽ երկրների խմբից է, եւ գործողությունը ֆինանսավորվում է ԶԵՀ-ի կողմից՝ Հատուկ պայմանների 1.1 հոդվածի համաձայն, ապա առաջադրվող խնդիրները 35(1) հոդվածի 6-րդ ենթապարբերության «գ»-«ժա» կետերում եւ ԱԿԽ-ԵՀ գործընկերության համաձայնագրի IV հավելվածի 35(2) հոդվածում թվարկվածներն են:

Եթե Գործընկերն ԱԵՏ (Անդրծովյան երկրներ եւ տարածքներ) է, եւ գործողությունը ֆինանսավորվում է ԶԵՀ-ի կողմից՝ Հատուկ պայմանների 1.1 հոդվածի համաձայն, ապա առաջադրված խնդիրների կատարումը պետք է նաեւ համապատասխանի Խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 25-ի՝ Եվրոպական միության հետ Անդրծովյան երկրների եւ տարածքների ասոցացման վերաբերյալ թիվ 2013/755/ԵՄ որոշման (Անդրծովյան ասոցացման վերաբերյալ որոշում) 86(3) հոդվածի պայմաններին:

1.2. Գործընկերը պատասխանատու է սույն Ֆինանսավորման համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարման համար, նույնիսկ եթե նա որոշակի խնդիրների իրականացումը պատվիրակում է I հավելվածով (Տեխնիկական եւ վարչական դրույթներ) նախատեսված այլ մարմինների: Հանձնաժողովին, մասնավորապես, իրավունք է վերապահվում կասեցնելու վճարումները ու կասեցնելու եւ (կամ) դադարեցնելու սույն Ֆինանսավորման համաձայնագիրն այն անձանց գործողությունների, անգործության եւ (կամ) համապատասխան հանգամանքների հիման վրա, որոնց պատվիրակվել է խնդիրների կատարումը:

1.3. Գործընկերն ստեղծում է գործուն ու արդյունավետ ներքին հսկողության համակարգ եւ ապահովում է դրա գործունեությունը: Գործընկերը գործողությունն իրականացնելիս պահպանում է ողջամիտ ֆինանսական կառավարման, թափանցիկության, խտրականության բացառման սկզբունքներն ու Եվրոպական միության տեսանելիությունը եւ խուսափում է շահերի բախման իրավիճակներից:

Շահերի բախում առկա է այն դեպքում, երբ որեւէ պատասխանատու անձի կողմից գործառույթների անկողմնակալ եւ օբյեկտիվ իրականացումը վտանգվում է ընտանիքի, զգացմունքների, քաղաքական հայացքների կամ ազգային պատկանելության պատճառով, տնտեսական շահի կամ որեւէ այլ ուղղակի կամ անուղղակի անձնական շահի դեպքում:

Ներքին հսկողության համակարգը գործընթաց է, որը նպատակաուղղված է գործուն, արդյունավետ ու ծախսարդյունավետ գործառնությունների իրականացման, հաշվետվությունների արժանահավատության, ակտիվների ու տվյալների պաշտպանության, խարդախության եւ օրինախախտումների կանխման, բացահայտման ու շտկման եւ ֆինանսական գործառնության օրինականությանն ու օրինաչափությանն առնչվող ռիսկերի պատշաճ կառավարման համար հիմնավոր երաշխիքներ ապահովելուն՝ հաշվի առնելով աշխատանքների երկարաժամկետությունը, ինչպես նաեւ համապատասխան վճարումների բնույթը:

Մասնավորապես, եթե Գործընկերը վճարումները կատարում է ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչին համապատասխան կամ Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբի շրջանակներում, ապա լիազորող պաշտոնատար անձի եւ հաշվապահի գործառույթները տարանջատվում են եւ երկուստեք անհամատեղելի են, եւ Գործընկերը կիրառում է հաշվապահական համակարգ, որն ապահովում է ճշգրիտ, ամբողջական, վստահելի եւ ժամանակին տրամադրվող տեղեկություններ:

1.4. Բացառությամբ այն դեպքերի, երբ գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի շնորհման համար Գործընկերը կիրառում է իր սեփական ընթացակարգերն ու ստանդարտ փաստաթղթերը (Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբի դեպքում՝ նաեւ ակտիվների համախմբի դոնորների կողմից համաձայնեցված), Գործընկերը պայմանագրերի շնորհման ընթացակարգերն իրականացնում է եւ դրանց արդյունքում պայմանագրերն ու համաձայնագրերը կնքում է սույն Ֆինանսավորման համաձայնագրի լեզվով:

1.5. Գործընկերը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ իրեն հանձնարարված աշխատանքների կամ սույն գործողության շրջանակներում այլ աշխատանքների համար՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորման տեսանելիությունն ապահովելու նպատակով: Այս միջոցները սահմանվում են I հավելվածով (Տեխնիկական եւ վարչական դրույթներ) կամ հետագայում համաձայնեցվում են Գործընկերոջ եւ Հանձնաժողովի միջեւ:

Հաղորդակցության եւ տեղեկությունների վերաբերյալ այդ միջոցները պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված եւ հրապարակված՝ «ԵՄ արտաքին գործողությունների համար նախատեսված հաղորդակցության եւ տեսանելիության պահանջներ» ձեռնարկին, որն ուժի մեջ է այդ միջոցների իրականացման պահին:

1.6. Մասնակի պատվիրակման եւ Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի շրջանակներում Գործընկերը, կատարման ժամկետի ավարտից սկսած, 5 տարով պահում է սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո կամ ավելի վաղ ամսաթվից Հատուկ պայմանների 6-րդ հոդվածով սահմանված՝ ծախսերի կատարումը թույլատրելու օրվանից հետո կազմված համապատասխան բոլոր ֆինանսական եւ պայմանագրային օժանդակ փաստաթղթերը, մասնավորապես հետեւյալը.

Գնումների ընթացակարգեր՝

ա. նախնական գնահատման հայտարարությունը, որը պարունակում է գնումների հայտարարությունը հրապարակելու վերաբերյալ ապացույց եւ շտկումների ցանկ.

բ. նախաորակավորված մասնակիցներին ընտրող մասնագետների նշանակումը.

գ. նախաորակավորված մասնակիցների ցուցակի վերաբերյալ հաշվետվությունը (ներառյալ՝ հավելվածները) եւ դիմումները.

դ. նախաորակավորման հայտարարության հրապարակման վերաբերյալ ապացույցը.

ե. վերջնացուցակում չընդգրկված թեկնածուներին ուղարկված նամակները.

զ. մրցույթի հրավերը կամ համարժեք փաստաթուղթը.

է. մրցույթի փաթեթը, այդ թվում՝ հավելվածները, պարզաբանումները, հանդիպումների արձանագրությունները, հրապարակման ապացույցը.

ը. գնահատման հանձնաժողովի նշանակումը.

թ. մրցույթի բացման հաշվետվությունը, ներառյալ՝ հավելվածները.

ժ. գնահատման/բանակցությունների հաշվետվությունը, ներառյալ՝ հավելվածները եւ ստացված հայտերը[1]

ժա. ծանուցագիրը.

ժբ. օժանդակ փաստաթղթերը.

ժգ. պայմանագիր ներկայացնելու վերաբերյալ ուղեկցող նամակը.

ժդ. հաղթող չճանաչված թեկնածուներին ուղարկված նամակները.

ժե. պայմանագրի շնորհման/չեղյալ հայտարարելու մասին ծանուցումը, ներառյալ՝ հրապարակման ապացույցը.

ժզ. ստորագրված պայմանագրերը, փոփոխությունները, լրացումները եւ համապատասխան թղթակցությունը:

Հայտերի ներկայացման հրավերները եւ դրամաշնորհների ուղղակի տրամադրումը՝

ա. գնահատման հանձնաժողովի նշանակումը.

[1] Մրցույթում հաղթող չճանաչված հայտերի հեռացումը գնումների ընթացակարգի դադարեցումից հինգ տարի հետո:

բ. բացման եւ վարչական հարցերով հաշվետվությունը, ներառյալ՝ հավելվածներն ու ստացված դիմումները[2].

գ. հայեցակարգային փաստաթղթի գնահատմանը հաջորդող նամակները՝ հաղթող ճանաչված եւ հաղթող չճանաչված դիմումատուներին.

դ. հայեցակարգային փաստաթղթի գնահատման հաշվետվությունը.

ե. ամբողջական դիմումի գնահատման հաշվետվությունը կամ բանակցությունների հաշվետվությունը՝ համապատասխան հավելվածների հետ.

զ. համապատասխանության ստուգումը եւ օժանդակ փաստաթղթերը.

է. ամբողջական դիմումի գնահատմանը հաջորդող՝ հաղթող ճանաչված եւ չճանաչված դիմումատուներին ուղարկված նամակները՝ հաստատված պահուստային ցուցակի հետ.

ը. դրամաշնորհի պայմանագիր ներկայացնելու վերաբերյալ ուղեկցող նամակը.

թ. շնորհման/չեղյալ հայտարարելու մասին ծանուցումը՝ հրապարակման ապացույցի հետ.

ժ. ստորագրված պայմանագրերը, փոփոխությունները, լրացումները եւ համապատասխան թղթակցությունը:

1.7. Գործընկերն ապահովում է անձնական տվյալների պատշաճ պաշտպանությունը: Անձնական տվյալներ նշանակում է նույնականացված կամ նույնականացման ենթակա ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն:

Անձնական տվյալները պետք է՝

- մշակվեն տվյալների սուբյեկտի համար օրինական եւ արդար, ինչպես նաեւ թափանցիկ ձեւով.

[2] Մրցույթում հաղթող չճանաչված հայտերի հեռացումը դրամաշնորհի տրամադրման ընթացակարգի դադարեցումից երեք տարի հետո:

- հավաքվեն կոնկրետ, հստակ եւ իրավաչափ նպատակներով եւ հետագայում չմշակվեն այդ նպատակներին չհամապատասխանող որեւէ եղանակով.

- լինեն համարժեք, համապատասխան եւ սահմանափակված այն շրջանակով, որն անհրաժեշտ է մշակման նպատակների համար.

- լինեն ճշգրիտ եւ անհրաժեշտության դեպքում թարմացվեն.

- մշակվեն այնպես, որ ապահովվի անձնական տվյալների անվտանգության համապատասխան մակարդակը. եւ

- պահվեն այնպիսի եղանակով, որը թույլ կտա նույնականացնել տվյալների սուբյեկտներին՝ չգերազանցելով այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է անձնական տվյալները մշակելու նպատակների համար: 16.1 հոդվածի համաձայն՝ Գործընկերոջ կողմից պահվող փաստաթղթերում ներառված անձնական տվյալները պետք է վերացվեն 16.1 հոդվածով սահմանված ժամկետը լրանալուն պես:

Անձնական տվյալների մշակմանն առնչվող ցանկացած գործողություն, ինչպես, օրինակ՝ հավաքելը, ամրագրելը, կազմակերպելը, պահպանելը, հարմարեցնելը կամ վերափոխելը, վերականգնելը, համաձայնեցնելը, օգտագործելը, տարածելը, ջնջելը կամ ոչնչացնելը, հիմնված է Գործընկերոջ կանոնների եւ ընթացակարգերի վրա եւ իրականացվում է միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է սույն Ֆինանսավորման համաձայնագրի կատարման համար:

Մասնավորապես, Գործընկերը ձեռնարկում է համապատասխան տեխնիկական եւ կազմակերպական անվտանգության միջոցներ, որոնք առնչվում են այդպիսի ցանկացած գործողության հատուկ ռիսկերին եւ տվյալ ֆիզիկական անձին վերաբերող տեղեկության բնույթին, որպեսզի՝

ա) կանխի չլիազորված անձի կողմից այնպիսի համակարգչային համակարգերից օգտվելը, որոնց միջոցով իրականացվում են այդպիսի

գործողություններ, մասնավորապես՝ տվյալների կրիչների չթույլատրված ընթերցում, արտագրում, փոփոխում կամ վերացում, տվյալների չթույլատրված մուտքագրում, ինչպես նաեւ պահպանվող տեղեկությունների չթույլատրված տարածում, վերափոխում կամ ջնջում.

բ) ապահովի, որ ՏՏ համակարգի՝ այդպիսի գործողություններ կատարող լիազորված օգտագործողները կարողանան օգտվել միայն այն տեղեկություններից, որոնցից նրանց թույլատրված է օգտվել.

գ) իր կազմակերպական կառուցվածքը մշակի այնպես, որ այն բավարարի վերոնշյալ պահանջները:

Հոդված 2. Գործընկերոջ կողմից պայմանագրերը եւ համաձայնագրերը ստորագրելու վերջնաժամկետը

2.1. Գնումների պայմանագրերը եւ դրամաշնորհի պայմանագրերը պետք է ստորագրվեն սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործառնական իրականացման ժամկետի ընթացքում:

Բազում դոնորներ ունեցող Գործողություն իրականացնելիս գնումների պայմանագրերը եւ դրամաշնորհի պայմանագրերը պետք է կնքվեն Հատուկ պայմաններով կամ ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի համար սահմանված վերջնաժամկետում:

Այն դեպքում, երբ Գործողությունը բազում դոնորներ ունեցող Գործողություն չէ, գնումների պայմանագրերը եւ դրամաշնորհի պայմանագրերը պետք է կնքվեն սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից ամենաուշը երեք տարվա ընթացքում:

Սույն Ֆինանսավորման համաձայնագրի՝ ԵՄ օժանդակության չափն ավելացնող փոփոխությունից բխող՝ գնումների լրացուցիչ պայմանագրերը եւ դրամաշնորհի լրացուցիչ պայմանագրերը պետք է ստորագրվեն սույն

Ֆինանսավորման համաձայնագրի՝ այդ փոփոխությունն ուժի մեջ մտնելու պահից ամենաուշը երեք տարվա ընթացքում, կամ բազում դոնորներ ունեցող Գործողության դեպքում՝ ԵՄ լրացուցիչ օժանդակության համար պայմանագիր կնքելու ֆիքսված վերջնաժամկետում:

Բազում դոնորներ չունեցող Գործողությունների համար այդ եռամյա վերջնաժամկետը չի կարող երկարաձգվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գործողությունը ֆինանսավորվում է ՋԵՀ-ի կողմից: Նման դեպքերում երկարաձգումը սահմանվում է Հատուկ պայմանների 6-րդ հոդվածով:

2.2. Այնուամենայնիվ, հետեւյալ գործարքները կարող են կնքվել գործառնական իրականացման ժամկետի ցանկացած պահի՝

ա. արդեն իսկ ստորագրված՝ գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի փոփոխությունները.

բ. գնումների առանձին պայմանագրեր, որոնք կնքվում են գնումների գործող պայմանագրերի վաղաժամկետ դադարեցումից հետո.

գ. աուդիտին եւ գնահատմանը վերաբերող պայմանագրերը, որոնք կարող են նաեւ ստորագրվել փակման ժամկետի ընթացքում.

դ. 5.1 հոդվածում նշված գործառնական ծախսերը:

2.3. 2.1 հոդվածում նշված վերջնաժամկետները լրանալուց հետո Գործընկերոջը վստահված հարակից այն գործողությունների ֆինանսական հաշվեկշիռը, որոնց վերաբերյալ պայմանագրեր պատշաճորեն չեն ստորագրվել, չեղարկվում է Հանձնաժողովի կողմից:

2.4. Նման չեղարկումը չի կիրառվում 2.2(գ) հոդվածում նշված՝ աուդիտի եւ գնահատման համար նախատեսված ֆինանսական միջոցների կամ 2.2(դ) հոդվածում նշված գործառնական ծախսերի նկատմամբ:

Նույն կերպ այդ չեղարկումը չի կիրառվում չնախատեսված ծախսերը հոգալու համար նախատեսված միջոցների ֆինանսական հաշվեկշռի կամ 2.2(բ) հոդվածում

նշված՝ պայմանագրի վաղաժամկետ դադարեցումից հետո կրկին հասանելի ֆինանսական միջոցների նկատմամբ, որոնք երկուսն էլ կարող են օգտագործվել 2.2 հոդվածում նշված պայմանագրերը ֆինանսավորելու նպատակով:

Հոդված 3. Բացառումը եւ վարչական պատասխանատվության միջոցները

3.1. Բացառման չափանիշները

3.1.1. Գնումների եւ դրամաշնորհային պայմանագրերի շնորհմանն առնչվող՝ Հանձնաժողովի կողմից սահմանված եւ հրապարակված ընթացակարգերն ու ստանդարտ փաստաթղթերը կիրառելիս Գործընկերը համապատասխանաբար պետք է ապահովի, որ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող գնումների եւ դրամաշնորհի ոչ մի պայմանագիր չկնքվի այն տնտեսավարող սուբյեկտի կամ դրամաշնորհի համար դիմող անձի հետ, եթե այդ տնտեսավարող սուբյեկտը կամ անձամբ, կամ որին ներկայացնելու, որոշում կայացնելու կամ որի նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող անձը հայտնվել է Հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան ընթացակարգերով եւ ստանդարտ փաստաթղթերով նախատեսված բացառություն կազմող հանգամանքներից մեկում:

3.1.2. Գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի շնորհմանն առնչվող սեփական (Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբի դեպքում՝ նաեւ ակտիվների համախմբի դոնորների կողմից համաձայնեցված) ընթացակարգերն ու ստանդարտ փաստաթղթերը կիրառելիս Գործընկերը, իր ներպետական օրենսդրությանը համապատասխան, ընդունում է միջոցներ՝ ապահովելու, որ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ գնումների կամ դրամաշնորհի ոչ մի պայմանագիր չշնորհվի տնտեսավարող սուբյեկտին կամ դրամաշնորհի համար դիմող անձին, եթե Գործընկերը տեղեկանում է, որ՝

ա) այդ անձանց կամ նրանց ներկայացնելու, նրանց վերաբերող որոշում ընդունելու կամ վերահսկելու լիազորություններ ունեցող անձանց նկատմամբ

վերջնական դատավճիռ կամ վարչական գործով վերջնական վճիռ է կայացվել խարդախության, կոռուպցիայի, հանցավոր համագործակցության մեջ մասնակցության, փողերի լվացման, ահաբեկչական հանցագործությունների, երեխաների աշխատանքի կամ մարդկանց թրաֆիքինգի համար.

բ) այդ անձանց կամ նրանց ներկայացնելու, նրանց վերաբերող որոշում ընդունելու կամ վերահսկելու լիազորություններ ունեցող անձանց նկատմամբ վերջնական դատավճիռ կամ վարչական գործով վերջնական վճիռ է կայացվել ԵՄ-ի ֆինանսական շահի վրա բացասաբար ազդող օրինախախտում կատարելու համար.

գ) այդ անձինք մեղավոր են ճանաչվել որպես ընթացակարգին մասնակցելու պարտադիր պայման պահանջվող տեղեկատվությունը սխալ տրամադրելու կամ այդ տեղեկատվությունը չտրամադրելու համար. կամ

դ) այդ անձանց նկատմամբ վերջնական դատավճիռ կամ վարչական գործով վերջնական վճիռ է կայացվել, ըստ որի հաստատվել է, որ այդ անձինք այլ պետության տարածքում ստեղծել են մարմին՝ նպատակ ունենալով շրջանցել այն ֆինանսական, սոցիալական կամ ցանկացած այլ իրավական պարտավորություններ, որոնց կիրառումը պարտադիր է այն երկրում, որտեղ իրավաբանական անձը գրանցվել է, որտեղ գտնվում է դրա կառավարման կենտրոնական մարմինը կամ գործունեության հիմնական վայրը.

ե) դրանք ստեղծվել են վերեւում՝ «դ» կետում ներկայացված եւ վերջնական դատավճռում կամ վարչական գործով վերջնական վճռում սահմանված նպատակով:

Գործընկերը հարկ եղած դեպքում եւ իր սեփական պատասխանատվությամբ կարող է հաշվի առնել Հանձնաժողովի՝ Վաղ հայտնաբերման եւ բացառման համակարգում [Early Detection and Exclusion System] ներառված տեղեկությունները՝ գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերը շնորհելիս: Տեղեկություններից օգտվելու հնարավորությունը կարող է տրամադրվել

համակարգման մարմնի (մարմինների) միջոցով կամ Հանձնաժողով ուղարկվող հաղորդագրության միջոցով (Եվրոպական հանձնաժողով, Բյուջեի հարցերով գլխավոր տնօրինություն, Հանձնաժողովի հաշվապահ, BRE2-13/505, B-1049, Բրյուսել, Բելգիա եւ BUDG-C01-EXCL-DB@ec.europa.eu էլեկտրոնային հասցեով՝ պատճենն ուղարկելով նաեւ Հանձնաժողովի՝ Հատուկ պայմանների 3-րդ հոդվածում նշված հասցեով): Հանձնաժողովը կարող է հրաժարվել վճարումներ կատարել բացառման հանգամանքներում հայտնված կատարողին կամ դրամաշնորհի շահառուին:

3.2. Տեղեկություններ փոխանակելու պարտավորությունը

Գործընկերը տեղեկացնում է Հանձնաժողովին, երբ տնտեսավարող սուբյեկտը կամ դրամաշնորհի համար դիմողը գտնվում է 3.1 հոդվածում նշված իրավիճակում կամ կատարել է օրինախախտումներ եւ խարդախություն կամ թույլ է տվել իր պայմանագրային պարտավորությունների էական խախտում:

3.3. Վարչական պատասխանատվության միջոցները

Եթե Գործընկերը I հավելվածում նշված խնդիրները կատարելիս տեղեկանում է 3.1 հոդվածով նախատեսված իրավիճակներից որեւէ մեկի մասին, ապա Գործընկերն իր ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով տնտեսավարող սուբյեկտի կամ դրամաշնորհի համար դիմողի նկատմամբ կիրառում է գնումների կամ դրամաշնորհի տրամադրման իր հետագա ընթացակարգերին մասնակցությունից բացառում եւ (կամ) տվյալ պայմանագրի արժեքին համարժեք ֆինանսական տույժ: Նման ֆինանսական տույժերը կամ բացառումները կիրառվում են մրցակցային դատավարության հիման վրա՝ ապահովելով համապատասխան անձի պաշտպանության իրավունքը:

Գործընկերը կարող է ազատվել առաջին կետով նախատեսված պարտավորություններից, եթե՝

- Գործընկերոջ ներպետական օրենսդրությամբ չի թույլատրվում բացառման եւ (կամ) ֆինանսական տույժի կիրառումը.

- ԵՄ-ի ֆինանսական շահերի պաշտպանության համար պահանջվում է Գործընկերոջ ներքին ընթացակարգերի հետ անհամատեղելի վերջնաժամկետների ընթացքում վարչական պատասխանատվության միջոցի կիրառումը.

- վարչական պատասխանատվության միջոցի կիրառման համար պահանջվում է Գործընկերոջ առկա միջոցներից ավելի միջոցների մոբիլիզացում.

- վերջինիս ներպետական օրենսդրությամբ թույլ չի տրվում տնտեսավարող սուբյեկտին բացառել ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհի տրամադրման բոլոր ընթացակարգերին մասնակցությունից:

Այսպիսի դեպքերում Գործընկերը Հանձնաժողովին ծանուցում է իր այդ խոչընդոտի մասին: Հանձնաժողովը կարող է որոշել տնտեսավարող սուբյեկտի կամ դրամաշնորհի համար դիմող անձի նկատմամբ բացառում կիրառել ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհի տրամադրման հետագա ընթացակարգերին մասնակցությունից եւ (կամ) կիրառել տվյալ պայմանագրի ընդհանուր արժեքի 2-10%-ի չափով ֆինանսական տույժ:

Հոդված 4. Մասնակի պատվիրակումը

Տրամադրման ընթացակարգերը

4.1. Խնդիրները կատարվում են Գործընկերոջ կողմից՝ տվյալ ընթացակարգը սկսելու պահին ուժի մեջ գտնվող՝ Հանձնաժողովի կողմից սահմանված եւ հրապարակված՝ գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի շնորհման ընթացակարգերին ու ստանդարտ փաստաթղթերին համապատասխան:

Նախապես իրականացվող *(ex ante)* հսկողությունը

4.2. Նախապես իրականացվող հսկողությունը թույլատրելու համար Գործընկերը Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում մրցույթին մասնակցելու փաթեթները եւ հայտերի ներկայացման հրավերներին առնչվող փաստաթղթերը՝ մինչեւ մրցույթի հրավերներ եւ հայտերի ներկայացման հրավերներ ներկայացնելը: Նույն կերպ Գործընկերը հրավիրում է Հանձնաժողովին մրցույթների եւ հայտերի բացմանը եւ Հանձնաժողովին է տրամադրում ստացված մրցույթների եւ հայտերի պատճենները: Գործընկերը Հանձնաժողովին ծանուցում է մրցույթների եւ հայտերի ուսումնասիրման արդյունքների մասին եւ Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում դրամաշնորհի տրամադրման հայտը, ինչպես նաեւ գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի նախագծերը:

Գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի կատարման ընթացքում Գործընկերը Հանձնաժողովի նախնական հաստատմանն է ներկայացնում նաեւ հավելվածների նախագծերը եւ կից վարչական ակտերի նախագծերը:

Գործընկերը հրավիրում է Հանձնաժողովին՝ ժամանակավոր եւ վերջնական ընդունման համար:

Հաշվետվությունը/Կառավարման հայտարարագիրը

4.3. Հատուկ պայմանների 5-րդ հոդվածով նախատեսված լինելու դեպքում Գործընկերոջն առաջադրված խնդիրների կատարման մասին հաշվետվությունը պետք է համապատասխանի III հավելվածում ներկայացված ձեւանմուշին, իսկ կառավարման հայտարարագիրը պետք է համապատասխանի IV հավելվածում ներկայացված ձեւանմուշին: Այս դեպքում աուդիտի՝ միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան իրականացված՝ կառավարման հայտարարագրի վերաբերյալ անկախ արտաքին աուդիտի եզրակացություն

ներկայացնելը պարտադիր չէ, քանի որ այս գործողության աուդիտներն իրականացնում է Հանձնաժողովը: Այս աուդիտների միջոցով կստուգվի կառավարման հայտարարագրում տեղ գտած պնդումների ճշմարտացիությունը եւ դրանց հիմքում ընկած գործարքների օրինականությունն ու օրինաչափությունը:

Վճարման ընթացակարգերը

4.4. Գործընկերը Հանձնաժողովին է տրամադրում հաստատված վճարման պահանջագրերը հետեւյալ ժամկետներում՝ սկսած վճարման պահանջագիրը ստանալու օրվանից՝ չհաշված վճարման ժամկետի կասեցման ժամանակահատվածները՝

ա) գնման պայմանագրում եւ դրամաշնորհի պայմանագրում նշված նախնական ֆինանսավորման դեպքում՝

i) 15 օրացուցային օր՝ բյուջեից ֆինանսավորվող գործողության համար.

ii) 30 օրացուցային օր՝ ԶԵՀ-ի կողմից ֆինանսավորվող գործողության համար.

բ) 45 օրացուցային օր՝ այլ վճարումների համար:

Հանձնաժողովը գործում է 4.9 եւ 4.10 հոդվածներին համապատասխան՝ գնման պայմանագրով եւ դրամաշնորհի պայմանագրերով վճարման համար նախատեսված ժամկետին համապատասխան ժամանակահատվածի ընթացքում, որում չեն ներառվում վերոնշյալ վերջնաժամկետները:

4.5. Կատարողից կամ դրամաշնորհի շահառուից վճարման պահանջագիր ստանալուց հետո Գործընկերը տեղեկացնում է Հանձնաժողովին այն ստանալու մասին եւ անմիջապես ուսումնասիրում է, թե արդյոք պահանջն ընդունելի է, այսինքն՝ արդյոք այն պարունակում է այդ կատարողի կամ դրամաշնորհի շահառուի նույնականացումը, խնդրո առարկա պայմանագիրը կամ համաձայնագիրը, գումարը, արժույթը եւ ամսաթիվը: Եթե Գործընկերը հանգում է այն եզրակացության,

որ պահանջն անընդունելի է, ապա մերժում է այն եւ տեղեկացնում է կատարողին կամ դրամաշնորհի շահառուին այդ մերժման եւ դրա պատճառների մասին պահանջն ստանալու պահից 30 օրվա ընթացքում: Գործընկերն այդ մերժման եւ դրա պատճառների մասին տեղեկացնում է նաեւ Հանձնաժողովին:

4.6. Ընդունելի վճարման պահանջագիր ստանալուց հետո Գործընկերն ուսումնասիրում է, թե արդյոք վճարումը ենթակա է կատարման, այսինքն՝ արդյոք կատարվել են վճարումը հիմնավորող բոլոր պայմանագրային պարտավորությունները, ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում՝ հաշվետվության ուսումնասիրությունը: Եթե Գործընկերը հանգում է այն եզրակացության, որ վճարումը ենթակա չէ կատարման, ապա տեղեկացնում է կատարողին կամ դրամաշնորհի շահառուին դրա եւ դրա պատճառների մասին: Այդ տեղեկությունն ուղարկելը կասեցնում է վճարման ժամկետը: Հանձնաժողովն ստանում է ուղարկված այդ տեղեկության պատճենը: Հանձնաժողովը նաեւ տեղեկացվում է կատարողի կամ դրամաշնորհի շահառուի պատասխանի կամ ուղղիչ գործողության մասին: Այդ պատասխանով կամ գործողությամբ, որն ուղղված է իր պայմանագրային պարտավորություններին դրա անհամապատասխանությունը շտկելուն, վերսկսվում է վճարման ժամկետը: Գործընկերն ուսումնասիրում է այդ պատասխանը կամ գործողությունը՝ սույն պարբերության համաձայն:

4.7. Եթե Հանձնաժողովն անհամաձայնություն է հայտնում Գործընկերոջ՝ վճարման ենթակա չլինելու վերաբերյալ եզրակացությանը, ապա այդ մասին տեղեկացնում է Գործընկերոջը: Գործընկերը վերանայում է իր դիրքորոշումը եւ եթե հանգում է այն եզրակացության, որ վճարումը ենթակա է վճարման, ապա այդ մասին տեղեկացնում է կատարողին կամ դրամաշնորհի շահառուին: Վճարման ժամկետի կասեցումը վերացվում է այս տեղեկությունն ուղարկելուց հետո: Գործընկերը նաեւ տեղեկացնում է Հանձնաժողովին: Գործընկերն այնուհետեւ գործում է 4.8 հոդվածով նախատեսված կարգով:

Եթե Գործընկերոջ եւ Հանձնաժողովի միջեւ անհամաձայնությունը շարունակվում է, ապա Հանձնաժողովը կարող է վճարել հաշիվ-ապրանքագրի

գումարի չվիճարկվող մասը, եթե այն հստակորեն սահմանազատված է վիճարկվող գումարից: Հանձնաժողովը տեղեկացնում է Գործընկերոջը եւ կատարողին կամ դրամաշնորհի շահառուին այս մասնակի վճարման մասին:

4.8. Եթե Գործընկերը հանգում է այն եզրակացության, որ վճարումը ենթակա է կատարման, ապա վճարման պահանջագիրը եւ անհրաժեշտ բոլոր ուղեկցող փաստաթղթերն ուղարկում է Հանձնաժողով՝ հաստատման եւ վճարման նպատակով: Այն տրամադրում է նկարագիր այն մասին, թե քանի օր է մնացել մինչեւ վճարման ժամկետը լրանալը, եւ այդ ժամկետի կասեցման բոլոր ժամանակահատվածների մասին:

4.9. Վճարման պահանջագիրը 4.8 հոդվածին համապատասխան ուղարկելուց հետո, եթե Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ վճարումը ենթակա չէ կատարման, ապա դրա եւ դրա պատճառների մասին տեղեկացնում է Գործընկերոջը, ինչպես նաեւ կատարողին կամ դրամաշնորհի շահառուին: Կատարողին կամ դրամաշնորհի շահառուին տեղեկացնելը կհանգեցնի վճարման ժամկետի կասեցմանը՝ կնքված պայմանագրով նախատեսված կարգով: Գործընկերը տնօրինում է կատարողի կամ դրամաշնորհի շահառուի պատասխանը կամ ուղղիչ գործողությունը՝ 4.6 հոդվածին համապատասխան:

4.10. Եթե Գործընկերը եւ Հանձնաժողովը հանգում են այն եզրակացության, որ վճարումը ենթակա է կատարման, ապա Հանձնաժողովը կատարում է վճարումը:

4.11. Եթե վճարումն ուշացնելու համար տոկոսը ենթակա է վճարման կատարողին կամ դրամաշնորհի շահառուին, ապա այն բաշխվում է Գործընկերոջ եւ Հանձնաժողովի միջեւ 4.4 հոդվածով սահմանված ժամկետները գերազանցող ուշացման օրերին համամասնորեն՝ պահպանելով հետեւյալ ժամկետները՝

ա) Գործընկերոջ կողմից օգտագործված օրերի թիվը հաշվարկվում է 4.6 հոդվածում նշված ընդունելի վճարման պահանջագրի գրանցման օրվանից մինչեւ

Հանձնաժողովին 4.8 հոդվածում նշված պահանջագիրն ուղարկելու օրը, եւ Հանձնաժողովի կողմից 4.9 հոդվածում նշված տեղեկությունը տրամադրելու օրվանից մինչեւ 4.8 հոդվածում նշված՝ պահանջագրի հաջորդ ուղարկումը Հանձնաժողով: Վճարման ժամկետի կասեցման ցանկացած ժամանակահատված չի հաշվարկվում.

բ) Հանձնաժողովի կողմից օգտագործված օրերի թիվը հաշվարկվում է 4.8 հոդվածում նշված՝ պահանջագիրը Գործընկերոջ կողմից ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից մինչեւ վճարման օրը եւ ուղարկելու օրվանից մինչեւ Գործընկերոջը 4.9 հոդվածին համապատասխան տեղեկացնելու օրը:

4.12. Վերոնշյալ ընթացակարգով չնախատեսված ցանկացած հանգամանք լուծվում է Գործընկերոջ եւ Հանձնաժողովի միջեւ համագործակցության ոգով՝ վերոնշյալ դրույթների անալոգիայով՝ միեւնույն ժամանակ հարգելով Գործընկերոջ պայմանագրային հարաբերությունները կատարողի կամ դրամաշնորհի շահառուի հետ:

Նպատակահարմար լինելու դեպքում մի կողմը մյուս կողմի խնդրանքով համագործակցում է վճարման պահանջագրի գնահատման համար օգտակար տեղեկություններ տրամադրելու հարցում, նույնիսկ մինչեւ վճարման պահանջագրի պաշտոնական ուղարկումն առաջին կողմին կամ այն վերադարձնելն առաջին կողմի կողմից:

4.13. Գնման պայմանագիրը կամ դրամաշնորհի պայմանագիրը, որը որեւէ վճարում կատարելու համար հիմք չի հանդիսացել այն ստորագրելուց հետո երկու տարվա ընթացքում, ինքնաբերաբար դադարում է գործել, իսկ դրա ֆինանսավորումը չեղարկվում է՝ բացառությամբ դատարանում կամ արբիտրաժային մարմիններում վեճերի դեպքում:

Հոդված 5. Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչը

Կիրառումը

5.1. Ծրագրի նախահաշիվն այն փաստաթուղթն է, որով սահմանվում են իրականացման ենթակա միջոցառումների ծրագիրը եւ պահանջվող մարդկային ու նյութական ռեսուրսները, համապատասխան բյուջեն եւ տեխնիկական ու վարչական բնույթի մանրամասն կարգավորումները՝ սույն Ֆինանսական համաձայնագրի գործառնական իրականացման ժամկետի ընթացքում այդ գործառնական աշխատանքներն իրականացնելու համար:

Ֆինանսավորման համաձայնագրի իրականացումն ապահովող ծրագրի նախահաշվում պետք է պահպանվեն ծրագրի նախահաշիվներին առնչվող եւ Հանձնաժողովի կողմից սահմանված ընթացակարգերը եւ ստանդարտ փաստաթղթերը, որոնք ուժի մեջ են տվյալ ծրագրի նախահաշիվն ընդունվելու պահին:

Ծրագրի նախահաշվով այդ գործառնական աշխատանքներն իրականացնող մարմինը կարող է լինել հենց Գործընկերոջ կենտրոնական կառավարությունը (կենտրոնական գործառնություններ) կամ հանրային իրավունքի կամ մասնավոր իրավունքի ոլորտի լիազորված՝ հանրային ծառայություն իրականացնող մարմինը (պետական լիազորված գործառնություններ) կամ բացառապես ՋԵՀ-ի շրջանակներում՝ մասնավոր իրավունքի ոլորտի՝ հանրային ծառայություն չիրականացնող մարմինը՝ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա (մասնավոր լիազորված գործառնություններ):

Ծրագրի նախահաշիվը պարունակում է կանխավճարային բաղադրիչ եւ կարող է պարունակել հատուկ հանձնառությունների բաղադրիչ:

Ծրագրի հատուկ հանձնառությունների բաղադրիչի համաձայն կիրառվում է 4-րդ հոդվածը:

Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի համաձայն՝ իրականացնող մարմինը կարող է, սահմանված շեմերին համապատասխան, գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգերն իրականացնել առանց Հանձնաժողովի՝ նախապես իրականացվող հսկողության կամ նախապես իրականացվող սահմանափակ հսկողությամբ եւ վճարումներ կատարել կատարողներին ու դրամաշնորհի շահառուներին, ինչպես նաեւ անմիջական աշխատանքի համատեքստում:

Անմիջական աշխատանքը վերաբերում է այն գործառնական աշխատանքներին, որոնք իրականացնող մարմինը կատարում է՝ անմիջականորեն օգտագործելով իր կողմից վարձված անձնակազմը եւ (կամ) առկա միջոցները (մեքենաներ, սարքավորում, այլ միջոցներ):

Իրականացնող մարմնի կողմից կատարված գործառնական ծախսերը կարող են թույլատրելի լինել ԵՄ ֆինանսավորման համար՝ ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի համաձայն: Այդ դեպքում դրանք թույլատրելի են ԵՄ ֆինանսավորման համար սույն Ֆինանսավորման համաձայնագրի կատարման ամբողջ ժամկետի ընթացքում, եթե ծախսերի թույլատրելիության ավելի վաղ ժամկետ սահմանված չէ Հատուկ պայմանների 6-րդ հոդվածով: Գործառնական ծախսերն իրականացնող մարմնի այն ծախսերն են, որոնք առաջանում են իրականացմանն առնչվող խնդիրները կատարելիս եւ ներառում են տեղական անձնակազմը, կոմունալ ծառայությունները (օրինակ՝ ջուր, գազ եւ էլեկտրականություն), շենքերի վարձակալումը, սպառման առարկաները, պահպանումը, կարճաժամկետ գործուղումները եւ տրանսպորտային միջոցների վառելիքը: Դրանք չեն ներառում տրանսպորտային միջոցների կամ այլ սարքավորումների գնումները կամ շահագործման այլ աշխատանքներ: Նման սովորական գործառնական ծախսերը կարող են գանձվել կամ վճարվել իրականացնող մարմնի սեփական ընթացակարգերի համաձայն:

Տրամադրման ընթացակարգերը

5.2. Ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի համաձայն՝ իրականացնող մարմինը կարող է մասամբ կամ ամբողջությամբ իրականացնել գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի շնորհման ընթացակարգերը՝ իր սեփական ընթացակարգերի եւ ստանդարտ փաստաթղթերի համաձայն՝ պայմանով, որ Հանձնաժողովը նախապես ապացույց ձեռք բերի առ այն, որ Գործընկերոջ իրականացնող մարմինը՝

- ապահովում է գործուն եւ արդյունավետ ներքին հսկողության համակարգի գործունեությունը, եւ

- կիրառում է գնումների եւ (կամ) դրամաշնորհի համապատասխան կանոններ եւ ընթացակարգեր:

Եթե նման ապացույցներ ձեռք չեն բերվում, ապա գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի շնորհման եւ տրամադրման ընթացակարգերն իրականացվում են իրականացնող մարմնի կողմից՝ տվյալ ընթացակարգն սկսելու պահին ուժի մեջ գտնվող, Հանձնաժողովի կողմից սահմանված եւ հրապարակված ընթացակարգերին ու ստանդարտ փաստաթղթերին համապատասխան:

Նախապես իրականացվող *(ex ante)* հսկողությունը

5.3. Կանխավճարային բաղադրիչի համաձայն, եթե ծրագրի նախահաշվի տեխնիկական եւ վարչական համաձայնագրերով այլ բան նախատեսված չէ, ապա իրականացնող մարմինը Հանձնաժողովի նախնական հաստատմանն է ներկայացնում գնումների այն պայմանագրերի շնորհման վերաբերյալ որոշմանն առնչվող մրցույթի փաթեթներն ու հայտերը, որոնց արժեքը գերազանցում է 100 000 եվրոն, ինչպես նաեւ դրամաշնորհի այն պայմանագրերի շնորհման վերաբերյալ որոշումներին առնչվող դիմումների ու հայտերի մասով ուղեցույցը,

որոնք համապատասխանում են Հանձնաժողովի կողմից սահմանված եւ հրապարակված ընթացակարգերին ու ստանդարտ փաստաթղթերին:

Սույն Ընդհանուր պայմանների 1.6 հոդվածով սահմանված՝ փաստաթղթերը պահպանելու պարտավորությունից բացի՝ Գործընկերը նույն ժամանակահատվածում պահպանում է համապատասխան բոլոր ֆինանսական եւ պայմանագրային օժանդակ փաստաթղթերը:

Կառավարման հայտարարագիրը

5.4. Գործընկերն ամեն տարի՝ մինչեւ Հատուկ պայմանների 6-րդ հոդվածով սահմանված օրը, Հանձնաժողով է ներկայացնում Գործընկերոջ կողմից ստորագրված, IV հավելվածում ներկայացված ձեւանմուշով կազմված կառավարման տարեկան հայտարարագիրը:

Այս դեպքում աուդիտի՝ միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան իրականացված՝ կառավարման հայտարարագրի վերաբերյալ անկախ արտաքին աուդիտի եզրակացություն ներկայացնելը պարտադիր չէ, քանի որ այս գործողության աուդիտներն իրականացնում է Հանձնաժողովը: Այս աուդիտների միջոցով կստուգվի կառավարման հայտարարագրում տեղ գտած պնդումների ճշմարտացիությունը եւ դրանց հիմքում ընկած գործարքների օրինականությունն ու օրինաչափությունը:

Վճարումները

5.5. Բոլոր Կողմերի կողմից ծրագրի նախահաշիվը ստորագրվելուց հետո Հանձնաժողովը նախնական ֆինանսավորման առաջին վճարումը փոխանցում է 60 օրացուցային օրվա ընթացքում, եթե ծրագրի նախահաշիվը ֆինանսավորվում է ԶԵՀ-ի կողմից, եւ 30 օրացուցային օրվա ընթացքում, եթե այն ֆինանսավորվում է ԵՄ-ի բյուջեից:

Հանձնաժողովը կատարում է հետագա նախնական ֆինանսավորման վճարումները՝ վճարման պահանջագիրը եւ դրա հաշվետվություններն ստանալուց եւ հաստատելուց հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում:

Վճարումն ուշացնելու համար տոկոսը ենթակա է վճարման՝ կիրառելի Ֆինանսական կանոնակարգին համապատասխան: Վճարումները կատարելու ժամկետը կարող է կասեցվել Հանձնաժողովի կողմից՝ վերը նշված ժամանակահատվածում ցանկացած պահի տեղեկացնելով Գործընկերոջն այն մասին, որ վճարման պահանջագիրը չի կարող բավարարվել՝ գումարը վճարման ենթակա չլինելու կամ համապատասխան օժանդակ փաստաթղթերը ներկայացված չլինելու պատճառով: Եթե Հանձնաժողովին հայտնի է դառնում այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում վճարման պահանջագրում առկա ծախսերի թույլատրելիությունը, ապա Հանձնաժողովը կարող է կասեցնել վճարման ժամկետը հետագա ստուգման, այդ թվում՝ տեղում ստուգում իրականացնելու համար, որպեսզի նախքան վճարումը համոզվի, որ այդ ծախսն իսկապես թույլատրելի է: Գործընկերը հնարավորինս շուտ տեղեկացվում է կասեցման եւ դրա պատճառների մասին: Վճարման ժամկետը վերսկսվում է, երբ բացակայող օժանդակ փաստաթղթերը ներկայացվում են, կամ վճարման պահանջագիրը շտկվում է:

5.6. Հանձնաժողովը գումարը փոխանցում է Հանձնաժողովի կողմից ընդունված ֆինանսական հաստատությունում բացված բանկային հաշվին:

5.7. Գործընկերը երաշխավորում է, որ Հանձնաժողովի կողմից վճարված ֆինանսական միջոցները հնարավոր լինի նույնականացնել այդ բանկային հաշվում:

5.8. Անհրաժեշտության դեպքում եվրոյով կատարված փոխանցումները փոխարկվում են Գործընկերոջ ազգային արժույթով այն դեպքում, երբ վճարումները պետք է կատարվեն Գործընկերոջ կողմից՝ Գործընկերոջ կողմից վճարումը կատարելու օրվա դրությամբ բանկում գործող փոխարժեքով:

Հոդված 6. Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախումբը

Կիրառումը

6.1. Ակտիվների համախումբ կառավարող Գործընկերը կարող է ընտրվել այդ ակտիվների համախմբին հատկացվող ԵՄ օժանդակության համար՝ պայմանով, որ Հանձնաժողովը նախապես ձեռք բերի ապացույցներ առ այն, որ Գործընկերոջ կառավարող անձը՝

- ապահովում է գործուն ու արդյունավետ ներքին հսկողության համակարգի գործունեությունը.

- կիրառում է այնպիսի հաշվապահական համակարգ, որով ապահովվում է ճշգրիտ, ամբողջական եւ վստահելի տեղեկությունները ժամանակին տրամադրելու հնարավորություն.

- ենթակա է անկախ արտաքին աուդիտի, որն իրականացվում է տվյալ կազմակերպությունից կամ անձից ֆունկցիոնալ առումով անկախ աուդիտի ծառայության կողմից՝ աուդիտի՝ միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխան.

- կիրառում է համապատասխան կանոններ եւ ընթացակարգեր՝ գնումների եւ դրամաշնորհների համար.

- ապահովում է ստացողների վերաբերյալ տեղեկությունների հետագա հրապարակում. եւ

- անձնական տվյալների պատշաճ պաշտպանություն:

Տրամադրման ընթացակարգերը

6.2. Ինչ վերաբերում է Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբին ԵՄ-ի կողմից տրամադրված օժանդակությանը, Գործընկերոջ

տարածքում կառավարող մարմինն առաջադրանքներն իրականացնում է գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի շնորհման համար իր սեփական ընթացակարգերին եւ ստանդարտ փաստաթղթերին համապատասխան կամ դոնորների կողմից համաձայնեցված ընթացակարգերին եւ ստանդարտ փաստաթղթերին համապատասխան:

Իրականացումը

6.3. Ինչ վերաբերում է Գործընկերոջ կողմից կառավարվող ակտիվների համախմբին ԵՄ-ի կողմից տրամադրված օժանդակությանը, սույն Ընդհանուր պայմաններում արդեն սահմանված իրավունքներից եւ պարտավորություններից բացի, Ֆինանսավորման համաձայնագրի V հավելվածում նշված լրացուցիչ կանոնները կիրառվում են Գործընկերոջ նկատմամբ՝ ակտիվների համախմբին ԵՄ-ի կողմից տրամադրված օժանդակությունն իրականացնելու համար:

Հոդված 7. Գործընկերոջ կողմից գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը

7.1. Գործընկերը պարտավորվում է յուրաքանչյուր գնման եւ դրամաշնորհի պայմանագրի համար, որի պատվիրատուն է նա՝ ըստ 5-րդ հոդվածում նշված՝ ծրագրի նախահաշվի կանխավճարային բաղադրիչի եւ 6-րդ հոդվածում նշված ակտիվների համախմբի, ամեն տարի իր կայքէջի հատուկ եւ հեշտ հասանելի մասում հրապարակել դրա բնույթը եւ նպատակը, կատարողի (կատարողների՝ համատեղ գործունեության (կոնսորցիումի) դեպքում) կամ դրամաշնորհի շահառուի (դրամաշնորհի շահառուների՝ բազմաշահառու դրամաշնորհի դեպքում) անվանումը եւ գտնվելու վայրը, ինչպես նաեւ պայմանագրի գումարը:

Ֆիզիկական անձի գտնվելու վայրը Վիճակագրության համար տարածքային միավորների անվանացանկի (NUTS) 2-րդ մակարդակին համապատասխանող տարածքն է: Իրավաբանական անձի գտնվելու վայրը նրա հասցեն է:

Եթե այսպիսի հրապարակումը համացանցում հնարավոր չէ, ապա տեղեկությունները պետք է հրապարակվեն ցանկացած այլ հնարավոր եղանակով, այդ թվում՝ Գործընկերոջ պաշտոնական տեղեկագրում:

Հատուկ պայմանների 6-րդ հոդվածով ամրագրվում է հրապարակման վայրի տեղը՝ համացանցում կամ այլ եղանակով. Հանձնաժողովի կայքէջի հատուկ մասում նշվում է, թե որտեղ է այն հրապարակված:

7.2. Առավել կարիքավոր ֆիզիկական անձանց տրվող կրթական աջակցությունն ու ուղղակի ֆինանսական աջակցությունը հրապարակվում են անանուն եւ հավաքական կերպով՝ ըստ ծախսերի կատեգորիայի:

Ֆիզիկական անձանց անունները փոխարինվում են «ֆիզիկական անձ»-ով՝ հրապարակումից երկու տարի հետո: Իրավաբանական անձի անվանումը, որը ներառում է այդ իրավաբանական անձի հետ առնչվող ֆիզիկական անձի անունը, համարվում է ֆիզիկական անձի անուն:

Ֆիզիկական անձանց անունների հրապարակման պահանջը չի գործում, եթե այդպիսի հրապարակումը նրանց հիմնարար իրավունքները խախտելու կամ առեւտրային շահերին վնասելու վտանգ է ներկայացնում:

Գործընկերը ֆիզիկական անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալների ցանկը առաջարկվող՝ հրապարակման պահանջը չգործելու դեպքերի հիմնավորման հետ ներկայացնում է Հանձնաժողով, որը պետք է նախապես հաստատի այդ ցանկը: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը լրացնում է ֆիզիկական անձի գտնվելու վայրը՝ NUTS-ի 2-րդ մակարդակին համապատասխան տարածքի սահմաններում:

7.3. Գնումների եւ դրամաշնորհի՝ հաշվետու ժամանակաշրջանում կնքված (այսինքն՝ Գործընկերոջ եւ կատարողի կամ դրամաշնորհի շահառուի կողմից ստորագրված) պայմանագրերի հրապարակումը տեղի է ունենում հաշվետվությունը Հատուկ պայմանների 6-րդ հոդվածին համապատասխան ներկայացնելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

7.4. Պայմանագրերի հրապարակման պահանջը կարող է չկատարվել, եթե այդպիսի հրապարակումը կատարողների կամ դրամաշնորհի շահառուների առեւտրային շահերին վնասելու վտանգ է ներկայացնում: Գործընկերն այդպիսի հիմնավորումներով ցուցակ է ներկայացնում Հանձնաժողով, որը պետք է նախնական թույլտվություն տա հրապարակման պահանջը չկատարելուն:

7.5. Եթե Հանձնաժողովը 4-րդ հոդվածի համաձայն վճարումներ է կատարում կատարողներին կամ դրամաշնորհի շահառուներին, ապա ապահովում է գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը՝ իր կանոններին համապատասխան:

Հոդված 8. Ֆինանսական միջոցների գանձումը

8.1. Գործընկերը ձեռնարկում է ցանկացած համապատասխան միջոց՝ պատշաճորեն չվճարված ֆինանսական միջոցները գանձելու համար:

Պատշաճորեն չվճարված եւ Գործընկերոջ կողմից գանձված ֆինանսական միջոցները, գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգերի հիման վրա տրամադրված ֆինանսական երաշխիքներից ստացված գումարները, Գործընկերոջ կողմից նշանակված ֆինանսական տույժերից ստացված գումարները, ինչպես նաեւ Գործընկերոջը վճարման ենթակա վնասի փոխհատուցման գումարները վերադարձվում են Հանձնաժողովին:

8.2. Չսահմանափակելով Գործընկերոջ՝ պատշաճորեն չվճարված ֆինանսական միջոցները գանձելու՝ վերը նշված պարտավորությունը՝ Գործընկերը համաձայնում է, որ Հանձնաժողովը կարող է, կիրառելի Ֆինանսական կանոնակարգի եւ սույն Ֆինանսավորման համաձայնագրի դրույթներին համապատասխան, պաշտոնապես սահմանել գումար, որը պատշաճորեն չի վճարվել 1-ին մասի համաձայն ֆինանսավորված գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհի պայմանագրերի շրջանակներում, եւ

Գործընկերոջ անունից սկսել դրա գանձման գործընթացը ցանկացած միջոցով, այդ թվում՝ կատարողից կամ դրամաշնորհի շահառուից գանձման ենթակա գումարն ուղղելով ԵՄ-ի նկատմամբ ունեցած իր որեւէ պահանջի մարմանը եւ իրավասու դատարանների միջոցով բռնագանձելով:

8.3. Այդ նպատակով Գործընկերը Հանձնաժողովին տրամադրում է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները: Սույնով Գործընկերը լիազորում է Հանձնաժողովին իրականացնել գանձումը՝ մասնավորապես այն կատարողի կամ դրամաշնորհի շահառուի գրավն իրացնելով, որի համար Գործընկերը պատվիրատու է, կամ գանձման ենթակա ֆինանսական միջոցներն ուղղելով Գործընկերոջ՝ որպես պատվիրատուի կողմից կատարողին կամ դրամաշնորհի շահառուին վճարման ենթակա եւ ԵՄ-ի կողմից սույն կամ այլ Ֆինանսավորման համաձայնագրով ֆինանսավորվող գումարներին կամ իրավասու դատարանների միջոցով բռնագանձելով:

8.4. Հանձնաժողովը Գործընկերոջը տեղեկացնում է, որ գանձման վարույթ է հարուցվել (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում՝ ազգային դատարանում):

8.5. Եթե Գործընկերն այն անձի շահառուն է, որի հետ Հանձնաժողովն օժանդակության համաձայնագիր է կնքել, ապա Հանձնաժողովը կարող է Գործընկերոջից գանձել այն ֆինանսական միջոցները, որոնք վճարման ենթակա են այդ անձին, բայց որոնք այդ անձն ինքնուրույն ի վիճակի չի եղել գանձելու:

Հոդված 9. Գնումների եւ դրամաշնորհի պայմանագրերի համաձայն ներկայացվող ֆինանսական պահանջները

Գործընկերը պարտավորվում է Հանձնաժողովի հետ խորհրդակցել՝ նախքան կատարողի կամ դրամաշնորհի շահառուի կողմից ներկայացված եւ Գործընկերոջ կողմից ամբողջությամբ կամ մասամբ հիմնավորված համարվող փոխհատուցման պահանջի վերաբերյալ ցանկացած որոշում կայացնելը: Ֆինանսական հետեւանքների համար պատասխանատվությունը կարող է կրել

միայն ԵՄ-ն, եթե միայն Հանձնաժողովը տվել է իր նախնական թույլտվությունը: Այդպիսի նախնական թույլտվությունն անհրաժեշտ է նաեւ այն ֆինանսական միջոցների ցանկացած օգտագործման համար, որոնց մասով սույն Ֆինանսավորման համաձայնագրի ներքո պարտավորություն է ստանձնվել պայմանագրերի կամ համաձայնագրերի հետ կապված վեճերից բխող ծախսերը ծածկելու առնչությամբ:

Հոդված 10. Գերածախսերը եւ դրանց ֆինանսավորման եղանակները

10.1. Գործընկերոջ կողմից իրականացվող աշխատանքների բյուջեի հոդվածների գծով առանձին գերածախսերը ծածկվում են ընդհանուր բյուջեում միջոցների վերաբաշխմամբ՝ սույն Ընդհանուր պայմանների 25-րդ հոդվածին համապատասխան:

10.2. Գործընկերոջ կողմից իրականացվող աշխատանքների համար նախատեսված գումարի գերածախսի վտանգի առկայության դեպքում Գործընկերն անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովին եւ հայցում վերջինիս նախնական թույլտվությունը՝ գերածախսը ծածկելու համար ծրագրվող ուղղիչ աշխատանքների վերաբերյալ՝ առաջարկելով կրճատել աշխատանքները կամ ներգրավել սեփական կամ այլ՝ ոչ ԵՄ միջոցներ:

10.3. Եթե աշխատանքները չեն կարող կրճատվել, կամ եթե գերածախսը չի կարող ծածկվել Գործընկերոջ սեփական կամ այլ միջոցներով, ապա Հանձնաժողովը կարող է Գործընկերոջ կողմից պատշաճ հիմնավորված պահանջի հիման վրա ԵՄ-ի միջոցներից լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու մասին որոշում կայացնել: Եթե Հանձնաժողովը նման որոշում է կայացնում, ապա լրացուցիչ ծախսերը, չհակասելով ԵՄ համապատասխան կանոններին եւ ընթացակարգերին, ֆինանսավորվում են Հանձնաժողովի կողմից սահմանվելիք լրացուցիչ ֆինանսական օժանդակության տրամադրման միջոցով: Սույն Ֆինանսավորման համաձայնագիրը համապատասխանաբար փոփոխվում է:

Մաս 2. Բյուջետային աջակցության նկատմամբ կիրառվող դրույթներ

Հոդված 11. Քաղաքականության մշակման հարցերով երկխոսությունը

Գործընկերը եւ ԵՄ-ն պարտավորվում են սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման վերաբերյալ համապատասխան մակարդակով կանոնավոր կառուցողական երկխոսություն իրականացնել:

Եթե Գործընկերն ԱԿԽ երկրների խմբից է, եւ սույն գործողությունը ֆինանսավորվում է ԶԵՀ-ի կողմից՝ Հատուկ պայմանների 1.1 հոդվածի համաձայն, ապա այդ երկխոսությունը կարող է ԱԿԽ-ԵՀ գործընկերության համաձայնագրի 8-րդ հոդվածով նախատեսված ավելի ընդգրկուն քաղաքական երկխոսության մաս կազմել:

Հոդված 12. Պայմանների համապատասխանության ստուգումը եւ հատկացումները

12.1. Հանձնաժողովն I հավելվածով (Տեխնիկական եւ վարչական դրույթներ) սահմանված կարգով ստուգում է բյուջետային աջակցության բաղադրիչի տրանշների վճարման պայմանների համապատասխանությունը:

Եթե Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ վճարման պայմանները չեն բավարարվում, ապա այն, առանց անհարկի ուշացումների, Գործընկերոջը տեղեկացնում է այդ մասին:

12.2. Գործընկերոջ կողմից ներկայացված հատկացումների պահանջագրերը թույլատրելի են ԵՄ-ի ֆինանսավորման համար, եթե դրանք համապատասխանում են I հավելվածով (Տեխնիկական եւ վարչական դրույթներ) սահմանված դրույթներին, եւ եթե դրանք ներկայացվում են գործառնական իրականացման ժամկետում:

12.3. Գործընկերը բյուջետային աջակցության բաղադրիչի բոլոր հատկացումների դեպքում արտարժույթի փոխանակման վերաբերյալ իր ազգային կարգավորումները կիրառում է ոչ խտրական ձեւով:

Հոդված 13. Բյուջետային աջակցության թափանցիկությունը

Սույնով Գործընկերը համաձայնում է, որ Հանձնաժողովը հրապարակի, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով, սույն Ֆինանսավորման համաձայնագիրը եւ դրա ցանկացած փոփոխություն, ինչպես նաեւ բյուջետային աջակցության վերաբերյալ այն հիմնական տեղեկությունները, որոնք Հանձնաժողովը նպատակահարմար է համարում: Այդպիսի հրապարակումը չի պարունակում որեւէ տվյալ, որով խախտվում են անձնական տվյալների պաշտպանության նկատմամբ կիրառվող ԵՄ օրենքները:

Հոդված 14. Բյուջետային աջակցության գանձումը

Բյուջետային աջակցության բոլոր հատկացումները կամ դրանց մի մասը կարող են գանձվել Հանձնաժողովի կողմից՝ պատշաճորեն հաշվի առնելով համաչափության սկզբունքը, եթե Հանձնաժողովը պարզում է, որ վճարումը նպատակին չի ծառայել Գործընկերոջ կողմից թույլ տրված լուրջ օրինախախտման պատճառով, մասնավորապես, եթե Գործընկերը ներկայացրել է ոչ հավաստի կամ ոչ ճշգրիտ տեղեկություններ, կամ եթե առկա է կոռուպցիա կամ խարդախություն:

Մաս 3. Սույն գործողության նկատմամբ ամբողջությամբ՝ կառավարման ձեւից անկախ կիրառելի դրույթներ

Հոդված 15. Կատարման ժամկետը եւ պայմանագիր կնքելու վերջնաժամկետը

15.1. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի կատարման ժամանակահատվածը ներառում է երկու ժամկետ՝

- գործառնական իրականացման ժամկետ, երբ կատարվում են գործողության գործառնական աշխատանքները: Այս ժամկետն սկսվում է սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելուն պես կամ Հատուկ պայմաններով սահմանված ամսաթվին եւ ավարտվում է փակման ժամկետի մեկնարկով.

- փակման ժամկետ, որի ընթացքում իրականացվում են վերջնական աուդիտ եւ գնահատում, իսկ սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման պայմանագրերը եւ ծրագրի նախահաշիվը տեխնիկապես եւ ֆինանսապես համարվում են կատարված: Այս ժամկետի տեւողությունը սահմանված է Հատուկ պայմանների 2.3 հոդվածով: Այն սկսում է գործառնական իրականացման ժամկետի ավարտից հետո:

Այս ժամկետներն արտացոլվում են սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման ընթացքում Գործընկերոջ եւ Հանձնաժողովի կողմից կնքման ենթակա համաձայնագրերում՝ մասնավորապես օժանդակության համաձայնագրերում եւ գնումների ու դրամաշնորհի պայմանագրերում:

15.2. Գործառնական աշխատանքներին վերաբերող ծախսերը թույլատրելի են ԵՄ-ի ֆինանսավորման համար միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գործառնական իրականացման ժամկետի ընթացքում. այն ծախսերը, որոնք կատարվել են սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց առաջ, թույլատրելի չեն ԵՄ-ի ֆինանսավորման համար, եթե Հատուկ

պայմանների 6-րդ հոդվածով այլ բան նախատեսված չէ: Վերջնական աուդիտների եւ գնահատման, փակման աշխատանքների եւ 5.1 հոդվածում նշված գործառնական ծախսերի հետ կապված ծախսերը թույլատրելի են մինչեւ փակման ժամկետի ավարտը:

15.3. ԵՄ օժանդակությունից հետո առաջացած գումարային մնացորդն ինքնաբերաբար չեղարկվում է ոչ ուշ, քան կատարման ժամկետի ավարտից վեց ամիս հետո:

15.4. Բացառիկ եւ պատշաճ հիմնավորված դեպքերում կարող է ներկայացվել գործառնական իրականացման ժամկետի կամ փակման ժամկետի, ինչպես նաեւ համապատասխանաբար կատարման ժամկետի երկարաձգման մասին պահանջ: Համաձայնության գալու դեպքում Ֆինանսավորման համաձայնագիրը համապատասխանաբար փոփոխվում է:

15.5. Սույն Ընդհանուր պայմանների 2-րդ հոդվածը կիրառվում է Հանձնաժողովի՝ որպես պատվիրատուի կողմից կնքված գնումների պայմանագրերի, դրամաշնորհի պայմանագրերի եւ օժանդակության համաձայնագրերի նկատմամբ՝ բացառությամբ 2.1 հոդվածի վերջին ենթապարբերության:

Հոդված 16. Հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ) եւ Աուդիտորների եվրոպական դատարանի կողմից իրականացվող վերահսկողությունն ու ստուգումները

16.1. Գործընկերն օժանդակում եւ աջակցում է այն վերահսկողությանը եւ ստուգումներին, որոնք իրականացվում են Հանձնաժողովի, ԽՊԵԳ-ի եւ Աուդիտորների եվրոպական դատարանի կողմից՝ նրանց խնդրանքով:

Գործընկերը համաձայնում է, որ Հաձնաժողովը, ԽՊԵԳ-ը եւ Աուդիտորների եվրոպական դատարանն իրականացնեն փաստաթղթային եւ տեղում ստուգումներ առ այն, թե ինչպես է օգտագործվել սույն Ֆինանսավորման

համաձայնագրի ներքո իրականացվող աշխատանքների համար ԵՄ-ի տրամադրած ֆինանսավորումը, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ համալիր աուդիտ՝ հաշվարկները հիմնավորող օժանդակ փաստաթղթերի եւ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ու աշխատանքների ֆինանսավորմանն առնչվող ցանկացած այլ փաստաթղթի հիման վրա՝ սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում եւ կատարման ժամկետի ավարտից հետո՝ հինգ տարվա ընթացքում:

16.2. Գործընկերը նաեւ համաձայնում է, որ ԽՊԵԳ-ը, ԵՄ իրավունքով սահմանված ընթացակարգերին համապատասխան, իրականացնի տեղում ստուգումներ եւ վերահսկողություն՝ ԵՄ ֆինանսական շահերը խարդախությունից եւ այլ օրինախախտումներից պաշտպանելու համար:

Այդ նպատակով Գործընկերը պարտավորվում է Հանձնաժողովի, ԽՊԵԳ-ի եւ Աուդիտորների եվրոպական դատարանի պաշտոնատար անձանց եւ նրանց լիազորված գործակալների համար հասանելի դարձնել այն տարածքներն ու շինությունները, որտեղ իրականացվում են սույն Ֆինանսավորման համաձայնագրով ֆինանսավորվող գործողությունները, ներառյալ՝ նրանց համակարգչային համակարգերը եւ այդ գործողությունների տեխնիկական ու ֆինանսական կառավարմանն առնչվող ցանկացած այլ փաստաթուղթ եւ համակարգիչ մուտքագրված տվյալ, ինչպես նաեւ ձեռնարկել նրանց աշխատանքին օժանդակելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Հանձնաժողովի, ԽՊԵԳ-ի եւ Աուդիտորների եվրոպական դատարանի լիազորված գործակալների համար հասանելիությունն ապահովվում է երրորդ կողմերից խիստ գաղտնիության պայմաններով՝ չսահմանափակելով հանրային իրավունքից բխող՝ նրանց նկատմամբ կիրառվող պարտավորությունները: Փաստաթղթերը պետք է լինեն հասանելի եւ ներկայացվեն այնպես, որ դրանց ստուգումը հեշտ լինի իրականացնել, իսկ Գործընկերը պարտավոր է տեղեկացնել Հանձնաժողովին, ԽՊԵԳ-ին կամ Աուդիտորների եվրոպական դատարանին դրանց պահման ստույգ վայրի մասին:

16.3. Վերոնշյալ ստուգումներն ու աուդիտները կիրառվում են նաեւ կատարողների, դրամաշնորհի շահառուների, օժանդակության համաձայնագրեր ստորագրած կազմակերպությունների նկատմամբ եւ ԵՄ-ից ֆինանսավորում ստացած ենթակատարողների նկատմամբ:

16.4. Գործընկերը տեղեկացվում է Հանձնաժողովի, ԽՊԵԳ-ի կամ Աուդիտորների եվրոպական դատարանի կողմից նշանակված գործակալների կողմից տեղում իրականացվող ստուգումների մասին:

Հոդված 17. Գործընկերոջ խնդիրները՝ օրինախախտումների, խարդախության եւ կոռուպցիայի դեմ պայքարում

17.1. Գործընկերն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովին իր ուշադրությանը ներկայացված ցանկացած խնդրի մասին, որն օրինախախտման, խարդախության կամ կոռուպցիայի վերաբերյալ կասկած է հարուցում, եւ դրանք կարգավորելու ուղղությամբ ձեռնարկված կամ նախատեսված ցանկացած միջոցի մասին:

17.2. Գործընկերն ապահովում եւ պարբերաբար ստուգում է, որ բյուջեի միջոցներով ֆինանսավորվող գործողությունները կատարվեն արդյունավետորեն եւ ճիշտ իրականացվեն: Այն համապատասխան միջոցներ է ձեռնարկում օրինախախտումներն ու խարդախությունը կանխելու, հայտնաբերելու եւ վերացնելու եւ հարկ եղած դեպքում՝ քրեական հետապնդում հարուցելու եւ անհարկի վճարված միջոցները գանձելու նպատակով:

«Օրինախախտում» նշանակում է սույն Ֆինանսավորման համաձայնագրի, կատարման պայմանագրերի եւ ծրագրի նախահաշվի կամ ԵՄ իրավունքի ցանկացած խախտում, որն այնպիսի անձի գործողության կամ անգործության հետեւանք է, որը վնաս է հասցնում կամ կարող է վնաս հասցնել ԵՄ-ի ֆինանսական միջոցներին՝ ԵՄ եկամտի նվազեցման կամ կորստի կամ չհիմնավորված ծախսային հոդվածի միջոցով:

«Խարդախություն» նշանակում է դիտավորությամբ կատարված ցանկացած գործողություն կամ անգործություն, որը վերաբերում է՝

- կեղծ, սխալ կամ ոչ ամբողջական հաշվետվություններ կամ փաստաթղթեր օգտագործելուն կամ ներկայացնելուն, ինչը հանգեցնում է ԵՄ-ի կամ ՀԵՀ-ի ընդհանուր բյուջեից միջոցների յուրացմանը կամ ապօրինի պահմանը.

- որոշակի պարտավորության խախտմամբ տեղեկություններ չբացահայտելուն, ինչը կարող է հանգեցնել նույն հետեւանքներին.

- այդ միջոցների ոչ պատշաճ օգտագործմանը ոչ այն նպատակներով, որոնց համար դրանք ի սկզբանե տրամադրվել են:

17.3. Գործընկերը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու, հայտնաբերելու եւ պատժելու Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման ընթացքում ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի ցանկացած դրսեւորում:

«Պասիվ կոռուպցիա» նշանակում է միտումնավոր գործողություն որեւէ պաշտոնատար անձի կողմից, որն անմիջականորեն կամ միջնորդի միջոցով պահանջում կամ ստանում է ցանկացած տեսակի առավելություն՝ իր կամ երրորդ կողմի համար, կամ ընդունում է այդպիսի առավելության խոստում՝ իր պարտականությունների շրջանակում կամ գործառույթները կատարելիս իր պաշտոնեական պարտականությունների խախտմամբ որեւէ գործողություն կատարելու կամ կատարելուց ձեռնպահ մնալու համար, ինչի հետեւանքով վնաս է հասցվել կամ վնաս կհասցվի ԵՄ-ի ֆինանսական շահերին:

«Ակտիվ կոռուպցիա» նշանակում է միտումնավոր գործողություն ցանկացած անձի կողմից, որն անմիջականորեն կամ միջնորդի միջոցով որեւէ պաշտոնատար անձի խոստանում է կամ տալիս է ցանկացած տեսակի առավելություն՝ իր կամ երրորդ անձի համար՝ իր պարտականությունների շրջանակում կամ իր գործառույթները կատարելիս պաշտոնեական պարտականությունների խախտմամբ որեւէ գործողություն կատարելու կամ

կատարելուց ձեռնպահ մնալու համար, ինչի հետեւանքով վնաս է հասցվել կամ վնաս կհասցվի ԵՄ-ի ֆինանսական շահերին:

17.4. Եթե Գործընկերը չի ձեռնարկում խարդախությունը, օրինախախտումները եւ կոռուպցիան կանխելու համապատասխան միջոցներ, ապա Հանձնաժողովը կարող է ընդունել նախազգուշական միջոցներ, ներառյալ՝ սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցումը:

Հոդված 18. Վճարումների կասեցումը

18.1. Չսահմանափակելով համապատասխանաբար 26-րդ եւ 27-րդ հոդվածների համաձայն սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցումը կամ դադարեցումը՝ Հանձնաժողովը կարող է մասամբ կամ ամբողջությամբ կասեցնել վճարումները, եթե՝

ա) Հանձնաժողովը, իր կողմից ստացված տեղեկությունների հիման վրա, պարզել է կամ լուրջ կասկածներ ունի եւ պետք է ստուգի, թե արդյոք Գործընկերը թույլ է տվել էական սխալներ, օրինախախտումներ կամ խարդախություն գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգում կամ գործողությունն իրականացնելիս, կամ արդյոք Գործընկերը չի կատարել սույն Ֆինանսավորման համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները, ներառյալ՝ Հաղորդակցման եւ տեսանելիության ծրագրի իրականացմանն առնչվող պարտավորությունները.

բ) Հանձնաժողովը, իր կողմից ստացված տեղեկությունների հիման վրա, պարզել է կամ լուրջ կասկածներ ունի եւ պետք է ստուգի, թե արդյոք Գործընկերը թույլ է տվել համակարգային կամ պարբերաբար կրկնվող սխալներ, օրինախախտումներ, խարդախություն կամ այս կամ այլ Ֆինանսավորման համաձայնագրերով սահմանված պարտավորությունների խախտում, եթե այդ սխալները, օրինախախտումները, խարդախությունը կամ պարտավորությունների խախտումը նյութական ազդեցություն ունեն սույն Ֆինանսավորման

համաձայնագրի իրականացման վրա կամ կասկածի տակ են դնում Գործընկեր երկրի ներքին հսկողության համակարգի հուսալիությունը կամ հիմքում ընկած ծախսերի օրինականությունն ու օրինաչափությունը.

գ) Հանձնաժողովը կասկածում է, որ Գործընկերը թույլ է տվել էական սխալներ, օրինախախտումներ, խարդախություն կամ պարտավորությունների խախտում գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգում կամ գործողություններ իրականացնելիս, եւ պետք է ստուգի, թե արդյոք դրանք տեղի են ունեցել.

դ) անհրաժեշտ է կանխել ԵՄ-ի ֆինանսական շահերին սպառնացող էական վնասը:

18.2. Հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է Գործընկերոջը վճարումների կասեցման եւ այդ կասեցման պատճառների մասին:

18.3. Վճարումների կասեցման հետեւանքով կասեցվում են ուսումնասիրման փուլում գտնվող ցանկացած վճարման պահանջագրի համար վճարումներ կատարելու ժամկետները:

18.4. Վճարումները վերսկսելու համար Գործընկերը ջանքեր է գործադրում կասեցման համար հիմք դարձած հանգամանքները հնարավորինս շուտ վերացնելու ուղղությամբ եւ տեղեկացնում է Հանձնաժողովին այդ կապակցությամբ գրանցված ցանկացած առաջընթացի մասին: Այն պահից սկսած, երբ Հանձնաժողովը համարում է, որ վճարումները վերսկսելու պայմանները բավարարվել են, Գործընկերոջը տեղեկացնում է այդ մասին:

Հոդված 19. Հանձնաժողովի կողմից գանձված ֆինանսական միջոցների հատկացումը գործողությանը

Եթե գործողությունների ծրագիրը ֆինանսավորվում է ԶԵՀ-ի շրջանակներում, ապա պատշաճորեն չվճարված եւ Հանձնաժողովի կողմից

գանձված գումարները, գնումների եւ դրամաշնորհի տրամադրման ընթացակարգի հիման վրա ֆինանսական միջոցների գրավի իրացումից ստացված գումարները, կիրառված ֆինանսական տույժերից ստացված գումարները, ինչպես նաեւ վնասի դիմաց Հանձնաժողովին փոխհատուցված գումարները հատկացվում են այս գործողությանը:

Հոդված 20. Հիմնադրման եւ բնակության իրավունքը

20.1. Գնման պայմանագրի դրամաշնորհի պայմանագրի կամ օժանդակության համաձայնագրի բնույթով հիմնավորված լինելու դեպքում Գործընկերն աշխատանքների կատարման, մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման համար մրցույթին մասնակցող կամ համապատասխան հայտերը ներկայացնելու հրավեր ստացած ֆիզիկական ու իրավաբանական անձանց եւ այն կազմակերպություններին, որոնցից ակնկալվում է օժանդակության համաձայնագրի ստորագրում, ժամանակավորապես տրամադրում է Գործընկերոջ տարածքում (տարածքներում) հիմնադրման եւ բնակության իրավունք: Այս իրավունքը վավեր է պայմանագիրը շնորհելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

20.2. Գործընկերը գնում կատարողներին, դրամաշնորհի շահառուներին, օժանդակության համաձայնագրեր ստորագրած կազմակերպություններին եւ այն ֆիզիկական անձանց, որոնց ծառայությունները պահանջվում են սույն գործողության կատարման համար, եւ նրանց ընտանիքի անդամներին նույնպես վերապահում է գործողության իրականացման ընթացքում համանման իրավունքներ:

Հոդված 21. Հարկային եւ մաքսային դրույթներն ու արտարժույթի փոխանակման կարգավորումը

21.1. Գործընկերը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի, դրամաշնորհի պայմանագրերի եւ օժանդակության

համաձայնագրերի նկատմամբ կիրառում է հարկային ու մաքսային առավել բարենպաստ ռեժիմները, որոնք կիրառվում են այն պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ այդ երկիրն ունի հարաբերություններ:

Այն դեպքում, երբ Գործընկերն ԱԿԽ պետություն է, հաշվի չեն առնվում վերջինիս կողմից մյուս ԱԿԽ պետությունների կամ այլ զարգացող երկրների նկատմամբ կիրառվող պայմանավորվածությունները՝ «առավել բարենպաստ պետական ռեժիմը» սահմանելու նպատակով:

21.2. Այն դեպքում, երբ կիրառվում է Շրջանակային համաձայնագիր, որը ներառում է առարկայի վերաբերյալ ավելի մանրամասն դրույթներ, նշված դրույթները նույնպես կիրառվում են:

Հոդված 22. Գաղտնիությունը

22.1. Գործընկերը համաձայնում է, որ այն կազմակերպությունում պահվող իր փաստաթղթերը եւ տվյալները, որի հետ Գործընկերը դրանց առնչությամբ գտնվում է պայմանագրային հարաբերությունների մեջ, այդ կազմակերպության կողմից ուղարկվեն Հանձնաժողով՝ բացառապես այս կամ այլ Ֆինանսավորման համաձայնագիր իրականացնելու նպատակով: Հանձնաժողովը հարգում է Գործընկերոջ եւ այդ կազմակերպության միջեւ ձեռք բերված՝ գաղտնիության մասով բոլոր պայմանավորվածությունները:

22.2. Չսահմանափակելով սույն Ընդհանուր պայմանների 16-րդ հոդվածը՝ Գործընկերը եւ Հանձնաժողովը պահպանում են անմիջապես սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացմանն առնչվող եւ որպես գաղտնի դասակարգված ցանկացած փաստաթղթի, տեղեկության կամ այլ նյութի գաղտնիությունը:

22.3. Կողմերն ստանում են միմյանց նախնական գրավոր համաձայնությունը՝ նախքան այդպիսի տեղեկությունները հրապարակայնորեն բացահայտելը:

22.4. Կողմերը պարտավորվում են կատարման ժամկետի ավարտից հետո հինգ տարի պահպանել գաղտնիությունը:

22.5. Գործընկերը պետք է նաեւ կատարի 1.7 հոդվածով նախատեսված պարտավորությունները, եթե Հանձնաժողովը Գործընկերոջը տրամադրում է անձնական տվյալներ, օրինակ՝ Հանձնաժողովի կողմից կարգավորվող ընթացակարգերի եւ պայմանագրերի շրջանակներում:

Հոդված 23. Ուսումնասիրությունների օգտագործումը

Սույն Ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող ցանկացած ուսումնասիրությանն առնչվող պայմանագիր ներառում է ուսումնասիրությունն օգտագործելու, այն հրապարակելու կամ երրորդ անձանց բացահայտելու՝ Գործընկերոջ եւ Հանձնաժողովի իրավունքը:

Հոդված 24. Գործընկերոջ եւ Հանձնաժողովի միջեւ խորհրդակցությունը

24.1. Գործընկերը եւ Հանձնաժողովը խորհրդակցում են միմյանց հետ՝ նախքան սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացման կամ մեկնաբանման հետ կապված որեւէ վեճի առնչությամբ հետագա գործողություն ձեռնարկելը՝ սույն Ընդհանուր պայմանների 28-րդ հոդվածի համաձայն:

24.2. Այն դեպքում, երբ Հանձնաժողովը տեղեկանում է, որ Ֆինանսավորման համաձայնագրի կառավարման հետ կապված ընթացակարգերն իրականացնելիս ի հայտ են եկել խնդիրներ, իրավիճակը շտկելու համար այն Գործընկերոջ հետ հաստատում է բոլոր անհրաժեշտ կապերը եւ ձեռնարկում ցանկացած անհրաժեշտ քայլ:

24.3. Խորհրդակցության արդյունքում սույն Ֆինանսավորման համաձայնագիրը կարող է փոփոխվել, դրա գործողությունը՝ կասեցվել կամ դադարեցվել:

24.4. Հանձնաժողովը պարբերաբար տեղեկացնում է Գործընկերոջն I հավելվածում ներկայացված այն գործողությունների իրականացման մասին, որոնց վրա չեն տարածվում սույն Ընդհանուր պայմանների 1-ին եւ 2-րդ մասերի դրույթները:

Հոդված 25. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի փոփոխումը

25.1. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի ցանկացած փոփոխություն, այդ թվում՝ նամակների փոխանակումը, կատարվում է գրավոր:

25.2. Եթե փոփոխություն կատարելու մասին դիմումը ներկայացվում է Գործընկերոջ կողմից, ապա վերջինս այդ դիմումը Հանձնաժողով է ներկայացնում փոփոխությունն ուժի մեջ մտնելու նախատեսվող ժամկետից առնվազն երեք ամիս առաջ՝ բացառությամբ Գործընկերոջ կողմից պատշաճ հիմնավորված եւ Հանձնաժողովի կողմից ընդունված դեպքերի: Գործողության նպատակների ճշգրտման եւ (կամ) ԵՄ օժանդակության չափի ավելացման բացառիկ դեպքերում այդ դիմումը ներկայացվում է փոփոխությունն ուժի մեջ մտնելու նախատեսվող ժամկետից առնվազն վեց ամիս առաջ:

25.3. Եթե ճշգրտումն էականորեն չի ազդում սույն Ընդհանուր պայմանների 1-ին մասի համաձայն իրականացված աշխատանքների նպատակների վրա, եւ եթե այն վերաբերում է այնպիսի մանրամասների, որոնք չեն ազդում ընդունված տեխնիկական լուծման վրա, եւ եթե այն չի ներառում միջոցների վերահատկացում, կամ եթե այն վերաբերում է միջոցների վերահատկացմանը՝ չնախատեսված ծախսերը ծածկելու համար նախատեսված պահուստային միջոցների գումարին համարժեք գումարի չափով, ապա Գործընկերը հնարավորինս շուտ տեղեկացնում է Հանձնաժողովին ճշգրտման մասին, ներկայացնում է իր գրավոր հիմնավորումը եւ կարող է կիրառել այդ ճշգրտումը:

25.4. Գործողության չնախատեսված ծախսերը ծածկելու համար նախատեսված պահուստային միջոցներն օգտագործվում են Հանձնաժողովի նախնական գրավոր համաձայնությամբ:

25.5. Այն դեպքում, երբ Հանձնաժողովը համարում է, որ Գործընկերն այլեւս բավարար չափով չի կատարում սույն Ընդհանուր պայմանների 1.1 հոդվածի համաձայն իրեն վերապահված խնդիրները, եւ չսահմանափակելով սույն Ընդհանուր պայմանների 26-րդ եւ 27-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը կարող է որոշում կայացնել Գործընկերոջը վերապահված խնդիրները չեղարկելու մասին, որպեսզի շարունակի Գործընկերոջ անունից աշխատանքների իրականացումը՝ վերջինիս այդ մասին գրավոր տեղեկացնելուց հետո:

Հոդված 26. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցումը

26.1. Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը կարող է կասեցվել հետեւյալ դեպքերում՝

- Հանձնաժողովը կարող է կասեցնել սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացումը, եթե Գործընկերը խախտում է սույն Ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված որեւէ պարտավորություն.

- Հանձնաժողովը կարող է կասեցնել սույն Ֆինանսավորման համաձայնագրի իրականացումը, եթե Գործընկերը խախտում է սույն Ընդհանուր պայմանների 1-ին, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հոդվածներում նշված ընթացակարգերով եւ ստանդարտ փաստաթղթերով սահմանված որեւէ պարտավորություն.

- Հանձնաժողովը կարող է կասեցնել սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը, եթե Գործընկերը խախտում է մարդու իրավունքներին, ժողովրդավարության սկզբունքներին եւ իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքին առնչվող որեւէ պարտավորություն, կամ եթե Գործընկերը մեղավոր է ճանաչվել պաշտոնական լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար, ինչն ապացուցված է որեւէ հիմնավորված միջոցով: Պաշտոնական լիազորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում ստորեւ նշվածներից որեւէ մեկը՝

- կիրառելի օրենքների կամ կանոնակարգերի կամ այն մասնագիտության էթիկայի կանոնների խախտում, որ տվյալ անձը կամ մարմինն ունի, կամ

- տվյալ անձի կամ մարմնի կողմից դրսեւորած ցանկացած սխալ վարքագիծ, որն ազդում է նրա մասնագիտական հեղինակության վրա, եթե այդպիսի վարքագիծը ենթադրում է ոչ օրինական արարքի մտադրություն կամ կոպիտ անփութություն.

- սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը կարող է կասեցվել ստորեւ սահմանված ֆորսմաժորային իրավիճակներում: «Ֆորս-մաժոր» նշանակում է կողմերի հսկողությունից դուրս գտնվող ցանկացած անկանխատեսելի եւ բացառիկ իրավիճակ կամ իրադարձություն, որը խոչընդոտում է նրանցից որեւէ մեկի կողմից որեւէ պարտավորության կատարում, որը չի կարող վերագրվել նրանց կողմից (կամ նրանց կատարողների, գործակալների կամ աշխատողների կողմից) թույլ տրվող սխալին կամ անփութությանը, եւ որն անհաղթահարելի է նույնիսկ պատշաճ զգուշավորություն դրսեւորելու դեպքում: Սարքավորումների կամ նյութերի թերությունները կամ դրանք օգտագործման համար հասանելի դարձնելու հետ կապված ուշացումները, աշխատանքային վեճերը, գործադուլները կամ ֆինանսական դժվարությունները չեն կարող վկայակոչվել որպես ֆորսմաժորային իրավիճակներ: Չի համարվում, որ կողմը խախտել է իր պարտավորությունները, եթե այն չի կարողանում կատարել դրանք ֆորսմաժորային իրավիճակի պատճառով, որի մասին մյուս կողմը պատշաճորեն տեղեկացվել է: Ֆորսմաժորային իրավիճակում հայտնված կողմը պետք է մյուս կողմին անհապաղ տեղեկացնի այդ մասին՝ նշելով խնդրի բնույթը, հնարավոր տեւողությունը եւ կանխատեսելի հետեւանքները, ինչպես նաեւ ձեռնարկի հնարավոր վնասի նվազեցմանն ուղղված ցանկացած միջոց.

- Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Ֆինանսավորման համաձայնագրով սահմանված իր պարտավորությունների խախտման համար, եթե չի կարողանում կատարել դրանք ֆորսմաժորային

իրավիճակի պատճառով՝ պայմանով, որ այն ձեռնարկում է հնարավոր վնասի նվազեցմանն ուղղված ցանկացած միջոց:

26.2. Հանձնաժողովը կարող է կասեցնել սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը՝ առանց նախօրոք ծանուցելու:

26.3. Հանձնաժողովը կարող է ձեռնարկել ցանկացած համապատասխան նախազգուշական միջոց՝ նախքան կասեցում իրականացնելը:

26.4. Եթե կասեցման մասին ծանուցում է ներկայացվում, ապա նշվում են դրանով պայմանավորված՝ գնումների եւ դրամաշնորհի ընթացիկ պայմանագրերի, օժանդակության համաձայնագրերի եւ ծրագրի նախահաշվի հետ կապված հետեւանքները:

26.5. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցումը չի խոչընդոտում Հանձնաժողովի կողմից վճարումների կասեցումը եւ սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության դադարեցումը՝ Ընդհանուր պայմանների 18-րդ եւ 27-րդ հոդվածներին համապատասխան:

26.6. Կողմերը համապատասխան պայմանների առկայության պարագայում վերսկսում են Ֆինանսավորման համաձայնագրի իրականացումը՝ Հանձնաժողովի նախնական գրավոր համաձայնությամբ: Դա չի հակասում սույն Ֆինանսավորման համաձայնագրի ցանկացած փոփոխության, որը կարող է անհրաժեշտ լինել գործողությունն իրականացման նոր պայմաններին հարմարեցնելու համար, ներառյալ՝ հնարավորության դեպքում՝ գործառնական իրականացման ժամկետի երկարաձգումը կամ սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության դադարեցումը՝ 27-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 27. Սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության դադարեցումը

27.1. Եթե սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողության կասեցման համար հիմք դարձած հարցերը չեն կարգավորվում առավելագույնը 180 օրվա

ընթացքում, ապա ցանկացած կողմ կարող է դադարեցնել սույն Ֆինանսավորման համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին 30 օր առաջ ծանուցելով:

27.2. Սույն Ֆինանսավորման համաձայնագիրն ինքնաբերաբար դադարում է գործել, եթե 2-րդ հոդվածով սահմանված վերջնաժամկետներում համաձայնագիրն իրականացնող որեւէ պայմանագիր չի ստորագրվում:

27.3. Եթե դադարեցման մասին ծանուցում է ներկայացվում, ապա նշվում են դրանով պայմանավորված՝ գնումների ընթացիկ պայմանագրերի, դրամաշնորհի ընթացիկ պայմանագրերի, օժանդակության համաձայնագրերի եւ ծրագրի նախահաշվի հետ կապված հետեւանքները:

Հոդված 28. Վեճերի կարգավորումը

28.1. Ֆինանսավորման համաձայնագրից բխող ցանկացած վեճ, որը վեցամսյա ժամկետում չի հաջողվում կարգավորել կողմերի միջեւ սույն Ընդհանուր պայմանների 24-րդ հոդվածով նախատեսված խորհրդակցությունների միջոցով, կարող է կողմերից մեկի դիմումով կարգավորվել արբիտրաժի միջոցով:

Այն դեպքում, երբ Գործընկերն ԱԿԽ պետություն է կամ ԱԿԽ տարածաշրջանային մարմին կամ կազմակերպություն, եւ սույն գործողությունը ֆինանսավորվում է ԶԵՀ-ի շրջանակներում, վեճը, նախքան արբիտրաժ ներկայացվելը, սույն Ընդհանուր պայմանների 24-րդ հոդվածով նախատեսված խորհրդակցություններից հետո ներկայացվում է ԱԿԽ-ԵՀ նախարարների խորհուրդ կամ նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածում՝ ԱԿԽ-ԵՀ ներկայացուցիչների կոմիտե՝ ԱԿԽ-ԵՀ գործընկերության համաձայնագրի 98-րդ հոդվածի համաձայն: Եթե Խորհրդին կամ Կոմիտեին չի հաջողվում կարգավորել վեճը, ապա կողմերից յուրաքանչյուրը կարող է վեճը արբիտրաժի միջոցով կարգավորելու վերաբերյալ դիմում ներկայացնել՝ 28.2, 28.3 եւ 28.4 հոդվածներին համապատասխան:

28.2. Յուրաքանչյուր կողմ վեճն արբիտրաժի միջոցով կարգավորելու վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, նշանակում է արբիտր: Հակառակ դեպքում կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Մշտական արբիտրաժային դատարանի (Հաագա) գլխավոր քարտուղարին՝ երկրորդ արբիտր նշանակելու խնդրանքով: Երկու արբիտրներն իրենց հերթին 30 օրվա ընթացքում պետք է նշանակեն երրորդ արբիտր: Հակառակ դեպքում ցանկացած կողմ կարող է դիմել Մշտական արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարին՝ երրորդ արբիտր նշանակելու խնդրանքով:

28.3. Կիրառվում է Մշտական արբիտրաժային դատարանի՝ Միջազգային կազմակերպությունների եւ պետությունների մասնակցությամբ արբիտրաժի կամընտիր կանոններով սահմանված ընթացակարգը: Արբիտրների որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ՝ երեք ամսվա ընթացքում:

28.4. Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է ձեռնարկել արբիտրների որոշումը կիրառելու համար անհրաժեշտ միջոցներ: